21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

1 (77)

ԵՐԵՎԱՆ

2018

21-ՐԴ ԴԱՐ
տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **1 (77), 2018**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի
Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)
Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր
Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.
Արամ Սաֆարյան
«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, բ.գ.թ.
Բաբկեն Վարդանյան
«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն,
ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան *(համակարգող)*
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, բ.գ.թ.
Զավեն Եկավյան
Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)
Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տ.գ.դ.
Հրանուշ Հակոբյան
ՀՀ Մտիրուքի նախարար, ի.գ.դ.
Միհրան Դաբաղ
Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Մտիրուքի և Յեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)
Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ
Ջորջ Կոստոպուլոս
Կիբեռանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)
Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.
Սերգեյ Գրինյան
Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)
Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 1 (77), 2018թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ագլյան
Վահրամ Հովյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մանուկյան
Ազգամիջյան հարաբերություններն Անդրկովկասում 4

Վահե Սարգսյան
Հայոց ցեղասպանության խնդրի
արծարծումը հետխորհրդային Վրաստանում ……..... 19

Սուրեն Մարտիկյան
Կազմակերպական զենքի և դրանից
պաշտպանվելու հիմնահարցի շուրջ ……..……....…. 32

Դավիթ Հախվերդյան
Միջազգային ֆինանսական համակարգի
կառուցվածքային անհամամասնությունները …… 48

Համլետ Զաքարյան
Տնտեսական անվտանգության խնդրի
մի քանի տեսանկյուններ .....……...…… 61

Հայկ Գաբրիելյան
Կարմիր ծովում Թուրքիայի ռազմական
ներկայության հաստատման խնդրի շուրջ ....……..… 73

Մարիամ Սաժեշ
Երաժշտական մշակույթի պահպանումը,
գոյատևումը իրանահայ համայնքի ուսումնասիրության
համատեքստում …… 88

Լիանա Անանյան
Չինաստանի Կոմունիստական կուսակցության
վերջին համագումարը և աշխարհակարգի
փոփոխության Սի Ծինփինի պլանը ……..... 100

Աննա Կարապետյան
Շոտլանդիայի անկախացման հանրաքվեն
որպես ինքնորոշման գործընթացի օրինակ ……..... 107

Հուշագիր հեղինակին ……..……...…...…... 115

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Սամվել Մանուկյան*

Բանալի բառեր ՝ ազգամիջյան հարաբերություններ, միջէթնիկ ընկալումներ, կրիտիկական ենթակառուցվածքներ, Բոգարդուսի դասական սանդղակ, սոցիալական տարածություններ։

Խնդիրը

Բոլոր պետություններում, բացի պետականակերտ էթնոսից (ազգից), որպես կանոն, կան նաև էթնիկ փոքրամասնություններ։ Երբեմն դրանց կամ դրանցից մեկի թվաքանակը համադրելի է լինում պետականակերտ էթնոսի թվաքանակի հետ։ Իսկ էթնիկ հարաբերությունները, որպես կանոն, ունեն բացահայտ և անբացահայտ, մեծ և փոքր խնդիրներ, որոնք, համապատասխան սպոնտան կամ դիտավորությամբ առաջացած պայմանների դեպքում, վերածվում են տվյալ պետության համար սպառնալիքի, իսկ երբեմն դառնում են կործանարար։

Ոչ պակաս կարևոր են միջէթնիկ ընկալումները հարևան պետությունների էթնոսների միջև։ Դրանց կոնֆիգուրացիաներն ունակ են, մի կողմից, նպաստելու միջպետական և միջհասարակական հարաբերությունների զարգացմանը, մյուս կողմից, սակայն, կարող են առաջացնել սպառնալիքներ։

Տվյալ երկրում էթնիկ ընկալումներն իրենց նկատմամբ կարևորում են նաև գերտերությունները։ Իրենց նկատմամբ դիրքորոշումների բարելավումը, իսկ մրցակիցների նկատմամբ՝ վատթարացումը հանդիսանում են այդ մրցակցության, իսկ այսօր արդեն՝ հիբրիդային պատերազմների կարևոր բաղադրիչներից մեկը։

Ներկայում ազգային անվտանգության հարցերը դիտարկում են տարբեր հայեցակարգերի, այդ թվում նաև *կրիտիկական ենթակառուցվածքների*

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, սոց.գ.թ.։

հայեցակարգի շրջանակում [1, 2, 3]։ Ներկայացվող հոդվածում Անդրկովկասի երկրների (հասարակությունների) պետականակերտ և էթնիկ փոքրամասնությունների կողմից տարբեր էթնոսների նկատմամբ սոցիալական տարածությունների ընկալումների պրոֆիլները դիտվել են որպես տվյալ պետության և Անդրկովկասի՝ որպես ամբողջության համար կրիտիկական ենթակառուցվածքներ։

Ներկայացված է Անդրկովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում պետականակերտ և այլ էթնոսների ու էթնիկ հանրույթների կողմից ընկալվող սոցիալական տարածությունների ուսումնասիրությունը մի շարք էթնոսների և էթնիկ հանրույթների նկատմամբ, այդ թվում՝ 1. հայերի, 2. ադրբեջանցիների, 3. վրացիների, 4. ռուսների, 5. թուրքերի, 6. քրդերի/եզդիների, 7. հրեաների, 8. իրանցիների, 9. ամերիկացիների և 10. եվրոպացիների[1]։ Վեր են հանվել դրանց փոփոխության դինամիկան և սոցիալական տարածություններով պայմանավորված պոտենցիալ խնդիրները։

Հետազոտական տվյալները

Հետազոտությունում կիրառվել են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) «Կովկասյան բարոմետր» 2007 և 2013թթ. տվյալների շտեմարանները [4]։ Դրանցից 2013թ. հետազոտությունը վերջինն էր, որն իրականացվել էր Անդրկովկասի երեք ճանաչված հանրապետություններում. 2014-ից Ադրբեջանում այդ հետազոտությունը չի իրականացվել։

«Կովկասյան բարոմետր» հետազոտությունների միացյալ շտեմարանները կազմավորված են երեք հանրապետությունների համապետական մասշտաբով՝ ըստ տարածաշրջանների, բնակավայրի տիպի, սեռի և տարիքի ներկայացուցչական ընտրանքներից։ 2013թ. շտեմարանում Հայաստանում ընտրանքի ծավալն էր 1832 հարցված, Ադրբեջանում՝ 1988, Վրաստանում՝ 2133, իսկ 2007թ. շտեմարանում հանրապետական ընտրանքների ծավալներն են. Հայաստանում՝ 2457, Վրաստանում՝ 3306, Ադրբեջանում՝ 2148։

[1] Տրված են «Կովկասյան բարոմետրի» ձևակերպումները։ Ակնհայտ է, որ հետազոտությունում «էթնոս» տերմինը պայմանական է, քանի որ «իրանցիները» սուպերէթնոս են, քրդերն ու եզդիները՝ իրենք իրենց ընկալում են որպես միմյանցից լիովին տարբեր էթնոսներ։ Սակայն սոցիոլոգիական կիրառական հետազոտությունների տեսակետից «Կովկասյան բարոմետրի» ձևակերպումներն ադեկվատ են, քանի որ հետազոտվող հասարակությունների «միջինացված» անդամի համար հետազոտությունում կիրառված ձևակերպումներն են ընկալելի և հասկանալի, այլ ոչ թե հանրույթների այն անունները, որոնք ճշգրիտ համապատասխանում են «էթնոս» տերմինի գիտական սահմանմանը։

Սոցիալական տարածություն

Սոցիալական տարածությունը տվյալ սոցիալական խմբի կողմից մեկ այլ սոցիալական խմբի նկատմամբ ընկալվող հեռավորությունն է (հետագա շարադրանքում կկիրառվի պարզապես «ընկալում»): Սոցիալական տարածությունների չափման նպատակով, համարյա 100 տարի առաջ ամերիկացի գիտնական Բոգարդուսը մշակել է սանդղակ, որը հեղինակի անունով կոչվում է *սոցիալական տարածությունների ընկալման չափման Բոգարդուսի սանդղակ* [5]: Սանդղակը ստացվել է շատ արդյունավետ և կիրառվում է սոցիալական գիտություններում մինչև օրս: Այն հիմնված է տվյալ խմբի կողմից՝ գնահատվող խմբի հետ ընդունելի սոցիալական շփումների հաշվառման վրա:

«Կովկասյան բարոմետր» 2013 և 2017թթ. շտեմարաններում առկա է Բոգարդուսի դասական սանդղակի կառուցման համար կիրառվող յոթ հարցերից երկուսը: Դրանք են. «Այժմ ես կթվարկեմ որոշ ազգություններ: Ասացեք, խնդրեմ, հավանություն տալի՞ս եք, երբ Ձեր ազգակիցները բիզնես են անում [էթնոսի անուն] հետ», և՝ «Հավանություն տալի՞ս եք, երբ Ձեր ազգի կանայք ամուսնանում են [էթնոսի անուն] հետ»:

Կազմավորվել է սոցիալական տարածությունների ընկալման նորմավորված սանդղակ, որի արժեքները փոխվում են 0-ից 1 միջակայքում, որտեղ 0 արժեքը նշանակում է ամենափոքր սոցիալական տարածությունը (այսինքն՝ հարցվողի համար ընդունելի են և՛ բիզնեսը, և՛ ամուսնությունը տվյալ խմբի անդամի հետ), իսկ 1 արժեքը՝ ամենամեծ սոցիալական տարածությունը (ընդունելի չեն ո՛չ բիզնեսը, ո՛չ էլ ամուսնությունը տվյալ խմբի ներկայացուցչի հետ):

Սոցիալական տարածությունների մեկնաբանման համար սոցիալական տարածությունների սանդղակը պայմանականորեն բաժանվել է հինգ տիրույթի.

- Շատ փոքր սոցիալական տարածությունների տիրույթ (0.0; 0.2), սոցիալական տարածություններն արտապատկերող Աղյուսակ 2-ում և Աղյուսակ 3-ի վերևի աջ ու ձախ ենթաաղյուսակներում այդ տիրույթի տվյալներ պարունակող վանդակները տրված են կանաչ գույնով:
- Փոքր սոցիալական տարածությունների տիրույթ (0.2; 0.4), աղյուսակում՝ բաց կանաչ գույն:
- Միջին սոցիալական տարածությունների տիրույթ (0.4; 0.6), աղյուսակում՝ դեղին գույն:
- Մեծ սոցիալական տարածությունների տիրույթ (0.6; 0.8), աղյուսակում՝ դեղնա-շագանակագույն:

- Շատ մեծ սոցիալական տարածությունների տիրույթ (0.8; 1.0), աղյուսակում՝ կարմիր:

Շարադրանքում կկիրառվեն՝ [շատ մոտ / մոտ / միջին / հեռու /շատ հեռու] տիրույթ բառակապակցությունները:

Անդրկովկասյան պետությունների էթնիկ կազմը

Աղյուսակ 1-ում տրված է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային կազմն ըստ 2013թ. հետազոտության արդյունքների: Հարկ է նշել, որ տվյալներն ընտրանքային են և դրանք տարբեր պատճառներով կարող են չհամընկնել պաշտոնական տվյալների կամ փաստացի իրավիճակի հետ:

Աղյուսակ 1

Էթնոս	Հայաստան	Ադրբեջան	Վրաստան
Հայ	**98.82%**	0.05%	**7.40%**
Ադրբեջանցի	0.06%	**94.45%**	**6.40%**
Վրացի	0.00%	0.02%	**84.70%**
Այլ կովկասյան էթնոս	0.19%	3.70%	0.42%
Ռուս	0.38%	0.12%	0.35%
Եզդի կամ քուրդ	0.44%	0.13%	0.23%
Այլ էթնոս	0.09%	1.52%	0.50%
Ընդամենը	100.00%	100.00%	100.00%

Տվյալներից երևում է, որ վիճակագրորեն հավաստի տվյալներ կարելի է ստանալ Հայաստանում՝ հայերի, Ադրբեջանում՝ ադրբեջանցիների և Վրաստանում՝ վրացիների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, հնարավոր է *կողմնորոշիչ* տեղեկություններ ստանալ Հայաստանում և Ադրբեջանում այլ էթնոսների միավորված խմբերի վերաբերյալ: Այսպիսով, ներկայացվող հետազոտությունում դիտարկված են վերը նշված էթնոսների նկատմամբ ընկալվող սոցիալական տարածությունները հետևյալ էթնիկ հանրույթներում. 1. Հայաստանի հայեր, 2. Ադրբեջանի ադրբեջանցիներ, 3. Ադրբեջանի էթնիկ փոքրամասնություններն՝ ընդհանրացված, 4. Վրաստանի վրացիներ, 5. Վրաստանի հայեր, 6. Վրաստանի ադրբեջանցիներ, 7. Վրաստանի մնացած էթնիկ փոքրամասնություններն՝ ընդհանրացված:

Սոցիալական տարածությունների ընկալումներն անդրկովկասյան էթնիկ հանրույթներում

Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի գնահատվող յոթ էթնիկ հանրույթներում ընկալվող սոցիալական տարածությունները դիտարկվող 10 էթնոսների նկատմամբ տրված են Աղյուսակ 2-ում և Գծապատկեր 1-ում: Աղյուսակում տրված են նաև Վրաստանում՝ աբխազների, օսերի, Վրաստանի հայերի և Վրաստանի ադրբեջանցիների, ինչպես նաև Հայաստանում՝ մոլոկանների նկատմամբ ընկալվող տարածությունները: Գծապատկերի տվյալներով կարելի է իրականացնել 2500-ից ավելի զույգ համեմատություններ: Այդ պատճառով կդիտարկենք ներկայացված տվյալների այն առանձնահատկությունները, որոնք էական են իրավիճակի ընդհանուր ադեկվատ ընկալման, ինչպես նաև առկա ու պոտենցիալ միջէթնիկ խնդիրների տեսակետից: Չի բացառվում, որ ուշադիր ընթերցողը գտնի ոչ պակաս կարևոր կամ հետաքրքիր պատկերներ, որոնք հոդվածում դիտարկված չեն:

Հայեր. Հայաստանի հայերի ընկալումներում ամենամոտ էթնոսն են ռուսները (գտնվում են մոտ տարածությունների տիրույթում), իսկ ամենահեռուն՝ ադրբեջանցիներն ու թուրքերը (շատ մեծ տարածությունների տիրույթ): Ռուսներից հետո ամենամոտն են եվրոպացիներն ու ամերիկա-

Աղյուսակ 2

Միջէթնիկ սոցիալական տարածությունների ընկալումները Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում

Սոցիալական տարածություններ	ՀՀ		ԱՀ		ՎՀ			
	Հայեր	Այլ	Ադր.	Այլ	Վրաց.	Հայ	Ադր.	Այլ
Հայեր	0.045	0.262	0.997	0.961	0.485	0.048	0.856	0.318
Վրացիներ	0.517	0.548	0.586	0.515	0.020	0.229	0.379	0.057
Ադրբեջանցիներ	0.872	0.786	0.010	0.034	0.515	0.648	0.038	0.364
Ռուսներ	0.324	0.357	0.557	0.471	0.380	0.342	0.527	0.284
Եվրոպացիներ	0.431	0.429	0.556	0.515	0.373	0.426	0.648	0.250
Ամերիկացիներ	0.446	0.452	0.592	0.539	0.394	0.406	0.659	0.307
Հրեաներ	0.654	0.595	0.681	0.578	0.496	0.577	0.795	0.386
Իրանցիներ	0.690	0.643	0.558	0.476	0.561	0.623	0.549	0.443
Ֆրդեր, եզդիներ	0.659	0.405	0.737	0.650	0.572	0.619	0.807	0.420
Թուրքեր	0.824	0.738	0.302	0.228	0.531	0.639	0.318	0.432
Աբխազներ	-	-	-	-	0.446	0.558	0.708	0.364
Օսեր	-	-	-	-	0.447	0.577	0.735	0.341
Վրաստանի հայեր	-	-	-	-	0.438	0.077	0.780	0.273
Վրաստանի ադրբեջանցիներ	-	-	-	-	0.471	0.584	0.027	0.364
Մոլոկաններ	0.628	0.571	-	-	-	-	-	-

ցիները, իսկ նրանցից մի փոքր ավելի հեռու՝ վրացիները (երեքն էլ՝ միջին տարածությունների տիրույթում)։ Մեծ տարածությունների տիրույթում են հրեաները, քրդերն ու իրանցիները։

Գծապատկեր 1



Հայաստանի և Վրաստանի հայերի ընկալումների պրոֆիլները միմյանց նման են, սակայն Վրաստանի հայերի կողմից ոչ քրիստոնյա էթնոսների նկատմամբ ընկալումներն ավելի մեղմ են: Մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանց համար վրացիներին ամենամոտ էթնոսն են՝ նրանք ընկալվում են մոտ տարածությունների տիրույթում, ընդ որում՝ ավելի մոտ, քան ռուսները:

Ադրբեջանցիներ. Ադրբեջանի ադրբեջանցիների ամենամոտ էթնոսը թուրքերն են (գտնվում են մոտ տարածությունների տիրույթում), իսկ ամենահեռուն՝ հայերը (գտնվում են սանդղակի համարյա վերին սահմանին): Միջին տիրույթի վերին հատվածում են ընկալվում և շատ մոտ են միմյանց ռուսները, եվրոպացիները, ամերիկացիները, իրանցիները և վրացիները: Մեծ տարածություններում են ընկալվում քրդերն ու հրեաները: Ընդ որում, քրդերը՝ հայերից հետո, ընկալվում են որպես ամենահեռու էթնոս:

Վրաստանի ադրբեջանցիների ընկալումների պրոֆիլը նման է Ադրբեջանի ադրբեջանցիների պրոֆիլին: Սակայն Վրաստանի ադրբեջանցիների ընկալումներում թուրքերից հետո ամենամոտը վրացիներն են (գտնվում են մոտ տարածությունների տիրույթում): Մյուս կողմից, նրանք հայերի նկատմամբ մի փոքր ավելի մեղմ են, իսկ քրդերի ու հրեաների նկատմամբ՝ ավելի խիստ:

Վրաստանի ադրբեջանցիների ընկալումներում, Ադրբեջանի ադրբեջանցիների համեմատ, ավելի հեռու են նաև եվրոպացիներն ու ամերիկացիները (գտնվում են մեծ տարածությունների տիրույթում):

Հարկ է նշել, որ, նրանց համար հայերն ու քրդերն ընկալվում են համարյա նույնքան հեռու, որքան Հայաստանի հայերի համար՝ թուրքերը:

Վրացիների ընկալումներում չկան մեծ և շատ մեծ տարածությունների տիրույթում գտնվող էթնոսներ: Մոտ տարածությունների տիրույթի վերին հատվածում կոմպակտ դիրքավորված են եվրոպացիները, ռուսները և ամերիկացիները, իսկ միջին տարածությունների տիրույթում, ըստ տարածության աճման, միմյանց հաջորդում են հայերը, հրեաները, ադրբեջանցիները, թուրքերը, իրանցիները և քրդերը:

Ինքնաօտարում անվանենք այն իրավիճակը, երբ տվյալ էթնոսի կողմից սոցիալական տարածության ընկալումն իր իսկ նկատմամբ մեծ է 0-ից: Դա նշանակում է, որ տվյալ էթնոսի կազմում կան անձինք, ովքեր չեն ցանկանում, օրինակ, բիզնես հարաբերություններ ունենալ իրենց իսկ էթնոսի ներկայացուցչի հետ, կամ՝ չեն ցանկանում, որպեսզի իրենց մոտ անձն ամուսնանա իր իսկ էթնոսի ներկայացուցչի հետ: Որքան ավելի մեծ է այդ տարածությունը, այնքան ավելի բարձր է ինքնաօտարման աստիճանը:

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի հայերի շրջանում ինքնաօտարման աստիճանը, Ադրբեջանի ադրբեջանցիների և Վրաստանի վրացիների համեմատ, ամենաբարձրն է: Այս փաստը հաղորդակցում է Հայաստանում՝ Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ, արտագաղթի ավելի բարձր դիրքորոշումների հետ:

Սոցիալական տարածությունները ռուսների, եվրոպացիների և ամերիկացիների նկատմամբ

Անդրկովկասի երեք երկրները գտնվում են ռուսական և արևմտյան քաղաքակրթական տարածքների ազդեցության գոտիներում, այդ պատճառով սոցիալական տարածությունների պատկերները ռուսների և արևմտյան էթնիկ հանրույթների՝ ամերիկացիների և եվրոպացիների նկատմամբ կարևոր են մրցակցող տարածաշրջանների ռազմավարությունների հաջողության տեսակետից:

Բոլոր երկրների բոլոր էթնիկ հանրույթներում ռուսների նկատմամբ տարածություններն ավելի փոքր են, քան «արևմտյան» էթնիկ հանրույթների նկատմամբ (Գծապատկեր 2, Բ): Ռուսներին ամենից մոտ են ընկալում Հայաստանի (0.324) և Վրաստանի հայերը (0.342): Նրանց նկատմամբ տարածությունները գտնվում են փոքր տարածությունների տիրույթում: Վրաստանի վրացիների շրջանում ռուսների նկատմամբ տարածությունները (0.380) գտնվում են փոքր և միջին տարածությունների սահմանին, իսկ Ադրբեջանի ադրբեջանցիների համար՝ համարյա միջին և բարձր տարածությունների սահմանին (0.557):

Ամերիկացիներն ու եվրոպացիները Անդրկովկասի էթնոսների ընկալումներում նույնանում են և ավելի հեռու են, քան ռուսները, բացառությամբ Վրաստանի վրացիների, որոնց դեպքում ռուսները, ամերիկացիները և եվրոպացիները գտնվում են գործնականում նույն հեռավորության վրա:

Կրիտիկական մակարդակին մոտ են եվրոպացիների (0.648) ու ամերիկացիների (0.659) ընկալումները Վրաստանի ադրբեջանցիների շրջանում՝ դրանք գտնվում են մեծ տարածությունների տիրույթում:

Տարածություններն իսլամական էթնոսների նկատմամբ

Բացի հայ-ադրբեջանական փաստացի լրջագույն խնդրից, պոտենցիալ խնդիրների հավանականությունն ամենաբարձրն է Ադրբեջանի և Վրաստանի ադրբեջանցիների և քրդերի միջև:

Գծապատկեր 2



Հայաստանի հայերը մեծ տարածության վրա են ընկալում իրանցիներին և քրդերին: Իրանցիների նկատմամբ մեծ տարածությունը խնդրահա-

րույց է, քանի որ Իրան-Հայաստան հարաբերություններն ունեն կարևոր ռազմավարական նշանակություն: Առանց վիզաների փոխայցելությունների պայմաններում ենթադրվում է իրանցիների հետ շփումների ինտենսիվացում, այդ թվում նաև փոքր բիզնեսի ոլորտում: Իսկ իրանցիների հետ համատեղ բիզնեսն ընդունելի է Հայաստանի հայերի 51.8%-ի համար:

Հարկ է նշել, որ թուրքերն ադրբեջանցիների ընկալումներում նույնքան հեռու են, որքան ռուսները՝ հայերի ընկալումներում: Հետևաբար, թուրքերն ադրբեջանցիների համար «այլ էթնոս են», և դրանց նույնացումը չունի բավարար հիմք:

Տարածությունները հրեաների նկատմամբ

Գծապատկեր 2-Դ-ում տրված են տարածությունների ընկալումները հրեաների նկատմամբ: Որպես կոնտեքստ ընտրված են ընկալումներն իրանցիների և եվրոպացիների նկատմամբ: Անդրկովկասում հրեաներն ընկալվում են մոտավորապես իրանցիների հեռավորության վրա, սակայն մի փոքր ավելի մոտ:

Հայաստանի հայերի (0.654) և Ադրբեջանի ադրբեջանցիների (0.681) ընկալումներում հրեաները մեծ տարածությունների տիրույթում են, իսկ վրացիների դեպքում՝ (0.496) միջին տարածությունների տիրույթում:

Պոտենցիալ պրոբլեմներ համեմատաբար ավելի մեծ հավանականությամբ առկա են Վրաստանի ադրբեջանցիների շրջանում՝ նրանք հրեաներին ընկալում են մեծ և շատ մեծ տարածությունների տիրույթների սահմանի վրա (0.795):

Սոցիալական տարածությունների դինամիկան Անդրկովկասի էթնիկ հանրույթներում

Աղյուսակ 3-ում տրված է Անդրկովկասում միջէթնիկ հարաբերությունների դինամիկայի պատկերը: Աղյուսակի վերևի ձախ ենթաաղյուսակում տրված են Հայաստանի հայերի, Ադրբեջանի ադրբեջանցիների, Վրաստանի վրացիների, հայերի և ադրբեջանցիների կողմից ընկալվող սոցիալական տարածությունները՝ աղյուսակի տողերում նշված էթնոսների նկատմամբ՝ 2007թ., վերևի աջ աղյուսակում՝ 2013թ., իսկ ներքևի ձախ աղյուսակում՝ 2013թ., 2007թ. համեմատ, փոփոխությունը: Տարածությունների փոփոխության աղյուսակի վանդակները գունավորված են հետևյալ կանոնով՝ կանաչ գույնը նշանակում է, որ փոփոխությունը «աննշան» է՝ չի գերազանցում 0.05-ը (կամ՝ 5%-այինկետը), բաց դեղին՝ փոփոխությունը «փոքր» է՝ գտնվում է 0.05-0.10 միջակայքում, մուգ դեղին՝ փոփոխությունը «միջին» է՝ գտնվում է 0.10-0.15

միջակայքում, կարմիր՝ փոփոխությունը «մեծ» է՝ գերազանցում է 0.15-ը կամ 15%-այինկետը:

Աղյուսակ 3

	2007					2013				
	ՀՀ հայ	ԱՀ ադրբ.	ՎՀ վրացի	ՎՀ հայ	ՎՀ ադրբ.	ՀՀ հայ	ԱՀ ադրբ.	ՎՀ վրացի	ՎՀ հայ	ՎՀ ադրբ.
Հայ	0.026	0.992	0.477	0.057	0.825	0.045	0.997	0.485	0.048	0.850
Ռուս	0.249	0.463	0.258	0.233	0.477	0.324	0.557	0.380	0.342	0.527
Ամերիկ.	0.342	0.530	0.354	0.348	0.615	0.446	0.592	0.394	0.406	0.659
Վրացի	0.528	0.518	0.013	0.127	0.233	0.517	0.586	0.020	0.229	0.379
Հրեա	0.539	0.597	0.450	0.489	0.781	0.654	0.681	0.496	0.577	0.795
Իրանցի	0.640	0.445	0.545	0.525	0.474	0.690	0.558	0.561	0.623	0.549
Թուրք	0.763	0.206	0.531	0.550	0.243	0.824	0.302	0.531	0.639	0.318
Ադրբեջ	0.804	0.011	0.496	0.487	0.069	0.872	0.010	0.515	0.648	0.038
Աբխազ	-	-	0.357	0.454	0.530	-	-	0.446	0.558	0.708
Օս	-	-	0.359	0.472	0.539	-	-	0.447	0.577	0.735

	Փոփոխությունը՝ "2013" - "2007"				
Հայ	0.019	0.005	0.008	-0.009	0.031
Ռուս	0.075	0.094	0.122	0.109	0.050
Ամերիկ.	0.104	0.062	0.040	0.058	0.044
Վրացի	-0.011	0.068	0.007	0.102	0.146
Հրեա	0.115	0.084	0.046	0.088	0.014
Իրանցի	0.041	0.113	0.016	0.098	0.075
Թուրք	0.061	0.096	0.000	0.089	0.075
Ադրբեջ	0.068	-0.001	0.019	0.161	-0.031
Աբխազ			0.089	0.104	0.178
Օս			0.088	0.105	0.196

Աղյուսակ 3-ի ներքևի ենթաաղյուսակից երևում է, որ.

- Անդրկովկասում 2007-2013թթ. միջէթնիկ տարաձայնությունների ընկալումներն աճել են (բացառությամբ երեք չնչին նվազումների):
- Ամենափոքր փոփոխությունները տեղի են ունեցել Ադրբեջանում: Այստեղ ամենամեծ աճը տեղի է ունեցել իրանցիների նկատմամբ՝ սոցիալական տարաձայնության ընկալումն աճել է 11.3%-ով, թուրքերի նկատմամբ՝ 9.6%-ով, ռուսների նկատմամբ՝ 9.4%-ով, հրեաների նկատմամբ՝ 8.4%-ով:
- Հայաստանի հայերի շրջանում ամենամեծ աճը գրանցվել է հրեաների (11.5%) և ամերիկացիների (10.4%) նկատմամբ: Աճել են նաև տարաձայնությունները ռուսների (7.5%), ադրբեջանցիների (6.8%) և թուրքերի (6.1%) նկատմամբ:
- Վրաստանում՝ վրացիների շրջանում «միջին» աճ է տեղի ունեցել ռուսների նկատմամբ (12.2%) և «փոքր» աճ աբխազների (8.9%) և օսերի (8.8%) նկատմամբ:

- Վրաստանում էական փոփոխություններ են տեղի ունեցել հայերի շրջանում՝ մեծ աճ է գրանցվել ադրբեջանցիների նկատմամբ՝ 16.1%, «միջին» աճ՝ ռուսների, վրացիների, աբխազների և օսերի նկատմամբ (10.2-10.9%):
- Վրաստանի ադրբեջանցիների շրջանում «մեծ» աճ է գրանցվել օսերի (19.6%), աբխազների (17.8%) նկատմամբ և «միջին աճ» վրացիների նկատմամբ (14.6%):

Եզրակացություններ՝ կրիտիկական կետերն Անդրկովկասի միջէթնիկ հարաբերություններում

- Անդրկովկասի բոլոր երկրներում 2007-2013թթ. ընթացքում միջէթնիկ տարածությունների ընկալումներն աճել են: Հետևաբար՝ աճել է այդ պետություններում էթնիկ խնդիրների օգտագործմամբ ներպետական, միջպետական և աշխարհաքաղաքական կողմնորոշումների հետ կապված խնդիրներում կոնֆլիկտների սպոնտան առաջացման կամ հրահրման պոտենցիալը:
- Միջէթնիկ ընկալումներում սոցիալական տարածությունների աճի հիմնական պատճառներն են. Վրաստանում՝ 2008թ. օգոստոսին վրաց-օսական՝ վրաց-ռուսականի վերաճած պատերազմը, Ադրբեջանում՝ 1988-ից ընթացող տոտալ հակահայկական քարոզչության և սահմանային ռազմական փոքր, բայց բազմաթիվ միջադեպերը, Հայաստանում՝ հակազդեցությունն ադրբեջանական գործողություններին: Այլ կարևոր գործոններն են՝ գլոբալ ինֆորմացիոն դաշտը և արևմուտքի երկրների և միջազգային կառույցների քաղաքականությունն Անդրկովկասի երկրներում հասարակական խմբերի, հատկապես երիտասարդության նկատմամբ:
- Սոցիալական տարածությունների ընկալման աճն Անդրկովկասի երկրներում ունի հետևյալ պատկերը (թվարկումը տրված է ըստ «տարածության աճ» ցուցանիշի նվազման).
  - ◊ Հայաստանում աճել է սոցիալական տարածությունների ընկալումը՝ հրեաների, ամերիկացիների, ռուսների, ադրբեջանցիների և թուրքերի նկատմամբ:
  - ◊ Ադրբեջանում՝ իրանցիների, ռուսների, թուրքերի, հրեաների, վրացիների և ամերիկացիների նկատմամբ:
  - ◊ Վրաստանի վրացիների շրջանում՝ ռուսների, աբխազների և օսերի նկատմամբ, Վրաստանի հայերի շրջանում՝ ադրբեջանցիների, վրացիների, ռուսների, աբխազների և օսերի նկատմամբ: Սակայն ամե-

նանշանակալի աճը տեղի է ունեցել Վրաստանի ադրբեջանցիների շրջանում՝ աբխազների, օսերի ու վրացիների նկատմամբ, ինչպես նաև իրանցիների ու թուրքերի նկատմամբ:

◊ *Ռուսների* նկատմամբ տարածության ընկալման ամենամեծ աճը տեղի է ունեցել Վրաստանում, *ամերիկացիների* նկատմամբ՝ Հայաստանում, *իրանցիների* նկատմամբ՝ Ադրբեջանում:

Այդ փոփոխությունների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

- *Հայ-ադրբեջանական* հարաբերությունները կրիտիկական են ոչ միայն Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում, այլև Վրաստանի ներքին հարցերում: Հայերի և ադրբեջանցիների համատեղ բնակեցումը եղել և մնում է գործնականում անհնար, ինչը պարտադիր է հաշվի առնել դարաբաղյան հակամարտության, ինչպես և Վրաստանում ներքին միջէթնիկ հավասարակշռության պահպանման հարցերում: Այդ համատեղումը հավասարազոր է նոր ազգամիջյան պատերազմի վերսկսմանը: Վրաստանում հայ-ադրբեջանական կոնֆլիկտային պոտենցիալն ավելի բարձր է Վրաստանի ադրբեջանցիների շրջանում:
- *Վրաստանում* միջէթնիկ կոնֆլիկտների պոտենցիալն առավելապես էթնիկ փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների, հայերի, քրդերի և հրեաների հարաբերությունների տիրույթում է: Ընդ որում, էթնիկ կոնֆլիկտների պոտենցիալի հիմնական կրողն ադրբեջանցիներն են:
- *Վրաստանում ռուսներին, ամերիկացիներին, եվրոպացիներին, օսերին և աբխազներին* ընկալում են գործնականում միևնույն միջին տարածության վրա, հետևաբար, առկա է հասարակական նշանակալի պոտենցիալ՝ նորմալացնելու համար ինչպես վրաց-ռուսական, այնպես էլ վրաց-օսական և վրաց-աբխազական միջպետական հարաբերությունները: Այդ խնդրի լուծումն աշխարհաքաղաքական բևեռների ուժերի բալանսի և Վրաստանի քաղաքական իշխանության կամքի դրսևորման ոլորտում է:
- *Վրաստանում* կրիտիկական մակարդակին մոտ են եվրոպացիների ու ամերիկացիների ընկալումներն *ադրբեջանցիների* շրջանում: ԵՄ-ի հետ Վրաստանի ասոցացման խորացումն ունակ է բարդություններ առաջացնել Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններում:
- Անդրկովկասյան երկրներում կրիտիկական մակարդակին մոտ են *քրդերի* նկատմամբ ընկալումները, իսկ *Ադրբեջանի ադրբեջանցիների* շրջանում այն արդեն կրիտիկական է: Դրա հետևանքով քրդական հարցի արդի սրումը Միջին Արևելքում ունակ է մակածվելու Անդրկովկաս:

- *Հայաստանում իրանցիների* ընկալումները մեծ տարածության վրա են, ինչը չի համապատասխանում Հայաստանի և Իրանի ռազմավարական հարաբերությունների մակարդակին: Անհրաժեշտ է մշակել և իրականացնել այդ պոտենցիալ սպառնալիքը չեզոքացնելու մոտեցում և ռազմավարություն:
- Հրեաների հետ հարաբերությունները կարող են պրոբլեմատիկ դառնալ և՛ Հայաստանում, և՛ Ադրբեջանում և՛, հատկապես, *Վրաստանի ադրբեջանցիների* շրջանում:
- *Թուրքերը* ադրբեջանցիների համար *«այլ էթնոս»* են: Հետևաբար, Ադրբեջանի նկատմամբ քաղաքականության մշակման հարցում անհրաժեշտ է հաշվի առնել այդ փաստը:

Հոկտեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *John Moteff* and *Paul Parfomak,* Critical Infrastructure and Key Assets: Definition and Identification. CRS Report for Congress. October 1, 2004. Resources, Science, and Industry Division.
2. *Гриняев Сергей,* О взгляде на проблему безопасности критической инфраструктуры в государстве Израиль. Центр стратегических оценок и прогнозов, http://csef.ru/ru/politica-i-geopolitica/265/o-vzglyade-na-problemu-bezopasnosti-kriticheskoj-infrastruktury-v-gosudarstve-izrail-3229, վերջին այցը՝ 26 սեպտեմբերի, 2017թ.:
3. *John Moteff, Claudia Copeland*, and *John Fischer,* Critical Infrastructures: What Makes an Infrastructure Critical? Report for Congress. Updated January 29, 2003. Resources, Science, and Industry Division.
4. http://www.crrc.am/caucasusbarometer/documentation?lang=hy
5. *Bogardus, Emory S.,* Social Distance in the City. Proceedings and Publications of the American Sociological Society. 20, 1926, 40–46.

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Սամվել Մանուկյան

Ամփոփագիր

Ներկայում ազգային անվտանգության հարցերը դիտարկում են տարբեր հայեցակարգերի, այդ թվում նաև կրիտիկական ենթակառուցվածքների հայեցակարգի շրջանակում: Հոդվածում Անդրկովկասի երկրների պետականակերտ և էթնիկ փոքրամասնությունների կողմից տարբեր էթնոսների նկատ-

մամբ սոցիալական տարածությունների ընկալումների պրոֆիլները դիտվել են որպես տվյալ պետության և Անդրկովկասի՝ որպես ամբողջության համար կրիտիկական ենթակառուցվածքներ: Ներկայացված է Անդրկովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում պետականակերտ և այլ էթնոսների ու էթնիկ հանրույթների կողմից ընկալվող սոցիալական տարածությունների ուսումնասիրությունը մի շարք էթնոսների և էթնիկ հանրույթների նկատմամբ:

МЕЖНАЦИОНАЛЬНЫЕ ОТНОШЕНИЯ В ЗАКАВКАЗЬЕ

Самвел Манукян

Резюме

В настоящее время вопросы национальной безопасности рассматриваются в разных аспектах, в том числе в рамках концепции критических инфраструктур. В статье профили восприятия государствообразующими нациями и этническими меньшинствами разных стран Закавказья социальных пространств относительно разных этносов рассматривались в качестве критических инфраструктур для данного государства и Закавказья в целом.

Представлено исследование социальных пространств, воспринимаемых государствообразующими нациями и другими этносами и этническими сообществами в трех странах Закавказья – Армении, Грузии и Азербайджане – относительно ряда этносов и этнических сообществ.

INTERETHNIC RELATIONS IN TRANSCAUCASIA

Samvel Manukyan

Resume

National security matters are presently considered within the framework of various concepts, including that of the critical infrastructure. The article views profiles of social space perceptions of different ethnic groups by the state-formic ethnicities and ethnic minorities as critical infrastructures for a given country and Transcaucasia as a whole. The social space perceptions of state-forming and other ethnicities and ethnic groups in the three Transcaucasian countries are presented with regards to some other ethnicities.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ (մաս 1)

Վահե Սարգսյան*

Բանալի բառեր ՝ Վրաստան, Հայոց ցեղասպանության ճանաչում, Ջավախք, վրացալեզու մամուլ, հասարակական-քաղաքական միտք:

Վրաստանն աշխարհի այն պետություններից է, որը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Չնայած երկու նորանկախ պետությունների՝ ՀՀ-ի և Վրաստանի հարևանական ջերմ կապերին և երկրների միջև խոր հակասությունների բացակայության մասին մշտական հայտարարություններին, այդուհանդերձ, Վրաստանը, տուրք տալով հարևաններ Թուրքիայի և Ադրբեջանի հետ դեռ 1990-ական թթ. սկզբնավորված բազմոլորտ հարաբերությունների խորացմանը, ձգտում է Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում մնալ չեզոք դիրքերում: Բացի նշյալ հարաբերություններից, Վրաստանի՝ նշյալ խնդրում ցուցաբերած պահվածքի վրա ազդում է նաև երկրի հարավում 1990-ական թթ. կեսերին ձևավորված Քվեմո Քարթլի նահանգում բնակվող ադրբեջանական հոծ համայնքի առկայությունը, որը, որպես կանոն, մեծապես կրում է ինչպես ադրբեջանական, այնպես էլ թուրքական քարոզչության ազդեցությունները:

Վրաստանում Հայոց ցեղասպանության խնդրի արծարծման առաջին պայմանական փուլը

Հայոց ցեղասպանության հարցի շոշափումը Վրաստանում կարելի է պայմանականորեն բաժանել որոշակի փուլերի: Առաջին փուլը երկրի անկախության առաջին տասնամյակի տարիներն էին, Վրաստանի պատմության

* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պ.գ.թ.:

ամենաքառտիկ շրջանը, երբ երկիրը տասնամյակի առաջին կեսում թաթախված էր մի կողմից՝ վրաց-օսական, իսկ դրա ավարտից հետո՝ վրաց-աբխազական ազգամիջյան արյունալի պատերազմների[1], մյուս կողմից՝ երկրի առաջին նախագահ Զ.Գամսախուրդիայի կողմնակիցների և կառավարական ուժերի միջև երկարատև ու հյուծիչ քաղաքացիական կռիվների մեջ[2]: Առաջին տասնամյակի երկրորդ կեսին ևս, չնայած ազգամիջյան և քաղաքացիական լայնածավալ պատերազմների դադարելուն, Վրաստանում իշխում էր անօրինականությունը, ծաղկում էր կաշառակերությունը, երկրում վխտում էին քրեական տարրերը, շարունակվում էր տնտեսական և էներգետիկ ճգնաժամը: Այսպիսի իրավիճակ էր Վրաստանում անկախության առաջին տասնամյակում: Հայոց ցեղասպանության հարցի շոշափման տեսանկյունից նշյալ տասնամյակն առաջին փուլն էր, որը կարելի է անվանել *լռության շրջան:* Նշյալ ժամանակահատվածում Հայոց ցեղասպանության թեման չշոշափվեց ինչպես երկրի խորհրդարանում, այնպես էլ տարածաշրջանային-նահանգային կամ շրջանային մակարդակներում և պետական ու հասարակական այլևայլ օղակներում: Այս փուլում երկրում չբացվեց անգամ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող ոչ մի հուշարձան: Փաստենք, որ անգամ խորհրդային տարիներին Վրացական ԽՍՀ հայաբնակ վայրերում՝ Ախալքալաքի և Բոգդանովկայի (1991թ.՝ Նինոծմինդա) շրջաններում բացվել է այդպիսի երեք հուշարձան: Դրանցից երկուսը՝ Ախալքալաքի շրջանում (ք. Ախալքալաք, խաչքար, 1989թ., հեղ.՝ Գ.Մարտիրոսյան, գ. Բարալեթ, խաչքար-հուշարձան, 1988թ., հեղ.՝ Գ.Մարտիրոսյան), մեկը՝ Բոգդանովկայում (ք. Բոգդանովկա (Նինոծմինդա), խաչքար, 1975թ., հեղ.՝ Կ.Ղարսլյան): Հիշատակի հուշարձանների սույն շարքը համալրվեց 1991թ. ամռանը (Վարդավառի տոնակատարության օրը) Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղում բացված ևս մեկ հուշակոթողով (հեղ.՝ Հ.Մազմանյան)[3]:

Այս ամենով հանդերձ, Վրաստանի հայության շրջանում և հատկապես հայաբնակ Ջավախքում այս ընթացքում տեղի էին ունենում Հայոց ցեղասպանությանը նվիրված հիշատակի բազմաթիվ միջոցառումներ: Այդպիսիք նախաձեռնվում էին ինչպես մտավորականության և մանկավարժների, այն-

[1] Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., составление и комментарии М.А. Волхонский, В.А. Захаров, Н.Ю. Силаев, М., 2008.

[2] Грузия: проблемы и перспективы развития, под редакцией Е.М. Кожокина, М., 2002.

[3] Ալաստան գյուղում գտնվող նշյալ հուշակոթողի մասին տեղեկությունը մեզ է փոխանցել արմատներով ալաստանցի, «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար Արեստակես Սիմավորյանը: Հավելենք նաև, որ հուշակոթողը չի հիշատակվում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներն ամբողջացնող «Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ (Ե., 2010)» պատկերագրքում:

պես էլ նորաստեղծ հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից: Այսպես, Ջավախքում հիմնադրված «Ջավախք» ժողովրդական շարժում» կազմակերպության մշակույթի պահպանման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանձնաժողովի կազմած 1990թ. աշխատանքային պլանից տեղեկանում ենք, որ կազմակերպությունը ծրագրել էր *«…շրջանի մշակույթի տանը (մարտի 23-ին) անցկացնել զորավար Անդրանիկի ծննդյան 125-ամյակին նվիրված երեկո: Ախալքալաքի եկեղեցու հրապարակում անցկացնել սգո միտինգ՝ նվիրված հայ ժողովրդի Մեծ եղեռնի 75-ամյակին, բարեկարգել եկեղեցու բակը, պատվանդանին դնել հայկական խաչքարը»*[1]:

Վրաստանում Հայոց ցեղասպանության խնդրի արծարծման երկրորդ պայմանական փուլը

Վրաստանի անկախության նորօրյա շրջանի պատմության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի արծարծման երկրորդ պայմանական փուլն սկսվում է 2000թ., երբ Ջավախքում մեկը մյուսի հետևից սկսեցին տեղադրվել հիշատակի կոթողներ, տեղի ունեցան բուռն քննարկումներ՝ ինչպես հասարակական-քաղաքական շրջանակներում, այնպես էլ երկրի խորհրդարանում: Անդրադառնալով հիշատակի հուշարձաններին՝ փաստենք, որ 21-րդ դարի առաջին տասնամյակում լրջորեն խախտվեց նախորդ տասնամյակի լռությունը, և այդ փուլում ջավախահայության ջանքերով երկրամասի տարբեր վայրերում տեղադրվեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող կոթողներ: Այսպես՝ գ. Տուրցխ, խաչքար-հուշարձան, 2000թ., հեղ.՝ Լ.Գրիգորյան, գ. Տուրցխ, խաչքար, 2002թ., հեղ.՝ Հ.Ավետիսյան, ք. Ախալցխա, խաչքար, 2003թ., հեղ.՝ Ա.Աբրահամյան, գ. Փոքր Արագյալ, խաչքար, 2009թ., հեղ.՝ Ս.Շիրինյան, ք. Ախալքալաք, խաչքար, 2010թ., հեղ.՝ Դ.Հարությունյան[2]: Հավելենք, որ Վրաստանի իշխանությունները խոչընդոտեցին Ախալցխա քաղաքի Մարդա թաղամասի բարձրադիր վայրում խաչքարի տեղադրման գործընթացին: Ջավախահայ ակտիվիստների կողմից տեղադրված խաչքարն անգամ գիշերով հանվեց պատվանդանից, և փորձ արվեց այն հեռացնել նշված վայրից, սակայն տեղի հայության կոշտ դիմադրության պայմաններում խաչքարը մի քանի օր անց վերստին կանգնեցվեց պատվանդանին:

[1] *Սարգսյան Վ.,* Սամցխե-Ջավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Երևան, 2006, էջ 65:

[2] Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ (Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ), Ե., 2010, էջ 131-134: Վրաստանի հայաշատ մի շարք վայրերում և հատկապես Ջավախքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողների տեղադրման գործընթացն ինտենսիվ շարունակվում է նաև մեր օրերում:

Հիշատակի հուշարձանների տեղադրմանը զուգահեռ, Վրաստանի հայության շրջանակներում առավել բուռն դարձան քննարկումները Հայոց ցեղսպանության հարցի վերաբերյալ: Այդ ընթացքում Ջավախքում հիմնադրված բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպությունների և միությունների կողմից հաճախակի դարձան Վրաստանի իշխանություններին ուղղված դիմումներն ու կոչերը, որոնցում պահանջվում էր ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը: 2003թ. ապրիլի 24-ի նախօրեին տարածվեց Վրաստանի խորհրդարանին ուղղված դիմում-կոչը, որի տակ ստորագրել էին «Վիրք» կուսակցությունը, Ախալքալաքի «Ա-Ինֆո» և «Ակունք» միությունները, Նինոծմինդայի «Լեռնաշխարհ» միությունը, Ջավախքի Երիտասարդական մարզամշակութային միությունը, Ախալցխայի Հայկական ազգային հասարակական միությունը, Ախալցխայի Շ.Ազնավուրի անվան մշակութային, բարեգործական և տնտեսական վերածննդի միությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միության Ջավախքի մասնաճյուղը: Վերջիններս կոչ էին անում *«…Վրաստանի խորհրդարանին ճանաչել և դատապարտել մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություններից մեկը»*[1]: Նույն տարում Ջավախքի բոլոր շրջաններից շուրջ մի քանի տասնյակ հասարակական կազմակերպությունների և միությունների միավորմամբ ստեղծվեց Սամցխե Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը[2], որն այդ և հետագա տարիներին մեծ դերակատարում ունեցավ ինչպես վիրահայության խնդիրների հանրայնացման, այնպես էլ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը Վրաստանի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում շոշափելու գործընթացներում:

2000-ական թթ. սկզբներից Վրաստանի հայության շրջանում Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցի ակտիվ քննարկումներին վրացական կողմի արձագանքներին մամուլի և հասարակական մտքի մասով առավել մանրակրկիտ կանդրադառնանք ստորև, իսկ պետական և հասարակական օղակների մասով այդպիսիք խիստ աղքատիկ էին կամ, կարելի է ասել, իսպառ բացակայում էին: Մեր ձեռքի տակ է «Վրաստանի ռեալիստների միություն» քաղաքական միավորման պաշտոնական զորակցության դիմումն՝ ուղղված հայ ժողովրդին, ստորագրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա՝ ապրիլի 24-ի նախօրյակին (2002թ.): Վրաստանի ոչ հայկական միջավայրում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և ինչ-որ իմաստով դատապարտման մասին իր

[1] Տե՛ս դիմում-կոչի բովանդակությունը, անձնական արխիվ:
[2] Հիմնադրման մասին տե՛ս *Սարգսյան Վ.,* նշվ. աշխ., հավելված 3, էջ 330:

բնույթով եզակի այդ փաստաթղթում նշված էր հետևյալը. *«Մեր հայ եղբայրներ և քույրեր: Ողջունում ենք ձեզ Վրաստանի ռեալիստների միության անունից և թույլ տվեք արտահայտելու մեր խորին ցավակցությունը ապրիլի 24-ի կապակցությամբ, որը, որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության օր, ողբերգական է ոչ միայն հայ ազգի, այլև քաղաքակիրթ բոլոր մարդկանց համար: Վրաստանի ռեալիստների միությունը պաշտոնապես պաշտպանում է ձեզ և խնդրում փոխանցել բոլորին, որ մենք կանգնած ենք ձեր կողքին»*[1]:

Նորանկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի խորհրդարանում Հայոց ցեղասպանության մասին խոսվեց 2002թ. ապրիլի 24-ին, երբ Ախալքալաքի շրջանից ընտրված պատգամավոր Հ.Մովսիսյանը, նույն օրը ելույթ ունենալով խորհրդարանում, խնդրեց ներկաներին մեկ րոպե լռությամբ հարգել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը[2]: Ի պատասխան հայ խորհրդարանականի կոչի, ազգությամբ ադրբեջանցի խորհրդարանականները հարձակվեցին Հ.Մովսիսյանի վրա՝ վիրավորելով նրան ոչ պատվաբեր խոսքերով և հանդես գալով ողջ հայությանն ուղղված սպառնալիքներով: Միջամտելով սադրանքին և փորձելով հանդարտեցնել բորբոքված խորհրդարանականներին՝ խոսնակ Ն.Բուրջանաձեն փորձեց վերաձևակերպել Հ.Մովսիսյանի հայտարարությունը՝ առաջարկելով, որ ոչ միայն հարգեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, այլև նրանց, ովքեր նահատակվել են վերջին հարյուր տարվա ընթացքում տեղի ունեցած միջէթնիկական հակամարտությունների ժամանակ՝ հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, աբխազներ, օսեր: *«Այս օրը ողբերգական է հայ ժողովրդի համար: Դժբախտաբար, այդ փաստից հետո էլ աշխարհում նմանատիպ իրողություններ են տեղի ունեցել, որոնց արդյունքում կյանքից զրկվել են խաղաղ բնակիչները»,*- իր խոսքում նշել է Ն.Բուրջանաձեն[3]՝ այդպիսով առաջարկելով մեկ րոպե լռությամբ հարգել թվարկված ժողովուրդների անմեղ զոհերի հիշատակը: Վրաստանի ադրբեջանցի խորհրդարանականները, չբավարարվելով այդքանով, նույն օրը հրավիրեցին մամուլի ասուլիս՝

[1] Տե՛ս «Վրաստանի ռեալիստների միություն» քաղաքական միավորման պաշտոնական զորակցության դիմում, N 100/06, ք. Թբիլիսի, 23 ապրիլի, 2002թ., անձնական արխիվ: Դիմումի տեքստը նույնությամբ արտատպվել է Ջավախքում լույս տեսնող «Ակունք» թերթում, տե՛ս «Ակունք», թիվ 3 (11), 1-15 մայիսի, 2002:

[2] Турецко-азербайджанский капитал делает Тбилиси безразличным к теме геноцида армян - армянский эксперт, 15.04.2011, www.regnum.ru/news/fd-abroad/armenia/1395492.html.

[3] Վրացաբնակ ադրբեջանցիների առաջնորդներն աշխատում են Անկարայի համար, 28 ապրիլի, 2003, http://www.panarmenian.net/arm/details/41977/. Չնայած լրատվությունը նշված է 2003 թվականով, այդուհանդերձ, մեզ հետ զրույցում Հ.Մովսիսյանը պնդեց, որ իրադարձությունը տեղի է ունեցել 2002թ.:

Ն.Բուրջանաձեին և Վրաստանի իշխանություններին մեղադրելով հայամետության մեջ. *«Կովկասում տեղի ունեցած հակամարտությունների զոհերի հիշատակի հարգումը հայերի ցեղասպանության օրը՝ ապացուցում է, որ վրացական խորհրդարանը դե-ֆակտո ընդունում է Հայոց ցեղասպանությունը»,*- նշել են նրանք՝ ավելացնելով, որ իբր թե Ն.Բուրջանաձեն հայ պատգամավորների հետ միասին նախապես պլանավորել էր նիստի ընթացքը. *«…ոչ միայն հայերի, այլև Կովկասում զոհվածների հիշատակը հարգելու նրա առաջարկը նախապես մտածված էր»,*- եզրակացրել են ադրբեջանցի խորհրդարանականները[1]: Հետաքրքրական մեկ փաստ ևս. Ն.Բուրջանաձեին և իր թիմակիցներին սփյուռքի հայկական քարոզչության և ռուսամետ ուժերի աջակցությամբ հայամետ քաղաքականություն վարելու մեջ մեղադրող ադրբեջանցի խորհրդարանականները նիստի ընդմիջմանը հրավիրվել են Վրաստանում Թուրքիայի դեսպանատուն, որտեղ թուրք դիվանագետները պատգամավորներին շնորհակալություն են հայտնել ակտիվ գործունեության համար: Ի դեպ, մինչ ադրբեջանցիները բանակցություններ էին վարում թուրք դեսպանի հետ, Ն.Բուրջանաձեն սպասում էր նրանց իր աշխատասենյակում, որտեղ նրանք այդպես էլ չեկան[2]:

Հետագա տարիներին ևս, թեև ոչ հաճախակի, Վրաստանի խորհրդարանի որոշ հայազգի պատգամավորներ առաջարկել են հարգել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, սակայն այդ առաջարկները կրել են ավելի շատ դեկլարատիվ բնույթ և փաստի ճանաչման ու դատապարտման գործում չեն ունեցել էական ազդեցություն: Ցանկալի արդյունքի չեն հանգեցրել նաև Սամցխե Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի և վիրահայ այլ կազմակերպությունների՝ Վրաստանի խորհրդարանին ու իշխանություններին ուղղված դիմումներն ու կոչերը: Հայոց ցեղասպանության հարցը Ջավախքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ Շրջանային ժողովների (Սակրեբուլո) մակարդակով ճանաչման և դատապարտման ուղղությամբ ևս չկան էական տեղաշարժեր:

Վրացական վրացալեզու մամուլի անդրադարձը Հայոց ցեղասպանության խնդրին

Վրաստանում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի արծարծման խնդրին, որպես կանոն, անդրադարձել է նաև վրացական վրացալեզու մա-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

մուլը: Անդրադառնալով մեր կողմից քննվող ժամանակահատվածին (21-րդ դարի 1-ին տասնամյակ)՝ մամուլում արծարծված նյութերը ստորև ներկայացնում ենք ըստ պարբերականների հրատարակությունների ժամանակագրության: Եվ այսպես, անդրադառնալով 2000թ. ապրիլի 9-ին տեղի ունենալիք նախագահական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում Ջ.Պատիաշվիլու, այնուհետև՝ Է.Շևարդնաձեի Ախալքալաք այցերին՝ «Ռեզոնանսի» թերթը հայտնում է, որ շուրջ 200 ախալքալաքցի Է.Շևարդնաձեից պահանջել է Ջավախքին շնորհել ինքնավարություն և ճանաչել 1915թ. Հայոց ցեղասպանությունը[1]: Նշյալ ծավալուն հրապարակման մեջ հոդվածագիրն ախալքալաքցիների հիշյալ հանրահավաքի նախաձեռնող է համարում «Վիրք» չգրանցված կուսակցությանը՝ ավելացնելով, որ *«Վիրք» կուսակցությունը ներկա պահին մասնակցում է տարածաշրջանի բարդ խաղերին (հավանական է, որ ղեկավարվում է Մոսկվայից), պարզվեց նաև, որ այդ խաղերին մասնակցում են ոչ միայն «Վիրքը» և տարածաշրջանում գործող անջատողական նման խմբավորումները, այլև Թիֆլիսի, Երևանի ու Մոսկվայի քաղաքական առանձին ուժերը»*[2]: Հոդվածագիրը հանրահավաքը կապում է ոչ միայն վերոբերյալ երկու հարցերի, այլև Ջավախքի սոցիալական ծանր վիճակի, Ախալքալաքից ռուսական ռազմակայանի դուրսբերմամբ սոցիալական խնդիրների խորացման հետ: Ախալքալաքում Է.Շևարդնաձեից պահանջել են նաև ժամանակին վճարել թոշակներն ու աշխատավարձերը: Այդուհանդերձ, թերթի հիմնական շեշտադրումը դարձյալ կապվում է «Վիրք» կուսակցության գործունեության հետ, վերջինիս հետ են կապվում ջավախահայության շրջանում ձևավորված մի շարք պահանջների, ռուսական ռազմաբազայի դուրսբերման դեմ իրականացվող քայլերի և դրանով պայմանավորված՝ ազգաբնակչության շրջանում ռուսամետ տրամադրությունների առաջացումն ու ձևավորումը: Հեղինակը, խառնելով ժամանակագրությունը, «Վիրքի» հետ է կապում անգամ Ախալքալաքի մերձակայքում տեղի ունեցած հայտնի դեպքը, երբ ջավախահայ ակտիվիստները դեմ դուրս եկան վրացական մի զորամիավորման ժամանմանն Ախալքալաք և Աբուլ լեռան վրա զորավարժության անցկացմանը. *«…այդպիսի տրամադրություններ տեղի ազգաբնակչության շրջանում հրահրում են «Վիրքի» և նման կազմակերպությունների ակտիվիստները: Պատահական չէր, որ հենց նման ուժերի պահանջով է առաջ քաշվում 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը»*[3]: Իրականում «Վիրք» կուսակցության

[1] "რეზონანსი" («Ռեզոնանսի»), N 92, 2000.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

հասցեին հնչած մեղադրանքները և, հեղինակի տեսանկյունից՝ Վրաստանի շահերից չբխող մի շարք գործողությունների վերագրումը քաղաքական այդ միավորմանը, չափազանցված են հոդվածում: «Վիրքն», օրինակ, չէր կարող մասնակից լինել 1998թ. օգոստոսի 12-ին տեղի ունեցած իրադարձությանը՝ կապված Աբուլ լեռան լանջերին ռուսական 62-րդ ռազմաբազայի զորքի հետ համատեղ զորավարժանք իրականացնելու նպատակով Ախալքալաք ժամանող վրացական զորամիավորման երթի կանգնեցման և հետվերադարձի հետ, քանի որ կուսակցությունը հիմնադրվել է 1999թ.: Հավելենք, որ արդարացված չեն նաև «Վիրքն» իրավաբանորեն չգրանցելու մասին Վրաստանի արդարադատական մարմինների՝ հասարակության շրջանում կուսակցության անվանման անհասկանալի լինելու և կուսակցության տեղական (ռեգիոնալ) բնույթի հետ կապված պատճառաբանությունները: Կուսակցությունն իրականում համավրաստանյան բնույթի է և ստեղծվել է «Քաղաքական կազմավորումների մասին» երկրի օրենքի պահանջներին համապատասխան[1]:

Անդրադառնալով 2000թ. նոյեմբերի 7-ին Ֆրանսիայի Հանրապետության Սենատի կողմից 1915թ. Հայոց ցեղասպանությունը հրապարակավ ճանաչելու մասին օրինագծի ընդունմանը[2]՝ «Դոռնի» («Ժամանակներ») թերթը «Հայերի աննախադեպ հաջողությունը» վերտառությամբ իր անդրադարձում փաստում է, որ հայությունն այդ պատմական փաստին տալիս է մեծ նշանակություն, այդուհանդերձ, 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման հայության ջանքերն իզուր են անցել: *«Իսկ վերջերս, քաղաքական «անկայուն» Ֆրանսիան, ինչպես երևում է, խմեց Դիլիջանի ջուրը»*[3]: Թերթը դրանով ակնարկում էր Ֆրանսիայի այդ որոշման վրա հայության քարոզչության մեծ ազդեցության մասին: Շարունակելով արծարծել 2000թ. նոյեմ-

[1] Կուսակցության՝ Վրաստանի տվյալ շրջանի օրենսդրությանը համահունչ կազմված կանոնագրում նշված է նաև, որ «կուսակցության անդամ կարող է դառնալ ընտրելու իրավունք ունեցող Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ ազգային պատկանելությունից», տե՛ս Устав Всегрузинской народной партии *"ВИРК" (проект),* անձնական արխիվ: «Վիրք» կուսակցության համանախագահ Դ.Ռստակյանի՝ Ջավախքի խնդիրների և կուսակցության իրավաբանական գրանցման մասին հնչեցրած տեսակետները և այդ առթիվ Վրաստանի արդարադատության և անվտանգության նախարարությունների ներկայացուցիչների մեկնաբանությունները տե՛ս "მთავარი გაზეთი" («Մթավառի գազեթի». «Գլխավոր թերթ», N 124, 2003:

[2] Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչվել է Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998թ. մայիսի 29-ին, Սենատի կողմից՝ 2000թ. նոյեմբերի 7-ին: 2001թ. ՖՀ նախագահ Ժ.Շիրակը և վարչապետ Լ.Ժոսպենը ստորագրեցին Օրենք Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, տե՛ս Հայոց ցեղասպանություն, աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմ.՝ Լ.Բարսեղյան, Ե., 2005, էջ 431-530, 613:

[3] "დროონი" («Դոռնի». «Ժամանակներ»), N 133, 2000.

բերի 7-ին Ֆրանսիայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման թեման՝ վրացական «Ասավալ-դասավալի» թերթը «Հայոց ցեղասպանությունը» և Թուրքիայի նոր հիմնախնդիրները» խորագրով 2001թ. փետրվարին հրապարակեց Վրաստանում Թուրքիայի դեսպանատան ռազմական կցորդ, շտաբի գնդապետ Վ.Իլդիզի ծավալուն հարցազրույցը[1]: Դեսպանատան ռազմական կցորդը, բնականաբար, Հայոց ցեղասպանության հարցում հանդես գալով ժխտողական կեցվածքով, կրկին հանդես է գալիս թուրքական նույն չարչրկված թեզերով, ըստ որոնց՝ նման հարցերը պետք է քննարկվեն ոչ թե խորհրդարաններում, այլ պատմաբանների շրջանակներում: Հայոց ցեղասպանության փաստը ժխտելով՝ թուրք պաշտոնյան նշում է, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում իբր Ռուսաստանի հրահրումով և հայությանը Թուրքիայի քայքայման գործում որպես կույր գործիք օգտագործելու պատճառով երկրում տեղի ունեցան ողբերգություններ, որոնց հետևանքով զոհվեցին մոտ 300 հազ. հայեր և դրանից ոչ պակաս թուրքեր[2]: Փաստերի խեղաթյուրման այս թոհուբոհում թուրքական դեսպանատան պաշտոնյան կշտամբանքներ, մեղադրանքներ և սպառնալիքներ է հնչեցնում նաև Ֆրանսիայի հասցեին: Գրեթե նման ենթատեքստեր պարունակող հարցադրումներով, սակայն մի փոքր ավելի դիվանագիտական ոճով հանդես եկավ այս անգամ արդեն Վրաստանում Թուրքիայի դեսպան Բ.Գյուրսելին, որն «Ախալի ազրովնեբա» վրաց-թուրքական շաբաթաթերթում 2002թ. հանդես եկավ ծավալուն հարցազրույցով: Ի դեպ, թերթը հիմնադրվել էր այդ շրջանում, իսկ հարցազրույցը տպագրվեց հենց ապրիլի 18-24-ի համարում՝ դրանով փորձելով հակազդել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն աշխարհում, այդ թվում Վրաստանում իրականացվող միջոցառումներին: Ճիշտ է, թերթում թղթակցի (որն, ի դեպ, նույնպես ազգությամբ թուրք էր) կամ դեսպանի կողմից ուղղակի չի արծարծվում Հայոց ցեղասպանության թեման, այդուհանդերձ, հարցազրույցը մեծ մասով վերաբերում է հայկական սփուռքի կողմից իրականացվող քարոզչությանը, Հայաստանի արտաքին քաղաքականությանը, Արցախի խնդրին և ՀՀ-ԹՀ հարաբերություններին: Այսպես, խոսելով վրաց-թուրքական ջերմ կապերի, Թուրքիայի կողմից Վրաստանին բոլոր տեսակի և բնույթի հարցերում անշահախնդիր օժանդակելու մասին՝ դեսպանն անցնում է այդ ամենին, իր բնորոշմամբ, խոչընդոտող հանգամանքներին, որոնց թվում և հայկական խնդրին: *«Եթե վերցնենք Հայաստանը, այն այսօր*

[1] "ასავალ-დასავალი" («Ասավալ-դասավալի». թարգմ.՝ «Ոչ ոք չգիտի՝ որտեղ է նա, ինչ է պատահել նրան»), N 6, 2001:
[2] Նույն տեղում:

էլ դեմ է դուրս գալիս Թուրքիայի քաղաքականությանը: Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու համար Հայաստանը պետք է դադարեցնի նման քաղաքականությունը, Հայաստանը պետք է նաև ազատի Ադրբեջանից զավթած հողերը: Կարճ ասած, Ղարաբաղի հիմնախնդիրը պետք է կարգավորվի: Եթե հայերն ընդունեն այս վերջնագիրը, ապա այդ դեպքում կհաստատվեն թուրք-հայկական հարաբերությունները: Հայաստանը պետք է հոգա տարածաշրջանի խաղաղության համար, և միայն դրանից հետո պետք է խոսել մեր և նրանց միջև հարաբերությունների հաստատման մասին: Մենք ոչ մի երկրի կամ ազգի դեմ դուրս չենք գալիս, բայց Հայաստանն իր համայնքների շնորհիվ ստեղծել է բազմաթիվ նեգատիվ ուժեր, որոնք հակադրվում են Թուրքիայի քաղաքականությանը (ընդգծումը մերն է- *Վ.Ս.*): *Կարող եմ ասել, որ եթե Հայաստանը հրաժարվի իր նեգատիվ գաղափարներից, ապա միայն այդ դեպքում կհաստատենք հարաբերություններ. Թուրքիան միայն բարիք կբերի Հայաստանին»,*- նշել է Վրաստանում Թուրքիայի դեսպանը[1]:

Հայ-վրացական պատմական հնօրյա և նորօրյա խնդիրներին է նվիրված «Դիլիս գազեթի» թերթի հրապարակումներից մեկը: Հոդվածագիրը, խառնիճաղանջ ներկայացնելով պատմական հարցերի մի ողջ շարան, դարձյալ առաջ է քաշում հայերի կողմից պատմության ընթացքում վրացական հողերի յուրացման թեզը: Անդրադառնալով մերօրյա հարցերին՝ թերթը մեղադրանքներ է հնչեցնում հայ քաղաքագետ Ալ. Քանանյանին, ով, հոդվածագրի ենթադրմամբ, փորձում է հավակնություններ ներկայացնել հայաբնակ Ջավախքի նկատմամբ: Թերթը նշյալ հրապարակման մեջ Հայոց ցեղասպանության հարցին անդրադառնում է արցախյան խնդրի համատեքստում. *«Իսկ Ղարա-բաղը*[2] *որտեղի՞ց է նրանց (*հայերի- *Վ.Ս.) հողը... ռուսների հետ պայմանագիր կնքելով զավթեցին, հակառակ դեպքում ադրբեջանցիներն ու թուրքերը կհիշեցնեին 1915թ. ցեղասպանությունը...»*[3]: Հոդվածագիրը սուր քննադատության է արժանացնում նաև «Գյուրջիստան» թերթի աշխատակից, ազգությամբ ադրբեջանցի Շ.Մամեդլիի կողմից 1991թ. հրատարակված գիրքը՝ «Մասնատված Բորչալուն» վերնագրով: Գրքում հեղինակն այն տեսակետն է հայտնում, որ Վրաստանի ներկայիս Քվեմո Քարթլի նահանգի բոլոր 4 շրջանները՝ Դմանիսը, Բոլնիսը, Մառնեուլը և

[1] "ახალი აზროვნება" («Ախալի ազռովնեբա». «Նոր մտածողություն»), N 9, 2002:

[2] Հեղինակը գծիկով է գործածել «Ղարաբաղ» անվանումը ՝ "ყარა-ბაღი"՝ հավանաբար փորձելով ընդգծել վերջինիս թուրքահունչ ձևը և ընթերցողի մոտ առավել տպավորիչ դարձնել Արցախի ադրբեջանապատկան լինելու մասին սեփական համոզումը:

[3] "დილის გაზეთი" («Դիլիս գազեթի». «Առավոտյան թերթ»), N 34, 2003:

Գարդաբանը, խլել է Վրաստանը, *«... իսկ Գոգարեթը՝ Հայաստանը (այդ «հայրենասերը» չգիտի էլ, որ ամբողջ Քվեմո Քարթլին կոչվում է Գոգարեթի-Գուջարեթի): Եթե լացելու չլինի, ապա ծիծաղելի է. ում հողի վրա են ապրում և ինչեր են զառանցում...»,*- նշում է վրացական թերթի հոդվածագիրը[1]:

Վրաստանի վրացալեզու մեկ այլ թերթ՝ «Ախալի էռան» («Նոր դարաշրջան»), մանրամասնորեն մեկնաբանելով ռուսական «Ռեգնում» լրատվական գործակալությանը «Վիրք» կուսակցության համանախագահ Դ.Ռստակյանի ծավալուն հարցազրույցը և բազմաթիվ սուր մեղադրանքներ հնչեցնելով ջավախաբնակ քաղաքական գործչի հասցեին, ներկայացնում է 1915թ. Հայոց ցեղասպանության պատճառների մասին իր տեսակետը. *«1915թ. Դ.Ռստակյանի նման հայ արկածախնդիրները Եվրոպայում տպեցին այսպես կոչված «Մեծ Հայաստանի» քարտեզը: Այդ «քարտեզի» համաձայն՝ Անդրկովկասի ողջ տարածքի 80%-ը Հայաստան էր հայտարարված, Վրաստանից ու Ադրբեջանից ոչինչ չէր թողնված: «Քարտեզը» հայ երիտասարդության մեջ մեծ ճանաչողություն ուներ, խրախուսվում էր դաշնակների կողմից նաև: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, 1915թ. Թուրքիայում ապրող հայերը պայքար սկսեցին Օսմանյան կայսրության դեմ, ինչը փոքրաթիվ ազգի համար ոչնչացմամբ ավարտվեց: Շնչահեղձ լինող Օսմանյան կայսրությունը, որ ղեկավարում էր զինվորական եռապետությունը, չնայած ծանր իրավիճակին, այնուամենայնիվ, բավարար ուժ գտավ իր մեջ հայերին օրինակելի պատիժ հասցնելու համար»*[2],- նշում է թերթը և ապա անցնում ցեղասպանության սարսափների նկարագրմանը: *«Եվ իրոք, սարսափելի բան տեղի ունեցավ. Էնվեր փաշայի անմիջական հրամանով, 1915թ. գարնանը, 24 ժամվա ընթացքում, Թուրքիայում ապրող էթնիկ հայերին հավաքագրեցին որպես պահեստայիններ և «Մեծ Հայաստանի» վերականգնման մասին երազողների հետ ասկյարները մեկ-մեկ հաշվեհարդար տեսան: Անատոլիայի անապատը լցվեց հայերի դիակներով, անմեղ մարդիկ ծարավից ոչնչանում էին... Կախաղաններ էին քշում կանանց, երեխաներին, ծերերին: Այդպես իրագործվեց հայ ազգի ցեղասպանությունը, և այդ ամենը դաշնակցականների այն ահաբեկչական կազմակերպության պատճառով, որին պատմությունը չի մոռացել, բայց ոչ էլ սերտվեցին պատմության դասերը»,*- եզրակացնում է թերթի հրապարակագիրը[3]:

Հունվար, 2018թ.

---

[1] Նույն տեղում:
[2] "ახალი ერა" («Ախալի էռա». «Նոր դարաշրջան»), N 41, 2003:
[3] Նույն տեղում:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ (մաս 1)

Վահե Սարգսյան

Ամփոփագիր

Վրաստանն աշխարհի այն պետություններից է, որը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Հետխորհրդային Վրաստանի պատմության մեջ առանձնացվում է Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի արծարծման երկու պայմանական փուլ: Առաջին փուլը երկրի անկախության առաջին տասնամյակի շրջանն էր, որի ընթացքում վրաց հասարակական-քաղաքական և պետական օղակներում այդպես էլ քննարկման չարժանացավ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը: Երկրորդ պայմանական փուլը սկսվում է 2000 թվականից, երբ Վրաստանի հայաշատ վայրերում բացվեցին հիշատակի կոթողներ, իսկ 2002թ. ապրիլի 24-ին Վրաստանի խորհրդարանում հայազգի պատգամավոր Հ.Մովսիսյանը գործնականում առաջին անգամ խոսեց Հայոց ցեղասպանության մասին և առաջարկեց խորհրդարանականներին մեկ րոպե լռությամբ հարգել անմեղ զոհերի հիշատակը: Այս ամենով հանդերձ՝ ինչպես ջավախահայությունը, այնպես էլ Թիֆլիսում և Վրաստանի այլ հայաշատ վայրերում ապրող հայությունը մշտապես նախաձեռնել է հիշատակի միջոցառումներ և հանդես եկել Հայոց ցեղասպանությունը պետականորեն ճանաչելու և դատապարտելու պահանջով:

Հայոց ցեղասպանության խնդիրն արծարծվել է նաև վրացական վրացալեզու տպագիր մամուլում: Ներկա աշխատանքում քննության են առնվել 21-րդ դարի առաջին տասնամյակի վրացալեզու տպագիր մամուլի նյութերը, ներկայացվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ վրաց հասարակական-քաղաքական մտքի տարաբնույթ տեսակետները, կարծիքները և մեկնաբանությունները:

ЗАТРАГИВАНИЕ ВОПРОСА О ГЕНОЦИДЕ АРМЯН В ПОСТСОВЕТСКОЙ ГРУЗИИ (часть 1)

Ваге Саркисян

Резюме

Грузия – одна из стран, не признавших Геноцид армян. В истории постсоветской Грузии выделяются две условные фазы в проблеме поднятия вопроса Геноцида армян. Первая фаза охватывает первую декаду независимости страны, в течение которой в грузинских общественно-политических и государственных кругах вопрос о признании и осуждения Геноцида армян так и не удостоился обсужде-

ния. Вторая условная фаза начинается с 2000г., когда в армянонаселенных местностях Грузии были возведены мемориалы, а 24 апреля 2002г. в парламенте Грузии депутат-армянин Г.Мовсисян впервые за историю независимого грузинского парламента заговорил о Геноциде армян и предложил парламентариям почтить минутой молчания память невинных жертв геноцида. При этом армяне Джавахка, Тбилиси и других армянонаселенных районах Грузии постоянно инициировали мемориальные мероприятия и выступали требованием государственного признания и осуждения Геноцида армян.

Вопрос о признании Геноцида армян был также поднят в грузинских, грузиноязычных печатных СМИ. С опорой на грузиноязычные печатные СМИ первой декады XXIв. в статье представлены различные взгляды, мнения и комментарии грузинской общественно-политической мысли о Геноциде армян.

RAISING OF THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN POST-SOVIET GEORGIA (part 1)

Vahe Sarkisyan

Resume

Georgia is among the countries that have not recognized the Armenian Genocide yet. In the history of the post-soviet Georgia there are two conventional phases when the issue of the Armenian Genocide has been raised. The first phase coincided with the first decade of independence of the country, during which the issue of the recognition and condemnation of the Armenian Genocide was not discussed in the Georgia at the social/civic and state levels. The second conditional phase started in 2000, when in areas populated mainly by the Armenian, monuments were opened, and on April 24, 2002, in the Georgian Parliament the ethnic Armenian PM H. Movsisyan was the first to speak about the Armenian Genocide and offered to respect the memory of the innocent victims with one-minute silence. In addition to this the Armenians in Javakhk, as well as in Tbilisi and other parts of Georgia which are populated mainly by Armenians have always held memorial events and demanded the recognition of the Armenian genocide the state level.

The issue of the Armenian Genocide was also introduced in the Georgian printed media. The article examines the materials from the Georgian printed media of the first decade of the 21st century, and presents the opinions, viewpoints and comments of the Georgian social-political figures.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սուրեն Մարտիկյան*

Բանալի բառեր՝ կազմակերպական զենք, ուղեղների շրջանառություն, թիրախ-պետություն, հակառակորդին ներսից քայքայելու միջոցներ, նոր կազմակերպական տեխնոլոգիաներ:

Պատմական փորձով հիմնավորվում է այն պարզ պնդումը, որ հակառակորդի դեմ պայքարի հիմնահարցն առավել արդյունավետ է լուծվում, երբ ստեղծվում են նրա «ինքնակազմալուծման» և «ինքնաապակողմնորոշման» պայմաններ: Սակայն որքան էլ պնդումը հայտնի է շատերիս՝ հիմնականում անհայտ են մնում դրանց կյանքի կոչման ուղիները: Այս պայմանների որոշ մասի պարզաբանմանը ևս նվիրվելու է հոդվածը:

Պատերազմի կամ հակամարտության և առճակատման այլ տեսակի դեպքում հակառակորդի ներքին համախմբման հեռանկարը ստիպում է թիրախ-պետությունը ներսից պառակտելու միջոցառումները *տարիներ* և նույնիսկ *տասնամյակներ* առաջ սկսել: Սա անհամեմատ ավելի արդիական է մեր օրերում, երբ ընդունելություն է ստացել «չկան մշտական բարեկամներ և թշնամիներ, այլ կան մշտական շահեր» բանաձևը: Պետությունների մեծ մասը բազմաթիվ պետությունների հանդեպ կիրառում է զգուշավոր մոտեցումներ: Դրանք առանձին դեպքերում իրականացվում են այնպիսի պետությունների կողմից և այնպիսի պետությունների դեմ, որոնց միջև դասական իմաստով լայնածավալ պատերազմների հավանականությունը տեսանելի ապագայում ոչ թե մեծ չէ, այլ ուղղակի զրոյական է:

Վերջին շրջանում մեծ տեղ է ստանում արտաքին քաղաքականության վարման մասին չինական ասացվածքը. «չկան թշնամի և բարեկամ պետություններ, բոլորը թշնամի են՝ մոտակա և հեռավոր» [1, стр. 372]: Հնարավոր է, որ խոսքում չափազանցություններ կան, սակայն դրանով,

* ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի հրամանատարաշտաբային ֆակուլտետի ռազմարվեստի ամբիոնի ավագ դասախոս, զնդապետ, ռազմարվեստի պատմաբան:

ընդհանուր առմամբ, արտահայտվում են վարվող քաղաքականության գաղտնիքները:

Հասկանալի վերապահումներով կարելի է արձանագրել, որ ներսից պառակտելու միջոցառումներ իրականացնում են գրեթե բոլորը՝ գրեթե բոլորի դեմ: Տարբերությունը հիմնականում կապված է լինում պառակտում իրականացնողի հնարավորությունների և թիրախի կողմից ձեռնարկվող հակաքայլերի արդյունավետության հետ:

Կազմակերպական զենքը և դրա կիրառումը

Հարձակումից առաջ հակառակորդին ներսից «պատրաստելու» պայմանների ստեղծումը գործնականում իրականացվում է այսպես կոչված *«կազմակերպական զենքի» (ԿԶ)* կիրառումով: Այն հակառակորդի վրա հետախուզական, պրոպագանդիստական, հոգեբանական, տեղեկատվական և այլ ազդեցության համակարգ է, որը համաձայնեցված է լինում նպատակներով, տեղով ու ժամանակով: Այս համակարգը հակառակորդին հարկադրում է շարժվել ակտիվ կողմի (խորամանկողի) համար ձեռնտու հունով:

ԿԶ օգնությամբ հակառակորդի քաղաքականությունն ուղղորդվում է դեպի ռազմավարական փակուղի, անարդյունավետ (ուժասպառ անող) ծրագրերով նրա տնտեսությունը հյուծվում է, նրա սպառազինության զարգացումը սառեցվում է, ազգային մշակույթի հիմքերը խեղաթյուրվում են, մտավորականության շրջանում ձևավորվում է «հինգերորդ շարասյուն», որն աջակցում, պրոպագանդում և իրականացնում է կեղծ բարեփոխումներ և այլն: Արդյունքում՝ պետությունում ստեղծվում է ներքաղաքական քաոսի իրավիճակ, որը տանում է պետության տնտեսական, քաղաքական և ռազմական հզորության նվազման և նույնիսկ կործանման:

Այս զենքը ռազմաքաղաքական և ռազմավարական բաղկացուցիչներ ունի, որի պատճառով դրան շատ չենք անդրադառնա, բայց արձանագրենք, որ վերջին տասնամյակներում ԿԶ նշանակությունն էապես աճել է և այսօր էլ շարունակում է աճել: Հանրության մեծագույն մասի համար անհասկանալի մնացող այս հնարքները դառնում են ավելի ու ավելի արդյունավետ: Իսկ անհասկանալի և անտեսանելի մնալու (լինելու) պատճառը պարզ է. սպառնալիքի գիտակցումը հակառակորդին հարկադրելու է հակաքայլեր ձեռնարկել, որոնք ոչ միայն կարող են կտրուկ բարձրացնել նրա պաշտպանվածության աստիճանը, այլև ԿԶ ամբողջ համալիրի արդյունավետությունը հարցականի տակ դնել: Թերևս, այս պատճառով է, որ դրա մասին չեն բարձրաձայնում ինչպես ԿԶ-ն գործի դնողները (ակտիվ կողմը), այնպես էլ դրա դեմ պայքարողները (թիրախ-պետության ամենատարբեր կառույցները):

ԿՁ հիմքն են կազմում կազմակերպական ղեկավարման հատուկ ռեֆլեքսային տեխնոլոգիաները կամ նոր կազմակերպական տեխնոլոգիաները (*ՆԿՏ*): Դրանք կառավարչական որոշումների իրականացման, հնարավորությունների ներդրման, տեղեկատվական և այլ անհրաժեշտ կապերի պահպանման, անձնակազմի (ծրագրման, հաշվետվության, վերահսկողության և այլն) ընտրության և պատրաստման անընդհատ կատարելագործվող կարգավորված մեթոդների (ծրագրերի, ռազմավարությունների, գործընթացների, ձևերի) ամբողջություն են:

Իրենց բնույթով *ՆԿՏ*-ները ստորաբաժանվում են կառուցողականի և ապակառուցողականի:

Կառուցողական ՆԿՏ-ները նախատեսված են ազգային փոփոխվող սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակի պայմաններում կազմակերպական կառույցների կողմից գերատեսչությունների և կորպորացիաների նպատակային ու գործառութային խնդիրների արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Ապակառուցողական ՆԿՏ-ները նախատեսված են հակառակորդի պետական կառավարման համակարգի մեջ ներդնելու համար՝ դրա կառուցվածքային ենթահամակարգերի աշխատանքն անարդյունավետ և փակուղային ուղղությամբ տանելու համար:

Ապակառուցողական *ՆԿՏ*-ների կիրառման օրինակ է երրորդ սերնդի անհեռանկարային էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի վրա հիմնված ԷՀՄ-ների կազմակերպական-համակարգչային տեխնոլոգիան, որը որոշ իմաստով Վարշավայի պայմանագրի երկրների «վզին է փաթաթվել» [2, стр. 35]: Այն Արևմուտքում կարճատև կիրառություն է ունեցել և գործի է դրվել այնքան ժամանակ, մինչև որ դրանք սկսել են կիրառել սոցիալիստական ճամբարի պետությունները: Ընդ որում, մասնավորապես ԽՍՀՄ-ում այդ ժամանակ մշակված էին ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներ:

Ապակառուցողական *ՆԿՏ*-ներից է կեղծ (զուգահեռ, կրկնվող, իմիտացիոն տպավորություն ստեղծող, ձևական) մարմինների, ինչպես նաև տարբեր ինքնաբավ կազմակերպությունների (հիմնադրամներ, միություններ, ինստիտուտներ և նման այլ կառույցներ) *համատեղ* ստեղծումը: Բացի այդ, կառուցողական այնպիսի *ՆԿՏ*-ների մշակման քամահրում է տեղի ունենում, որոնք օգտագործում են ավանդական կազմակերպական մեխանիզմներ: Դրանք կարող են հայտարարվել *ժամանակավրեպ* և չհասցնելով ցույց տալ իրենց արդյունավետությունը՝ *դեն նետվել*: Դրանց կարող են փոխարինել հնացած կազմակերպական մեխանիզմները և կառույցները,

որոնք նույնիսկ կարևոր խնդիրների լուծման համար ստեղծված կազմակերպություններում չնչին արդյունք են տալիս:

Այսպես, ցանկացած *կազմակերպական համակարգի (ԿՀ)* հիմքը կազմում են մարդիկ, որոնց գործունեության նպատակամղումը հիմնվում է ֆիզիոլոգիական, հասարակական (սոցիալական) և տեղեկատվական պահանջների վրա: Արդյունավետ և ճիշտ հաշվարկված ԿՁ կիրառումը որոշակի կազմակերպական միջավայրում (առաջին հերթին՝ իշխանական) ուղղակի ազդեցություն է ունենում ԿՀ անվտանգության մակարդակի վրա: SS բնագավառում գիտատեխնիկական առաջընթացը, ԶԼՄ զարգացումը, գաղափարների և արժեքների ազատ փոխանակումը ֆիզիկական ավերածություններ առաջ բերող ոչ ավանդական խոցման միջոցներով հակառակորդի ջախջախման բացառիկ հնարավորություն են ստեղծում: Պայքարի այս լայնամասշտաբ ճակատը չի կարելի տեղայնացնել ոչ պետության սահմաններով, ոչ էլ տարբեր տեսակի արգելքներով: Անցնելով հասարակության յուրաքանչյուր անդամի գիտակցության միջով՝ քայքայիչ բնույթի երկարատև զանգվածային տեղեկատվական և բարոյահոգեբանական ազդեցությունը պատմականորեն ձևավորված մշակույթի, աշխարհայացքի և հոգեկերտվածքի ձևափոխման արդյունքում էական սպառնալիքներ է ստեղծում ամբողջ հանրության գոյության համար: Այսինքն՝ փոխվում է ներքին կազմակերպական միջավայրը, որը որոշիչ է պետության և նրա զինված ուժերի կենսագործունեության համար:

Միջպետական հարաբերությունների առանձնահատկությունն արդի փուլում ոչ միայն այն է, որ կառավարման բարձրագույն օղակների կողմից գիտակցվի պետության անվտանգության ներքին սպառնալիքների գոյությունը, այլև ընկալվի դրանց ծայրահեղ վտանգավորությունը: Վտանգի աստիճանը կարող է պայմանավորված լինել դրանց զարգացման գաղտնի ձևերով և դրսևորման անսպասելի լայն մասշտաբներով, որոնք գերազանցում են նույնիսկ վատատեսական սպասելիքները: Ընդ որում, նկատելի վտանգ են ներկայացնում իշխանական տարբեր կառույցների (պետական կառավարման մարմինների, նախարարությունների և գերատեսչությունների), պետության և հասարակության շահերի հաշվին իրենցը (կորպորատիվը) հետապնդող խոշոր բանկերի, ընկերությունների, ֆիրմաների *չհամակարգված* և *ինքնակամ* գործողությունները: Բացի այդ, լուրջ վտանգ կարող է ներկայացնել ԶԼՄ, քաղաքական կուսակցությունների, կրոնական դավանանքների և տոտալիտար աղանդների գործունեությունը, որոնք իրենց անհիմն հավակնությունների համապատասխան՝ ձգտում են օգտվել ծագած դժվարություններից և հասարակությանը պարտադրել հասարա-

կական գաղափարի ու զարգացման հեռանկարի մասին իրենց ունեցած արկածախնդիր տեսակետները և հայեցակարգերը:

Այսպիսով, անվտանգային սպառնալիքների գլխավոր աղբյուրը կարող է լինել պետության ներքին կազմակերպական միջավայրը, որը նախօրոք ենթարկվել է ԿԶ քայքայիչ ազդեցությանը: Այդ պատճառով պետության և նրա զինված ուժերի անվտանգությունն ապահովող *ՆԿՏ*-ների ստեղծումն, ի վերջո, հանգում է այնպիսի կազմակերպական միջավայրի սինթեզմանը, որը թույլ կտա ԿՀ գոյությունը պահպանել դժվարագույն իրավիճակներում, հստակորեն հակազդել բոլոր սպառնալիքներին, որոնք կարող են ծագել ինչպես համակարգի ներսում, այնպես էլ նրանից դուրս և հստակորեն օգտագործել պրոգրեսիվ զարգացման հնարավորությունները:

Կազմակերպական միջավայրի ղեկավարման կառուցվածքային տեսանկյունից բացի, բնորոշ է *անկառուցվածքայինը*, ըստ որի՝ տեղեկացնող և ղեկավարող տեղեկատվությունը կարող է համակարգում տարածվել ու շրջանառվել անհասցե՝ միջանձնային շփման հախուռն (ինչ-որ տեղ նաև պատահականորեն և հանկարծակի) առաջացող և տարածվող կապուղիների վրա: Դրանք կարող են լինել մարդկային հսկայական զանգվածների վարքագիծն էապես փոխելու ունակ լուրերը, գաղափարական կրոնական և գիտական հայեցակարգերը, որոշակի ընտրություն անցած փաստերի տարածումը, անկանոն (դժվար վերահսկելի) շփումը սոցցանցերում և այլն [2, стр. 35-36]:

Համազգային մակարդակում անկառուցվածքային ղեկավարման մեխանիզմը կարող է արձակվել ԶԼՄ, լուսավորության, մշակույթի, կրթության, արվեստի մարմինների համակարգչային ցանցի, լրատվական գործակալության, շոու-բիզնեսի կառույցի, կրոնական կազմակերպության և այլնի միջոցով: Ի դեպ, դրանք կարող են չափազանց բարձր արդյունավետություն ունենալ: Ընդհուպ մինչև տարբեր հանրությունների կողմից պարզ և ընկալելի դառնալը, ինչպես, օրինակ, Արաբական գարունից (2011թ.) հետո Եգիպտոսում տեղի ունեցած իշխանափոխության մասին հայերենում տարածում ստացած «Մուբարաքին ֆեյսբուքեցին» արտահայտությունը, որն ակնարկում է այս երկրի նախագահ Հոսնի Մուբարաքին իշխանությունից գցելու գործում սոցցանցերով տարածվող լուրերի ունեցած նկատելի դերի մասին:

Տվյալ պարագայում խոսքը միայն իշխանափոխության մասին չէ, այլև դրան նախորդած տարիների, եթե ոչ՝ տասնամյակների քայքայիչ ազդեցությունների: Երբ պարարտ հողը ձևավորված է, նույնիսկ չգիտակցելով՝ բոլորը «սպասում» են ազդակին, որը կարող է «տրվել» քայքայիչ գործու-

նեության տրամաբանական ավարտից անմիջապես հետո կամ ամիսներ և տարիներ անց: Վերջին պարագան էլ ավելի արդյունավետ է դարձնում կատարվածը, քանի որ ժամանակի ընթացքում ներքին պառակտիչ գործունեությունը հասցնում է արդյունք տալ:

ԿԶ կիրառման մոդելները տարբեր են

ԿԶ կիրառման ամենատարածված մոդելը «ուղեղների շրջանառության» վրա ուղղորդված ազդեցությունն է [3]: Զարգացող երկրներում շրջանառությունը հաճախ ձախողվում է և հանգում «ուղեղների արտահոսքի»: Մտավոր ներուժը կազմող և իրապես օժտված ակնառու գիտնականները տարբեր ճանապարհներով հեռացվում են պետությունից, որը թուլացնում է թիրախ-պետության ներուժը: Դրանից հետո (սովորաբար՝ դրան զուգընթաց) հակառակորդի հանրության շրջանում ստեղծվում է մտահոգիչ հարցերի պատասխաններն արտասահմանում փնտրելու մղում, որը միջին կարգի գիտնականների արտահոսքի պատճառով ավելի է սաստկացնում իրավիճակը: Թիրախ-պետությունը վերածվում է հակամարտության բոլոր տեսակների համար պատրաստված ինքնատիպ նախադաշտի:

Ապակառուցողական *ՆԿՏ* կիրառման տարածված տարբերակներից է պետությունում մնացածների հետ «տարվող աշխատանքը», երբ աջակցություն են ստանում մեծ հավակնություններ ունեցող, բայց մտավոր (կամ՝ այլ) ունակություններից (հմտություններից կամ կարողություններից) զուրկ գործիչները: Նրանց ծառայողական առաջընթացին նպաստելը միտված է լինում հետագայում այդ անձեռնհաս ղեկավարների ենթակայության տակ հնարավորինս շատ մարդկանց ներգրավելուն:

Հարցն այն է, որ քչերս ենք ունակ առողջ ինքնաքննադատության և, եթե իրադարձությունները զարգանում են մեզ համար նպաստավոր հունով, դրանք փոխելու համարձակություն գրեթե երբեք չենք ունենում: Մինչդեռ, պետության դեմ ԿԶ կիրառման գործընթացը կարող է մի քանի տարի, նույնիսկ 1-2 և ավելի տասնամյակ տևել: Ի դեպ, ակտիվ փուլին կարող է նախորդած լինել պասիվը, որի ընթացքում դեռևս դպրոցում կամ բուհում սովորելիս դեռահասին (պատանուն) ներշնչվում են իր բացառիկ օժտվածության մասին կանխակալ տեսակետներ: Այս ճանապարհով «պատրաստված» երիտասարդը, տարիներ անց, կամ սկսում է կիրառվել իր շրջապատը քայքայելու նպատակով, կամ նրա թեկնածությունը մի կողմ է նետվում և ձևավորվում է հերթական «կյանքից դժգոհը», որը բոլորին անընդհատ կրկնում է, թե ինչպես են իր հանդեպ անարդարացիորեն վարվում:

Անհիմն հավակնություններ ունեցող երիտասարդի առաջխաղացմանը նպաստելը սովորաբար կատարվում է հետևյալ հերթականությամբ.

1. Մանկության ընկերներից կամ մտերիմ բարեկամներից մեկն ընթրիքի ժամանակ երիտասարդ, անփորձ, սակայն *մեծ հավակնություններ ունեցող* պետական պաշտոնյային (սպային, քաղաքական գործչին և այլն) ակնարկում է, որ նրա «իրական» առաջընթացի ժամանակն է: Սա չի կարող ցանկալի արդյունք չտալ, մանավանդ երբ նա մի քիչ գինովցած է և իրականությունը չի կարող սթափ ընկալել: Ընդ որում, պարտադիր չէ, որ *զրուցակիցը ՆԳՏ*-ն իրականացնողը լինի կամ կռահի, որ ինքը մեկ այլ խորամանկման զոհ է դարձել: Որոշ ժամանակ առաջ նրա հետ ևս կարող է համանման թեմայով զրույց տեղի ունեցած լինել: Մասնավորապես, երիտասարդին ճանաչող մեկը կարող էր այս մասին հարցրած լինել, օրինակ՝ նշելով, որ երիտասարդը շատ հեռանկարային է, բայց նրան «տեղից շարժող» (քայլ կատարելուն օգնող) է պետք: Զրուցակցին ընդամենը պետք է տրամադրել, որ նա կարող է «տեղից շարժողը» լինել, և որոշելով, որ բարի գործ է անում՝ նա երիտասարդին կհայտնի այս մտահոգությունը՝ այն որպես իր գլխում ծագած միտք ներկայացնելով:

2. Եթե երիտասարդը մերժում է մեկ այլ պաշտոնյայի կաշառելու կամ նրա հետ իր ապագայի մասին այլ կերպ զրուցելու գայթակղիչ առաջարկը, որը հազվադեպ է լինում, ապա ընտրվում են ուրիշ թեկնածուներ: Նոր երիտասարդներին գրեթե նույն ձևով առաջարկներ են արվում, մինչև որ նրանցից մեկը համաձայնում է: Իսկ եթե մերժումը կտրուկ չէր եղել և առաջին երիտասարդն ընդամենը երկմտանքի մեջ է ընկել կամ թուլակամ լինելու պատճառով ինքնուրույն կերպով չի համարձակվում պատասխանատու քայլի դիմել, ապա զրույցը կարծես թողնվում է կիսատ և դրան զրուցակիցն անդրադառնում է մի քանի ամիս անց՝ մեկ այլ պատեհ առիթով կազմակերպված հավաքույթի ժամանակ:

Կարծես չիմանալով եղելությունը՝ զրուցակիցը հետաքրքրվում է, թե արդյոք երիտասարդը հետևել է իր խորհրդին: Եթե զրուցակիցը չպետք է իմանա իրողությունը, ապա նոր զրույցից որոշ ժամանակ առաջ նույն մարդը (*ՆԳՏ*-ն իրականացնողը) կրկին զրուցակցին «հիշեցնում» է երիտասարդի մասին, իբրև թե պատահաբար, հետաքրքրվելով՝ մի՞թե չեղավ մեկը, որը երիտասարդի հետ նրա ապագայի մասին զրուցած լինի:

3. Ղեկավարին, որից կախված է տվյալ առաջխաղացումը, վստահելի մարդու միջոցով փոխանցվում է ակնկալվող գումարը և ակնարկվում, որ եթե երիտասարդը նրան դիմի՝ ընդառաջի խնդրանքին: Բացատրվում է, որ երիտասարդի կողմից տրված լրացուցիչ կաշառքը նա կկարողանա տնօրի-

նել իբրև լրավճար: Այնպես որ, ղեկավարին դիմելու պահին նա «խնդրանքին» ընդառաջելու համար պատրաստված է լինում: Առավել ևս, եթե երիտասարդը կաշառք է առաջարկում, որը փաստացի կրկնակի է ստացվում:

Դրանով միաժամանակ մի քանի հարց է լուծվում: Նախ՝ լուծվում է երիտասարդի պաշտոնեական առաջխաղացման խնդիրը, ընդ որում, նա համոզում է, որ առանց կաշառքի խնդիրը լուծելն անհնար կլիներ: Բարձրաստիճան պաշտոնյան դյուրին փողեր ձեռք գցելու «փորձ» է ձեռք բերում, այսինքն՝ վերածվում է կաշառակերի: Ամեն անգամ, իր պաշտոնը բարձրացնելուց հետո, մյուս արժանավորներին առաջ քաշելու փոխարեն՝ որոշակի փոխհատուցման ակնկալիքով, ղեկավարը միշտ «օգնում» է այս երիտասարդին հերթական պաշտոնը ստանալ, և տարիների ընթացքում բոլորը սկսում են վերջինիս ընկալել որպես նրա «մարդը»:

4. Տարիներ անց երիտասարդն ինքն է վերածվում բարձրաստիճան պաշտոնյայի: Նա դավաճան, առավել ևս՝ այլ պետության գործակալ չէ և չի կռահում, որ իր միջոցով մթին հարցեր են լուծվում, սակայն գրեթե չի տիրապետում իր գործին և չի կարողանում ենթակաների աշխատանքը ճիշտ կազմակերպել: *ՆԿՏ*-ի միջոցով նախկին երիտասարդի ենթակայության տակ հայտնված բնագավառը դատապարտվում է անարդյունավետ (ցածր արդյունավետությամբ) աշխատանքի: Կարևոր է նաև, որ գործընկերներն անարժան թեկնածուի հերթական առաջխաղացումն ընկալում են որպես պետական ամբողջ համակարգի անկատարության ապացույց, թեև խոսքն ընդամենը մի քանի կաշառակեր պաշտոնյաների մասին է:

Անհամեմատ ավելի արագ է «լուծվում» պաշտոնատար անձի որդու (քեռորդու կամ այլ բարեկամի) պաշտոնեական առաջխաղացման խնդիրը, քանի որ այս դեպքում, հովանավորյալի մասին հոգալով պաշտոնյան սկսում է կատարել այն գործը, ինչը հնարավոր վտանգներից զգուշանալով պետք է արվեր *ՆԿՏ* իրականացման ժամանակ: Այս դեպքում վտանգներն ավելի քիչ են, իսկ աջակցությունը ցույց է տրվում հովանավորությունը ստանձնածին, որպեսզի նա շարունակի գործավարել և կարողանա իր ապաշնորհ հովանավորյալին հուսալիորեն աջակցել:

Դրա համար «անհրաժեշտ պահին» քարոզչություն են ապահովում ինչ-որ կերպ (տարիներ առաջ բոլորովին այլ առիթով կաշառված, վախեցված և այլն) *ՆԿՏ* շրջանակներում հայտնված լրագրողները: Ի դեպ, լրագրողը ևս կարող է չիմանալ *ՆԿՏ*-ի մասին: Անհրաժեշտ պահին նա ուղարկվում է պաշտոնյայից հարցազրույց վերցնելու և ոչինչ չկասկածելով՝ իր հարցերն է ուղղում նրան: Վերջինս էլ պարտաճանաչ կերպով պատասխանում է դրանց: Արդյունքում՝ պաշտոնյայի մասին մամուլում ավելի հաճախ

է խոսվում, և նա պարբերաբար անուղղակիորեն գովազդվում է: Բացառված չէ, որ նա արժանիորեն է հասել իր պաշտոնին: Այս դեպքում ձևավորվում է հերթական «անխորտակելի» պաշտոնյայի կերպարը: Նույնիսկ ցանկության դեպքում պաշտոնյան չի կարող կասկածել, որ տարբեր լրատվամիջոցների կողմից կասկածելի հաճախականությամբ իր հանդեպ ցուցաբերվող ուշադրության հետևում ինչ-որ մարդիկ են կանգնած, որոնք որոշել են տարիներ անց իր որդու միջոցով թուլացնել պետության (բանակի, քաղաքական կուսակցության կամ այլ կառույցի) հիմքերը:

Այսպես, մի քանի հանգուցային պաշտոններում անձեռնհաս երիտասարդների նշանակելուն աջակցելով՝ տարիներ անց կարելի է կաթվածահար անել պետությունների կառավարման համակարգերը, վարկաբեկել կուսակցություններ, իջեցնել զինված ուժերի կարգապահությունը և այլն:

Մեզանում ևս ապակառուցողական ՆԿՏ-ների օրինակները քիչ չեն: Բերենք դրանցից մեկը:

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին և, մանավանդ, 1990-ական թթ. *ՆԿՏ*-ների իրականացման արդյունք էր այն պարարտ հողը, որը ձևավորվեց Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) վարկաբեկման հարցում: ԻԻՀ միջուկային ծրագրի դեմ պայքարում համախմբվեց ողջ աշխարհը: Այդ պետության հարևան ՀՀ-ն չէր կարող դուրս մնալ այս ծիրից, սակայն այս պայքարը տարօրինակ դրսևորումներ ստացավ, որի հետևում *ՆԿՏ* կիրառումը չտեսնելն անհնար է: Հարցն այն է, որ ժամանակակից ԻԻՀ և, մասնավորապես, վերջինիս միջուկային ծրագրի մասին «մոռացվեց»:

Քանի որ ՀՀ անկախության հռչակմանը (1991թ.) հաջորդած տարիներին և հատկապես Արցախյան գոյամարտի ակտիվ փուլի ընթացքում (մինչև 1994թ. մայիս) ԻԻՀ հավասարակշիռ չեզոք դիրքորոշումը գրեթե անթերի էր՝ ընտրվեց հարևանին *անուղղակիորեն* վարկաբեկելու և նրան մռայլ գույներով ներկայացնելու մեկ այլ օրինակ: Կասկածելի արագությամբ այն գտնվեց. 450-451թթ. Վարդանանց պատերազմը, որը հայ հասարակության լայն խավերի համար պատմության առավել հայտնի օրինակներից էր:

Այս դարաշրջանի ռազմական և քաղաքական գործիչների վարկաբեկումն այն աստիճանի սպառնալից բնույթ ստացավ, որ ենթագիտակցական մակարդակում, որպես ազգային անվտանգության սպառնալիք էր ընկալվում շատերի, նույնիսկ *ՆԿՏ* կիրառումը չկասկածողների կողմից: Եվ երբ 2009թ. հայկական հեռուստատեսություններից մեկի պատվերով համացանցում հրապարակվեց բոլոր ժամանակների ամենանշանավոր հայազգի գործիչների ցանկը՝ համաժողովրդական քվեարկության արդյունքում հակապարսկական պայքարի առաջնորդներից մեկը՝ սպարապետ Վարդան

Մամիկոնյանը, երկրորդ տեղը զբաղեցրեց: Կա կարծիք, ըստ որի՝ դրանով հանրությունը փորձում էր բարձրաձայնել եկեղեցու կողմից սրբացված և ժողովրդի սիրելի սպարապետի կերպարի աղավաղման հիմնահարցը[1]: Դժվար է ասել, թե դա որքանով էական նշանակություն է ունեցել քվեարկության ընթացքում, սակայն այն փաստը, որ նա առաջ էր անցել նույնիսկ Տիգրան Բ Մեծից[2] և Մեսրոպ Մաշտոցից[3], ինքնին խոսուն է:

Մեր հանրության շրջանում *ՆԿՏ* կիրառման օգտին են խոսում նոր տեսակետն ամեն կերպ հանրամատչելի դարձնելու, ժամանակակից ԻԻՀ-ի և նրա միջուկային ծրագրի մասին չհիշատակելով *թշնամի պարսիկի* կերպարն ամրապնդելու տենդագին փորձերը: Այսպես, առաջ քաշվեց հայ-պարսկական *դարավոր գերարժանահեղ* հակամարտության տեսակետը, ըստ որի՝ միայն Ավարայրի ճակատամարտում (451թ. մայիսի 26) պարսիկների կորուստները կազմել են մոտ 105 հազար: Միտքը չմնաց օդում և արագ արտացոլվեց 9-րդ դասարանցիների համար նախատեսված «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասագրքի [4] մի շարք այլ «պատահական» բացթողումների շարքում: *ՆԿՏ* կիրառման օգտին է խոսում այն փաստը, որ զուգահեռաբար բազմաթիվ հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ ու հարցազրուցներ հեռարձակվեցին, որոնց նպատակն էր առաջ քաշված տեսակետների (բնավ ո՛չ մեկ ճակատամարտի) հանրահռչակումը:

Հետագայում իրավիճակը փոխվեց: Վերացվեցին ԻԻՀ-ի դեմ կիրառվող պատժամիջոցները, իսկ Վարդանանց սուրբ նահատակների (1036 հոգի) հիշատակն այսօր այդքան էլ վտանգված չի թվում: Սակայն *ՆԿՏ* հաջող կիրառումը, իսկ հետագայում՝ կրկնության փորձերը, բացառել չի կարելի:

Չենք պնդում, թե այս *ՆԿՏ*-ն մեր հոգևոր-դաստիարակչական անվտանգության գործում ամենամեծ ավերածություններ գործածն է և շատերս դրանց կիրառման ավելի նշանակալի օրինակներ կարող ենք բերել:

---

[1] https://www.akumb.am/showthread.php/54027-%C2%AB%D5%84%D5%A5%D5%B6%D6%84-%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%A5%D5%B6%D6%84%C2%BB-%D5%80%D5%A1%D5%B5TV

[2] Ք.ա. 140-55թթ., գահակալել է է Ք.ա. 95-55թթ.: Իրականացրել է վերջին շրջանի ամենամեծածավալ նվաճումների քաղաքականություն, որը հայ ժողովրդի հավաքական հիշողության մեջ մնացել է «Ծովից ծով Հայաստան» բանաձևումով:

[3] Մոտ 360-440թթ.: Հայության գոյապայքարի հաջողության կռվաններից մեկը համարվող հայոց գրերի գյուտը Մաշտոցին միշտ վերկուսակցական է դարձրել, իսկ եկեղեցին և ժողովուրդը սրբացրել են նրան:

ԿԶ կիրառելու և դրանից արդյունավետորեն պաշտպանվելու հիմնահարցը մեր օրերում

Կենսունակ կազմակերպական միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ է համապատասխան կազմակերպական մեխանիզմի ստեղծում: Ղեկավարման համար կազմակերպական մեխանիզմի հասկացությունը ձևակերպել է Վ.Ն. Բուրկովը [5]: Այն մեզանում հայտնի է առնվազն 1980-ական թթ. սկզբից: Անկառուցվածքային ղեկավարման կապուղիների առկայությունը և սոցիալական միջավայրերում խմբային (վերանձնային) հոգեբանական գործոնի հաշվառումը պահանջում են կազմակերպական մեխանիզմի նպատակների և եղանակների առանձին դրույթների վերանայում: Բայց քանի որ դա մեր հետազոտության շրջանակներից դուրս է, սահմանափակվենք վերանայման անհրաժեշտության արձանագրումով:

Մեզ տվյալ պարագայում հետաքրքրում է բաց համակարգերի տեսության այն դրույթը, որ անընդհատ տեղի է ունենում ԿՀ-ների փոխազդեցություն արտաքին շրջապատի հետ, որի արդյունքում ընթանում է արտաքին և ներքին կազմակերպական միջավայրերի փոխադարձ հարմարեցում: Դրանց արդյունքում ձևավորվում է կենսունակ կազմակերպական միջավայր, և ԿՀ-ն հանգում է փոխհամաձայնեցման գործընթացի ղեկավարմանը, իսկ կազմակերպական մեխանիզմի հիմնական խնդիրն է երկու փոխազդող միջավայրերի միջև որոշակի համապատասխանությունների պահպանումը [2, стр. 36-37]:

Հարցն այն է, որ ԿԶ զարգացման ժամանակակից մակարդակը որոշակի համակարգային գործողությունների արդյունքում թույլ է տալիս պատերազմի ճակատը միջազգային (ազգամիջյան) հարթությունից տեղափոխել ներպետականի (ներազգայինի): ԿԶ ապակառուցողական միջոցներն այն ամենն են, ինչը կարելի է օգտագործել դանդաղորեն ընթացող ապակառուցողական գործընթացների ձևավորման համար: Վերջիններս իրենց ի հայտ գալով հյուծում են հակառակորդի ռեսուրսները, նրան մշտապես ստիպում են ծախսել միջոցներ, որոնք անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական աճի և զարգացման, ինչպես նաև հստակ չգիտակցվող, սակայն փոխադարձ պայմանավորվող «կազմակերպական հիվանդությունների» վերացման համար:

Հակառակորդի ԿՀ-ի վրա ազդեցությունները կարելի է ստորաբաժանել ըստ դրանցով պայմանավորված փոփոխությունների խորության և արագության, ինչպես նաև դրանց ազդեցության երկարատևության: Մասնավորապես, մի բևեռում կլինի հակառակորդի կազմակերպական միջա-

վայրի համակարգաստեղծ տարրերի ֆիզիկական ոչնչացմանը նպատակամղված ուժային ազդեցությունը (այդ թվում՝ նյութական զենքը), իսկ մյուսում՝ գաղափարական, հոգևոր և պրոպագանդիստական ազդեցությունը, որը բնութագրվում է սոցիալական ծրագրավորման զգալի երկարատևությամբ: Այսպես, ֆիզիկական պատժի սպառնալիքների հոգեբանական ընկալումն ամենաբարձր արդյունավետությունն ունի, սակայն այն պահանջում է դրանց անխուսափելիության մշտական հաստատում: Ֆիզիկական ոչնչացումը կարող է համարվել կազմակերպական ազդեցության ամենակտրուկ եղանակը, որը ստալինյան ոգուն համապատասխան հնչում է «չկա մարդը, չկա խնդիրը» ձևով:

Ազդեցության հոգևոր-դաստիարակչական միջոցներն ակտիվորեն կիրառվում են անձի կայացման փուլում, և դրանց արդյունքները շոշափելի են դառնում կյանքի ընթացքում: Անձի, հասարակության և պետության հոգևոր-բարոյական հիմքը կազմող արժեքային, նորմերի և իդեաների համակարգերի ձևավորումն ընթանում է գերազանցապես անկառուցվածքային ղեկավարման շրջանակներում: Դա նշանակում է, որ ԿՀ-ում իրական իշխանությունը պատկանում է նրան, ով տիրապետում է տեղեկատվական-հոգեբանական ազդեցության միջոցներին: Դրանց ակտիվ վերահսկողությունից խուսափելով՝ պետությունը կոլեկտիվ և անհատական հոգեբանությունը վերածում է անզիջում պայքարի մրցասպարեզի, որտեղ խոցման գլխավոր թիրախն ազգային մշակույթն ու ինքնագիտակցությունն են, այսինքն՝ ազգի ներկան և ապագան:

Պետք է նշել, որ ԿԶ արդյունավետությունն աճում է այն ժամանակ, երբ հակառակորդն ընդունում է կազմակերպական փոփոխությունների անհրաժեշտությունը, քանի որ այս ընթացքում նվազում է մի շարք պաշտպանական մեխանիզմների ազդեցությունը, որոնք ապահովում էին ԿՀ հասարակական-քաղաքական և ռազմավարական կայունությունը դժվարին իրադրությունում: Ըստ այդմ, ծագող անկայուն հավասարակշռության իրավիճակը բնութագրվում է նրանով, որ աննշան գրգռող ազդեցությունները կարող են առաջ բերել ավերիչ հետևանքներով էվոլյուցիոն գործընթացներ, քանի որ աստիճանական անկումը (անհիմն պարզեցումը) այսրոպեական հետաքրքրությունների առումով ավելի հրապուրիչ է լինում, քան երկարատև ու տքնաջան ստեղծագործ գործունեությունը:

Անկասելի թվացող և ավերիչ հետևանքներ ունեցող միտումները կարող են հանգեցնել «հոգեբանական արժեզրկման», որը կապված է լինում ցանկացած գնով ապագայի համար պատասխանատվության ընկճող զգացման, բարոյական արժեքներից ազատվելու, կազմալուծված ամբոխի վե-

բածվելու հետ, իսկ ազատ արձակվող հոգեբանական էներգիան ուղղվում է շրջապատի ոչնչացմանը: Հասարակական-կազմակերպական վերափոխումներ ապրող[1] մեր պետության իրավիճակի բարդությունը և խոցելիությունը չափազանց արդիական են դարձնում կենսունակ կազմակերպական միջավայրերի սինթեզի հետ կապված հետազոտությունները, ինչպես նաև տարբեր նշանակության ղեկավարման համակարգերի արդյունավետության բարձրացումը: Իսկ արցախա-ադրբեջանական հակամարտության գծում 2014թ. ամռանը և 2016թ. ապրիլին արձանագրված սրացումները հուշում են, որ կարևոր նշանակություն են ձեռք բերում նաև զինված ուժերի հայեցակարգային բարեփոխումը (փոքր ուժերով մեծ խնդիրների լուծման սկզբունք, ազգ-բանակ հայեցակարգ և այլն), դրանց հագեցումը ժամանակակից պաշտպանական միջոցներով, զորքերի մարտունակության բարձրացումը և նորօրյա մարտահրավերներին դիմակայելու կարողությունների (կենսունակության) բարձրացումը: Հետևաբար, այս գործում նյութականը ոչ միայն չի հակադրվում աննյութականին (հոգևոր-դաստիարակչականին), այլև գալիս է լրացնելու դրան:

Այս լույսի ներքո, արձանագրենք միայն, որ *ՆԿՏ*-ները մեկ կամ երկու ամսում արմատավորվող իրողություններ չեն: Մերօրյա մարտահրավերներին դիմակայելուն նպատակամղված և ունեցածով չբավարարվող հանրության ձևավորումը, որը ՀՀ-ում պետք է սկսված լիներ դեռևս 1990-ական թթ., անհրաժեշտ է կյանքի կոչել ոչ ուշ, քան այսօր: Անհրաժեշտ է գիտակցել, որ վաղը դրա հնարավորությունը կարող ենք չունենալ:

ՆԿՏ-ներին հակազդեցության տեսանկյունից, ավելի ճիշտ, կառուցողական *ՆԿՏ* կյանքի կոչելու համար սկզբունքային նշանակություն ունի գործուն պետական համակարգի ձևավորումը: Դա անհամեմատ արդյունավետ է դարձնում պետությանը կամ հասարակությանը նետվող մարտահրավերներին դիմակայելու գործընթացի կազմակերպումը: Հատկանշական է, որ պետական համապատասխան կառույցների կողմից խնդրի կարևորության գիտակցման դեպքում նմանատիպ ծրագրեր կյանքի կոչելը երբեմն կապված չէ մեծ ֆինանսների հետ, մինչդեռ *կտրուկ* մեծացնում է հասարակության պաշտպանվածության աստիճանը: Չավարտված պատերազմի պայմաններում ապրող և նորանոր հարվածների դիմակայող մեր հանրության համար խնդիրը *սկզբունքային է,* և հիմքեր չկան պնդելու, որ մոտ ապագայում փոխվելու միտում կունենա:

[1] Չպետք է կարծել, թե դա միայն սահմանադրական վերջին բարեփոխումներով է պայմանավորված:

Հարցն այն է, որ ՆԿՏ-ների անդրադարձումը կամ դրանց կործանարար հետևանքների չեզոքացումը, որպես կանոն, բարդ և հակասական է, որում մեծ է պետական մարմինների փոխգործակցելու կարողությունը: Պետք է գիտակցել, որ առճակատման այս տեսակը երբեք բացահայտ չի լինում, և դրա ընթացքում երկու կողմերն էլ գործում են կուլիսների հետևից: ՆԿՏ-ն իրականացնողը գործում է «Եթե ուզում ես «Ա», ապա խնդրիր «Բ» սկզբունքով և երբեք, նույնիսկ իբրև լեզվի սայթաքում, չի բարձրաձայնում իր իրական նպատակը: Այլապես ՆԿՏ-ն կդադարի ԿԶ մաս լինել: Իրական նպատակի հիշատակումն անգամ կարող է դրա արդյունավետությունն այնքան զցել, որ շարունակումն ուղղակի անիմաստ դառնա:

Արդյունավետ և փոխկապակցված պետական (տնտեսական, ֆինանսական և այլ) կառույցներն այս դեպքում նպաստում են միմյանց աշխատանքին: Միայն դրանով է ձեռք բերվում անհրաժեշտ սիներգետիկ էֆեկտը: Իրենց նեղ գերատեսչական շահերն առաջ մղող պետական վարչությունները, տնտեսական և ֆինանսական կազմակերպություններն ու այլ կառույցները միայն ժամանակավոր և թվացյալ հաջողությունների են հասնում, որն ընդամենը երկարաձգում է գործընթացը:

Մինչդեռ, ՆԿՏ-ն հասարակությունը ներսից քայքայելուն միտված միջոցառումների շղթա է, որի օղակները կարող են գործել իրարից անկախ և ընդհանրության արտաքուստ նշաններ չպարունակել: Դրանք փոխլրացնում են իրար, և, որպես կանոն, դրանցից մեկի կամ մի քանիսի դեմ կազմակերպվող հաջող պայքարը հաճախ սպասված արդյունքը չի տալիս: Ճիշտ մշակված և իրականացվող ՆԿՏ շղթայի առանձին օղակների դեմ պայքարը գլխավոր խնդրից ուշադրությունը շեղում է՝ թույլ չտալով միասնական մոդելի շրջանակներում ընկալել տեղի ունեցողը:

Այդ գործում մեծ է ԶԼՄ դերը: Մասնավոր բացթողումը նկատած լրագրողը, հարցն ամբողջ խորությամբ չընկալելով, սենսացիայի հետևից ընկնելով կարող է այնպիսի անտեղի աղմուկ բարձրացնել, որ արդարացի ցասումով լցված բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, պետական գերատեսչություններ և հազարավոր անհատ քաղաքացիներ կհետևեն նրան: Ընդ որում, կա ավելի վատ տարբերակ. բացառված չէ, որ տվյալ հարցը «բացահայտեցնելը» ՆԿՏ մաս է կազմում և հանրության ուշադրությունն իրական խնդրից շեղելու նպատակ ունի:

Հետևաբար, ՆԿՏ-ները բացահայտելու ունակ վերլուծական («ուղեղային») կենտրոնների ձևավորումը ոչ միայն հնարավորություն է տալիս տեսնել խնդիրները, այլև դրանց լուծման միջնաժամկետ (եթե հնարավորություն կա՝ երկարաժամկետ) ծրագրեր մշակել: Այս դեպքում, յուրաքան-

չյուր գերատեսչության (այլ կառույցի) վերլուծական կենտրոն, իրեն տեսանելի կամ իր դեմ ծառացած խնդիր (շղթայի օղակ) վեր հանելով, կարող է նպաստել դրանք մեկ ամբողջության մեջ տեսնելու և ամբողջ շղթայի դեմ ընդհանուր պայքար սկսելու գործին:

Դեկտեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Зенгер Х. фон,* Стратагемы. О китайском искусстве жить и выживать, т. 2, М., 2004.
2. *Ловцов Д.А., Сергеев Н.А.,* О проблеме «организационного оружия», Военная мысль, N1, 1999, стр. 35.
3. *Կ.Վերանյան,* Մարդկային և մտավոր կապիտալ հասկացությունների շուրջ, 21-րդ ԴԱՐ, 3, 2017, էջ 38-50:
4. Նախնական զինվորական պատրաստություն, 9-րդ դասարանի դասագիրք, Եր., 2009:
5. *Бурков В.Н., Кондратьев В.В.,* Механизмы формирования организационных систем, М., 1981.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սուրեն Մարտիկյան

Ամփոփագիր

Գրեթե միշտ, իսկ վերջին ժամանակներս հատկապես, նախքան հակամարտությունը սկսելը հակառակորդին ներսից թուլացնելն իրականացվում է հակառակորդի վրա հետախուզական, պրոպագանդիստական, հոգեբանական, տեղեկատվական և այլ ազդեցության (այսպես կոչված «կազմակերպական զենքի») կիրառումով, որը համաձայնեցված է լինում նպատակներով, տեղով ու ժամանակով: Այս համակարգը հակառակորդին հարկադրում է շարժվել ակտիվ կողմի համար ձեռնտու հունով:

Կազմակերպական զենքի հիմքն են կազմում կազմակերպական ղեկավարման հատուկ ռեֆլեքսային տեխնոլոգիաները կամ նոր կազմակերպական տեխնոլոգիաները (ՆԿՏ): Հոդվածում ուշադրության են արժանացել դրանց առավել հաճախ կիրառվող մոդելները և դրանցից պաշտպանվելու հիմնահարցը:

ВОКРУГ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИОННОГО ОРУЖИЯ И ЗАЩИТЫ ОТ НЕГО

Сурен Мартикян

Резюме

Зачастую, особенно в последнее время, еще до начала прямого противостояния проводится ослабление противника изнутри путем разведывательного, пропагандистского, морального, информационного и др. воздействия (так называемое «организационное оружие»), согласованное по целям, месту и времени. Эта система заставляет противника двигаться по выгодному для активной стороны руслу.

Основу организационного оружия составляют особые рефлексные технологии организационного управления или новые организационные технологии (НОТ). В статье рассматриваются наиболее часто применяемые модели НОТ и проблема защиты от них.

ON THE ISSUES OF ORGANIZATIONAL ARMS AND THE DEFENSE AGAINST THEM

Suren Martikyan

Resume

Before the outbreak of military conflict, almost always especially in recent times, investigative, propagandistic, psychological, informational and other ways of influence are used to weaken the opponent from inside (so-called "organizational weapon"). These are coordinated with purposes, place and time. This system forces the opponent to move favorably to the active party.

Specific reflex technologies of organizational management or new organizational technologies (NOT) are the basis of organizational weaponry. The article focuses on the most commonly used models and the defense against them.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դավիթ Հախվերդյան*

Բանալի բառեր՝ միջազգային ֆինանսական համակարգ, արժութային պահուստներ, միջազգային իրացվելիություն:

Վերջին տարիներին ԱՄՀ-ն իրականում խրախուսում էր կապիտալի հետ կապված գործառնությունների նկատմամբ սահմանափակումների ներմուծումն ու մակրոպրուդենտալ (համընդգրկուն) քաղաքականության ավելի ակտիվ միջոցառումները: Այս մոտեցումները կարող են օգնել վերացնել երկրորդային էֆեկտների[1] ազդեցությունը, թեև նրանցից յուրաքանչյուրն ունի նաև իր թերությունները: Օրինակ՝ կարգավորումը, կապիտալի հետ կապված գործառնությունների նկատմամբ սահմանափակումները և մակրոպրուդենտալ քաղաքականության միջոցառումները նույնպես ունեն իրենց թերությունները. դրանք հնարավոր է շրջանցել, ինչպես նաև դրանք կարող են հանգեցնել ազատ շուկաներում լուրջ աղավաղումների: Այդ միջոցառումները նաև ժամանակի ընթացքում կորցնում են իրենց արդյունավետությունը, թեև կարող է խելամիտ թվալ արժութային փոխարժեքի ճշգրտումների բեռի մեծ մասն իր վրա վերցնելու կանխադրույթը, սակայն արժույթի առքուվաճառքը կարող է երկար ժամանակ հեռացնել ազատ լողացող փոխարժեքը հավասարակշռության մակարդակից՝ հանգեցնելով տնտեսության մեջ բազմաթիվ ձախողումների: Այլ խոսքերով՝ «հրաշագործ» միջոցներ գոյություն չունեն:

Գոյություն ունեցող ֆինանսական «ոչ համակարգը» կապված չէ որևէ ուղենիշի հետ: Թեյլորի բանաձևի միջոցով հաշվարկների իրականացումը (առաջարկվել է տնտեսագետ Ջոն Թեյլորի կողմից՝ որոշելու համար, թե

* Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր:

[1] Երկրորդային էֆեկտը ներկայիս տնտեսության առևտրային և ֆինանսական կապերի արդյունքում մեկ երկրի կողմից ձեռնարկված միջոցառումների ազդեցությունն է մեկ այլ երկրի վրա:

որքան է անհրաժեշտ կենտրոնական բանկին փոփոխել տոկոսադրույքները՝ ի պատասխան գնաճային ճնշման) գործնականում ցույց է տալիս, որ 2002-2012թթ. գլոբալ դիրեկտիվ փոխարժեքն իրականում պարբերաբար ցածր է եղել այս կանոնով սահմանված մակարդակից [1, c. 46]: Այլ մոտեցումների կիրառումը ցույց է տալիս, որ 1997-ից սկսած՝ իրական ֆինանսական տոկոսադրույքի գլոբալ ցուցանիշները (գնաճի հաշվարկից հետո) ցածր էին ավելի երկարաժամկետ տոկոսադրույքների համանման ցուցանիշներից (տոկոսադրույքներ, որոնք կպահեին գնաճը ցածր մակարդակի վրա, իսկ արտադրության ծավալներն, ըստ ԱՄՀ գնահատականների՝ պոտենցիալ մակարդակի վրա): Ավելին, իրական ֆինանսական ու անվանական փոխարժեքների միջև տարբերությունը մեծացել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին նախորդող տարիներին: Ճգնաժամի սկսվելուց հետո կենտրոնական բանկերի կողմից կիրառված քայլերը միայն չնչին կերպով օգնեցին ֆինանսական կայունության վերականգնմանը, սակայն միաժամանակ նրանք մեծացրին կենտրոնական բանկերի հաշվեկշիռներն աննախադեպ մակարդակով: Եվ դեռևս պարզ չէ, թե ինչի կհանգեցնի այս ամենը ժամանակի ընթացքում:

Այսօր դրամավարկային քաղաքականությունը նախկինի պես ուղղված է տնտեսության ակտիվ խթանմանը: Սա հատկապես կարևոր է ԱՄՆ-ի համար, որը պետք է ծառայի որպես միջազգային արժութային համակարգի մնացորդների խարիսխ: Ընդ որում՝ Դաշնային պահուստային համակարգն իր քաղաքականության կիրառման ժամանակ պետք է առաջնորդվի բացառապես այն գաղափարով, թե ինչ հետևանքներ այն կունենա ԱՄՆ-ի համար: Սա խնդիր է հանդիսանում ոչ միայն երկրորդային ազդեցություններից տուժած երկրների համար, այլև կարող է վնաս հասցնել նաև հենց ԱՄՆ-ին: Աշխարհի բոլոր երկրներին, բացառությամբ ԱՄՆ-ի, ներկայում բաժին է ընկնում արտադրության ծավալների ավելի մեծ մասը, քան 20 տարի առաջ, այդ իսկ պատճառով աշխարհի տարբեր հատվածներում գտնվող երկրների խնդիրները կարող են անսպասելի կերպով վերադառնալ ԱՄՆ [1, c. 47]:

Հարցը հետևյալն է. ի՞նչ ցուցանիշներ ու ի՞նչ կշռային գործակիցներ է պետք կիրառել համընդհանուր հզորության (միաբևեռություն, բազմաբևեռություն և այլն) հաշվարկի ժամանակ: Եթե քաղաքագետները միասնական չեն, օրինակ, այն հարցում, թե ինչքանով են ռազմական գործոնները որոշում պետության համընդհանուր հզորությունը, ապա միջազգային ֆինանսներում իրավիճակն ավելի բարդ է: Արդյո՞ք պետք է հաշվի առնել

աշխարհի առաջատար արժույթների դերը ոսկեարժութային պաշարներում կամ համաշխարհային ֆինանսական շուկայի շրջանառության մեջ՝ որպես տվյալ արժույթների ազդեցիկության հիմնական ցուցանիշ: Արդյո՞ք պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ միջազգային առևտրի 80%-ն իրականացվում է ընդամենը 4 արժույթներով, որոնք ներառված են *SDR* զամբյուղի մեջ [2], իսկ, օրինակ, նավթի շուկայի համար ԱՄՆ դոլարի դերը որոշիչ է համարվում [3]:

Այս հարցի համար համեմատաբար ողջամիտ պատասխանն արժույթի ազդեցության բարդ գնահատականն է ըստ փողի յուրաքանչյուր գործառույթի (տե՛ս *Աղյուսակ 1*), սակայն այս դեպքում անպատասխան է մնում այն հարցը, թե ինչպես գնահատել փողի առանձին գործառույթների համեմատական կարևորությունը [4]:

Ըստ փողի յուրաքանչյուր գործառույթի՝ այս կամ այն արժույթի դերի գնահատման ժամանակ առաջանում են նաև տվյալների հավաքագրման գործնական դժվարություններ: Այսպես, առևտրի արժույթի ու ինտերվենցիաների արժույթի դեպքում տվյալներ գրեթե չկան: Ընկերությունները կարող են հաշիվները հրապարակել տարբեր արժույթներով, սակայն փաստացի ապրանքի գինը կարող է խիստ կապված լինել մեկ արժույթի փոխարժեքի հետ: Կենտրոնական բանկերի արժութային միջամտությունները, որոնք կապված են ազգային փոխարժեքի կառավարման հետ, որպես կանոն, փակ տեղեկություններ են, որոնց հրապարակումը կարող է ծառայել արժութային սպեկուլյանտների օգտին:

Աղյուսակ 1

Համաշխարհային արժույթի գործառույթները

Փողի գործառույթները			
Վերլուծության մակարդակ	**Շրջանառության միջոց**	**Վճարման միջոց**	**Խնայողության միջոց**
Մասնավոր	Միջազգային հաշվարկների արժույթ	Առևտրի արժույթ	Ներդրումների արժույթ
Պետական	Ինտերվենցիաների արժույթ	Արժութային խարիսխ	Պահուստային արժույթ

Աղբյուրը՝ Cohen B., Benney T., What does the international currency system really look like? // Review of International Political Economy, 2014, vol. 21, No. 5, p. 1020.

Արժույթի օգտագործումը որպես խարիսխ բավական բարդ է գնահատել, քանի որ մի շարք դեպքերում երկրները պաշտոնապես չեն տեղեկացնում այդ մասին, իսկ մի շարք այլ դեպքերում որպես խարիսխ օգտագործվում է մի քանի արժույթների զամբյուղ: Այն երկրների թվարկումը, որոնց արժույթը կապված է ԱՄՆ դոլարի (Չինաստան, Սաուդյան Արաբիա և այլն) կամ եվրոյի հետ (Անդորա, Վատիկան, Մոնակո և այլն), բավարար չէ, քանի որ այս երկրների տնտեսական հզորությունն անհամեմատելի է:

Փաստացիորեն, տվյալների հավաքագրումը հնարավոր է իրականացնել երեք մնացյալ ցուցանիշների միջոցով, սակայն տեղեկատվության ամբողջականությունը, որն, օրինակ, անհրաժեշտ է պահուստային արժույթի գնահատման համար (այսինքն՝ աշխարհի երկրների արժութային պահուստներում առանձին արժույթների մասնաբաժինը), բավարար չէ: «Պաշտոնական միջազգային պահուստների արժութային կառուցվածքը» ծրագրի շրջանակներում [5] ԱՄՀ-ի կողմից պարբերաբար հավաքագրվող տվյալները ներկայում ընդգրկում են 146 երկիր և տարածք, ընդ որում՝ երկրներից ու տարածքներից միայն 97-ն է հրապարակում փաստն այն մասին, որ նրանք տեղեկատվություն են տրամադրում, իսկ Չինաստանը դեռևս մասնակի տեղեկատվություն է տալիս: Հատկանշական է, որ ԱՄՀ-ն դադարեց արժութային պաշարների մասին տեղեկատվությունը տրամադրել երկրներն ըստ զարգացած ու զարգացողների խմբերի բաժանելու, քանի որ վերջիններում նկատվեց արժութային պահուստներում ԱՄՆ դոլարի և եվրոյի կրճատման ու միաժամանակ այլ արժույթների աճի միտում (տե՛ս *Աղյուսակ 2*):

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ դոլարի մասնաբաժինն այն երկրների արժութային պահուստներում, որոնց վիճակագրությունը ներկայացնում է ԱՄՀ-ն, վերջին տարիներին 64-68%-ի մակարդակում է պահպանվում, իսկ եվրոյինը՝ 18-22%, որը 2015թ. նվազագույն մակարդակում էր գտնվում, այն է՝ 18,28%: Այս ցուցանիշով միջազգային ֆինանսական համակարգը, անկասկած, համարվում է միաբևեռ:

Միջազգային հաշվարկների վերաբերյալ տվյալները որոշվում են միջազգային արժութային շուկայի ծավալների վերաբերյալ տվյալների հիման վրա, որը երեք տարին մեկ անգամ տրամադրում է Միջազգային հաշվարկների բանկը: Իհարկե, այս դեպքում հաշվի չի առնվում արժութային սպեկուլյացիաների մասնաբաժինը: Համեմատության համար նշենք, որ 2016թ. միջազգային արժութային շուկայում ԱՄՆ դոլարի մասնաբաժինը կազմել է 87,6%, եվրոյինը՝ 31,3%, իենինը՝ 21,6%: Բնականաբար, միջազգային արժութային շուկայում գերակշռում են ԱՄՆ դոլար/եվրո արժութային

զույգով կատարված գործարքները՝ ապահովելով 2016թ. բոլոր գործարքնե-րի 23%-ը, որին հետևում են ԱՄՆ դոլար/ճապոնական իեն արժութային զույգով կատարված գործարքները՝ 17,7% [6] (քանի որ հաշվի են առնվում արժութային զույգեր, այդ իսկ պատճառով կրկնահաշվարկ է տեղի ունենում, որից խուսափելու համար ստացված ցուցանիշները պետք է բաժանել երկուսի) [7, c. 46]:

Աղյուսակ 2

Զարգացող երկրների և աճող տնտեսությունների արժութային պահուստների կառուցվածքը (մլն)

	2010	2011	2012	2013	2014	2015
ԱՄՆ դոլար	1 432 952	1 520 245	1 677 434	1 703 356	2 234 773	2 181 110
Եվրո	669 517	695 374	656 694	657 747	660 274	588 886
Ֆունտ ստերլինգ	134 991	140 011	146 357	145 576	150 921	148 941
Ճապոնա-կան իեն	67 625	70 973	83 074	82 575	85 386	91 427
Ավստրալա-կան դոլար	-	-	48 889	58 449	53 966	51 166
Կանադա-կան դոլար	-	-	58 468	60 669	62 838	60 893
Շվեյցարա-կան ֆրանկ	1 426	1 732	4 378	3 494	2 468	2 018
Այլ արժույթներ	111 509	166 046	99 208	90 985	98 580	97 621

Աղբյուրը՝ Currency Composition of Foreign Exchange Reserves, IMF Data - http://data.imf.org/?sk=E6A5F467-C14B-4AA8-9F6D-5A09EC4E62A4&sid=1442948906947&ss=1408206195757

Ներդրումների համար արժույթների վերաբերյալ տվյալները կարելի է հաշվարկել երկու ցուցանիշի հիման վրա՝ միջազգային բանկային շուկա-յի (անդրսահմանային բանկային գործարքների վերաբերյալ տվյալներ), ինչպես նաև՝ պարտքային արժեթղթերի միջազգային շուկայի: Ըստ առա-ջին ցուցանիշի՝ ԱՄՆ դոլարի մասնաբաժինը եղել է 47.7%, իսկ եվրոյինը՝ 31.0%: Ըստ երկրորդ ցուցանիշի՝ ԱՄՆ դոլարով առաջադրված արժեթղթե-րի մասնաբաժինը եղել է 43.7%, իսկ եվրոյով՝ 35.1%[1]:

[1] BIS Statistics Warehouse http://stats.bis.org/bis-stats-tool/org.bis.stats.ui.StatsApplication/StatsApplication.html

Միավորենք բոլոր ստացված արդյունքները մեկ միասնական աղյուսակում (տե՛ս *Աղյուսակ 3*) և հաշվարկենք ԱՄՆ դոլարի ու եվրոյի ազդեցության միջին թվաբանական արժեքը:

Աղյուսակ 3

Միջազգային ֆինանսական համակարգում ԱՄՆ դոլարի և եվրոյի ազդեցության գնահատականը (%)

	Ֆինանսական ինստիտուտներ	Ֆինանսական գործիքներ	Արժեթղթեր	Արտարժույթներ	**Միջին**
ԱՄՆ դոլար	43.5	47.7	43.7	61.05	48.9
Եվրո	16.5	31.0	35.1	24.38	26.7

Կազմվել է հեղինակի կողմից՝ ԱՄՀ տվյալների հիման վրա:

Ըստ հոդվածում բերված չափանիշների՝ միջազգային ֆինանսական համակարգը եվրոգոտում խնդիրների աճի հետևանքով աստիճանաբար երկբևեռից դառնում է մոտավորապես միաբևեռ: Այսպիսով, ԱՄՆ դոլարի առաջատար դիրքի կորստի մասին խոսակցությունները ժամանակավրեպ են [7, c. 47]:

Ընդ որում, տվյալ ոլորտում ԱՄՆ-ի համար մրցակից է ոչ թե Չինաստանը կամ Հնդկաստանը, այլ Եվրամիությունը՝ որպես զարգացած և մրցունակ ֆինանսական ոլորտ ունեցող համակարգ: Եվրամիության կողմից ԱՄՆ-ի համար գլխավոր սպառնալիքը ԵՄ-ում համաեվրոպական պետական պարտքային արժեթղթերի միասնական էմիսիոն կենտրոնի ստեղծման հնարավորությունն է: Այդ դեպքում վտանգի տակ կդրվի ԱՄՆ դոլարի՝ որպես աշխարհի հիմնական պահուստային արժույթի, դերը և ԱՄՆ տնտեսությունը կհայտնվի աննախադեպ ճգնաժամի առջև:

Ներկայում ԱՄՆ դոլարի դերն անբեկանելի է (չնայած իրար հաջորդող ճգնաժամերին) հետևյալ պատճառով. ԱՄՆ-ը համարվում է աշխարհի միակ վստահելի արժեթղթերի՝ պետական զանձապետական պարտատոմսերի (*U.S. Treasuries*) խոշորամասշտաբ թողարկողը, և այդ պարտատոմսերն ամբողջ աշխարհի ներդրողների, այդ թվում՝ պետական ներդրողների (կենտրոնական բանկերի, անկախ հիմնադրամների և այլն) միջոցների համար ապահով «ապաստան» են համարվում:

Քանի որ այդ արժեթղթերը գնանշվում են ԱՄՆ դոլարով, այդ պատճառով էլ ԱՄՆ դոլարը մնում է որպես աշխարհի միակ պահուստային արժույթը: Եվրոն նման դեր չի խաղում, քանի որ այս արժույթը չունի ամերիկյան պետական արժեթղթերի համարժեքը, այն է՝ ԵՄ-ում բացակայում է արժեթղթերի միասնական էմիսիոն կենտրոնը (համաեվրոպական ֆինանսների նախարարությունը), իսկ ԵՄ առանձին երկրների, նույնիսկ առավել խոշոր երկրների (Գերմանիա, Ֆրանսիա) արժեթղթերը չեն կարողանում իրենց թողարկման ծավալով համաշխարհային շուկայում մրցակցել ամերիկյան գանձապետական պարտատոմսերի հետ [8]: Այդ իսկ պատճառով ԱՄՆ դոլարը մնում է աշխարհի միակ պահուստային արժույթը, թեև դոլարային ակտիվներում տեղաբաշխված համաշխարհային պահուստների տեսակարար կշիռը եվրոյի ճնշման ներքո վերջին տարիներին նվազել է (տե՛ս *Գծապատկեր 1*).

Գծապատկեր 1

Տարբեր արժույթներով գնանշված ակտիվներում տեղաբաշխված համաշխարհային պահուստների տեսակարար կշիռները 2000-2016թթ.(%)



Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ ԱՄՀ տվյալների հիման վրա. Currency Composition of Official Foreign Exchange Reserves (COFER)

Այսօր առկա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք նվիրված են ամբողջ աշխարհի կապիտալի ու վարկերի ընդհանուր ծավալների գլոբալ իրացվելիության չափմանը: Իհարկե, սա ողջունելի է, անհրաժեշտ է վերահսկել դրամական զանգվածի և վարկավորման ծավալների համաշխարհային աճը: Սակայն գոյություն չունեն հսկողության մեխանիզմներ, որոնք թույլ կտան զսպել կամ խթանել գլոբալ իրացվելիության աճը, եթե այն

դառնա անսահման կամ անբավարար: Որոշ մասնագետներ խոսում են միջազգային գործընթացների վրա կենտրոնացված մոնիթորինգի համակարգի ներդրման մասին՝ ազգային մակարդակով կիրառվող դրամավարկային քաղաքականության միջոցառումների ազդեցությունն այլ երկրների վրա գնահատելու համար: Սակայն նաև պետք է պարզել, թե արդյոք լավագույն տարբերակ չի լինի միջազգային արժութային համակարգի կանոնների հիման վրա գոյատևելը:

Ակնհայտ է, որ աշխարհում գոյություն չունեն ճգնաժամի առաջացման դեպքում միջազգային իրացվելիության բավարար աղբյուրներ: Այն ռեսուրսները, որոնք ունի ԱՄՀ-ն վճարային հաշվեկշռի խնդիրներին բախված երկրներին օգնելու համար, անբավարար են այն դեպքերում, երբ միաժամանակ մի քանի ոչ մեծ երկրներում նմանատիպ բարդություններ են առաջանում, կամ եթե նման բարդություններ առաջանում են մեկ խոշոր երկրում: Պետական հատվածի կողմից բավարար ֆինանսավորման բացակայության և մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորման դադարեցման պարագայում ներքին պահանջարկն այնքան կկրճատվի, որ արդյունքում ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդը կվերանա: Սակայն հաջորդ անկումը շատ ցավոտ կլինի, ինչպես ականատես եղանք 1990-ական թթ. վերջին Ինդոնեզիայում, երբ մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորման դադարեցումը հանգեցրեց տնտեսության փլուզմանն ու մեծ գնաճի: Խոր անկումների ավելի նոր օրինակներ են եվրոպական «ծայրամասի» մի քանի երկրների իրավիճակները, որոնց պատճառը միջազգային բանկերի կողմից վարկավորման դադարեցումն էր (հատկապես Եվրոպայի առաջատար երկրների բանկերի կողմից):

2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հենց սկզբում Դաշնային պահուստային համակարգը ստեղծեց, այսպես կոչված, սվոփ գծեր, որոնց միջոցով մի շարք երկրների տրամադրվում էր ԱՄՆ դոլար: Շատ եվրոպական բանկեր դոլարի իրացվելիության անբավարարություն զգացին, երբ ԱՄՆ ֆինանսավորման աղբյուրները (հատկապես ներդրումային հիմնադրամները, որոնք միջոցներ էին ներդնում կարճաժամկետ պարտավորություններում) փաստացի «ուժասպառ եղան»: Այնուամենայնիվ, սահմանափակ թվով երկրներ օգտվեցին այս «գծերից», սակայն դրանց ընտրության չափանիշները թափանցիկ չէին և սահմանվում էին Դաշնային պահուստային համակարգի, այլ ոչ թե միջազգային հանրության կողմից: Բացի այդ, սվոփ գծերը պետք է ժամանակավոր միջոցներ լինեին, սակայն 2013թ. հոկտեմբերին վերափոխվեցին մշտականի [1, c. 47]:

Եթե երկրները գտնում են, որ չեն կարող հույս դնել ԱՄՀ-ի վրա իրացվելիության համապատասխան աջակցություն ստանալու հարցում կամ ուզում են խուսափել ԱՄՀ-ի կողմից հովանավորվող ծրագրերի պայմանների ընդունումից, ապա զարմանալի չէ, որ նրանք ցանկանում են իրենց ապահովագրել պահուստների կուտակման միջոցով: Ցավոք, պահուստների կուտակումը հանգեցնում է ամրապնդվող արժույթների փոխարժեքի նվազեցմանը, որն էլ մեծացնում է գնաճի, անհավասարությունների խորացման ու հետագա ճգնաժամի առաջացման հավանականությունը: Ճգնաժամը, հավանաբար, կսպառնա զարգացող մի շարք խոշոր երկրների: Այլ խոսքերով՝ պահուստների կուտակումը մեծացնում է երկրի՝ ճգնաժամի դեմ պայքարելու հնարավորությունները, սակայն միաժամանակ նաև ճգնաժամը դարձնում է ավելի հավանական: Բացի այդ, երկրների մոտ ցանկություն է առաջանում օգտվել փոխադարձ օգնության տարածաշրջանային մեխանիզմներից, ինչպիսիք, օրինակ, տարածաշրջանի այլ կենտրոնական բանկերի կողմից երաշխավորված վարկային գծերն են: Նման տարածաշրջանային համաձայնագրերը, թեև որոշ հանգամանքներում օգտակար են լինում, կարող են նաև վերացնել համընդհանուր համերաշխության զգացումը: Նրանք կարող են հանգեցնել նաև օգնության պայմանների էական թուլացմանը (օրինակ՝ կարգավորման ոլորտում քաղաքականության միջոցառումների փոփոխությանը), որոնք սովորաբար սահմանում է ԱՄՀ-ն՝ տրամադրված օգնության դիմաց: Աշխարհում չարաշահումների ևս մեկ ռիսկի հայտնվելը դժվար թե գլոբալ մակարդակում լավագույն ելքը լինի:

Ի դեմս եվրոյի («ամրացված» համաեվրոպական արժեթղթերով), նոր, գլխավոր պահուստային արժույթի ի հայտ գալու հեռանկարը բավական լուրջ է, այդ պատճառով առաջիկա տարիներին ամերիկյան վարչակազմի գործունեությունն ուղղված կլինի համաեվրոպական նախագծի խոչընդոտմանը՝ նպատակ ունենալով խանգարել համաշխարհային արժույթների շուկայում եվրոյի հնարավոր առաջատարությանը:

Մի շարք վերլուծաբանների կարծիքով, որոշ իրադարձություններ և ԱՄՆ որոշ գործողություններ պետք է դիտարկել այս կտրվածքով, այդ թվում՝ «արաբական հուզումներ»-ը կամ Աֆղանստանում թմրանյութերի արտադրության բազմակի աճը, որի իրացման հիմնական շուկան ԵՄ-ն է: Մասնավորապես, «արաբական հուզումներ»-ն անհամեմատ մեծ խնդիրներ ստեղծել և ստեղծում են հենց ԵՄ-ի համար (փախստականներ, ահաբեկչություն, նարկոթրաֆիկ և այլն): ԵՄ տնտեսության համար նման սցենարը կնշանակի աճի տեմպերի դանդաղում, նշված երևույթների դեմ պայ-

քարելու համար բյուջետային ծախսերի ավելացում, որն էլ ավելի կծանրաբեռնի մի շարք եվրոպական երկրների, առավելապես միջերկրածովյան երկրների առանց այդ էլ պակասուրդային բյուջեները [9, c. 13-14]:

Հյուսիսային Աֆրիկային և Մերձավոր Արևելքին սահմանակից ԵՄ հարավային երկրների վրա ծանրաբեռնվածության ավելացումը կարող է կրկին հարուցել բարեկեցիկ հյուսիսային երկրների դժգոհությունը և ծնել ԵՄ շրջանակներում հակահնտեգրացիոն տրամադրություններ[1]: Տեսականորեն, հատկապես Մերձավոր Արևելքի անբարենպաստ իրավիճակի խորացումը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել ԵՄ փլուզմանը. մի կողմից՝ Հարավային Եվրոպայի երկրներում անօրինական միգրացիայի խնդրի սրումն ու բյուջետային բեռի կտրուկ ավելացումը, մյուս կողմից՝ բարեկեցիկ հյուսիսային երկրների՝ այդ հիմնախնդիրների լուծմանը մասնակցելու դժկամությունը կարող է իրավիճակը դարձնել փակուղային: Հետևաբար, տվյալ սցենարի դեպքում ԱՄՆ-ը ձերբազատվում է համաշխարհային տնտեսության մեջ իր հիմնական մրցակցից՝ ԵՄ-ից և շարունակում է մնալ ֆինանսական իմաստով միակ գերտերությունը:

Ընդհանուր առմամբ, մինչև 2030թ. ընկած ժամանակահատվածում հիմնական քաղաքատնտեսական միտումը կլինի գլոբալ տնտեսությունում ԱՄՆ մենաշնորհի գերիշխանության ավարտը [9, c. 14-15], այդ երկրի ակտիվ գործողությունները հատկապես ֆինանսական ոլորտում «ստատուս-քվոն» պահպանելու ուղղությամբ, և չնայած այդ ջանքերին՝ համաշխարհային տնտեսությունում կստեղծվի բազմաբևեռ համակարգ, որում մոտավորապես նույն դիրքերը կունենան ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Չինաստանը և Հնդկաստանը, ինչպես նաև հնարավոր է՝ հետխորհրդային երկրների ինտեգրացիոն միավորումը (պայմանականորեն այն անվանենք Եվրասիական տնտեսական միություն), եթե նրանք շարունակեն ինտեգրացիոն գործողությունները [8, c. 12-13]:

Այսպիսով, այն, ինչն այսօր համարվում է միջազգային արժութային համակարգ, իրականում համակարգ չէ, քանի որ նրանում բացակայում են կանոնները [1, c. 47]: Նրանում առկա չէ ընթացիկ գործառնությունների հաշվի անհավասարակշռությունների ճշգրտումների միջազգային ավտոմատ մեխանիզմ: Այն թույլ է տալիս խոշոր երկրներից, հատկապես ԱՄՆ-ից դեպի ոչ մեծ երկրներ ճգնաժամային երևույթների տարածման զգալի երկրորդային ազդեցություններ (այդ թվում՝ կապիտալի համախառն հոսքեր), որը վնասներ է հասցնում: Այն չունի վարկավորման ու դրամական զանգվածի գլոբալ աճի կողմնորոշում, որը բավական վտանգավոր է, նաև

[1] Օրինակ՝ Բրեքսիթը:

բացակայում է վերջին ատյանի վարկատուն, որն ունի բավարար ռեսուրսներ: Միջազգային արժութային համակարգի գոյության վերաբերյալ բոլոր խոշոր երկրների կամավոր համաձայնությունը, որը բոլորի վրա պարտավորություններ կդներ, կարող էր էական դեր ունենալ գլոբալ անհավասարակշռությունների հետ կապված վտանգների նվազեցման հարցում: Արդյունքում՝ պարտատերերն իրենց վրա պատասխանատվություն կվերցնեին անհրաժեշտ միջոցառումների արագ անցկացման համար: Վարկատուները ևս ստիպված կլինեին ավելի ակտիվ դեր խաղալ, որը կհամապատասխաներ այն գաղափարին, որ ճգնաժամերն ունեն նաև դեպի իրենց կողմ հակառակ ազդելու ունակություն: Գոյություն ունեցող «ոչ համակարգի» թերությունների ընդունումը բոլոր մասնակիցների կողմից կդառնար թեկուզ և դժվար, բայց ցանկալի առաջին քայլը: Սակայն ինքնիշխան երկրների քաղաքական կամքի կենտրոնացումը նոր գլոբալ համակարգի մշակման ուղղությամբ, որը կհամապատասխաներ նրանց երկարաժամկետ հետաքրքրություններին, ավելի դժվար կլինի:

Հոկտեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Уильям Р. Уайт,* Системный сбой; Финансы и развитие, Ежеквартальный журнал Международного валютного фонда; Март 2015, Выпуск 52, Номер 1; с. 44-47.
2. *Петров М., Плисецкий Д.,* Трансформация глобальных финансов// Мировая экономика и международные отношения, 2010, №7, с. 3-22.
3. *Масленников А.О.,* Крупнейшие мировые банки на рынке нефтяных деривативов// Мировая экономика и международные отношения, 2015, №9, с. 69-79.
4. *Cohen B., Benney T.,* What does the international currency system really look like? // Review of International Political Economy, 2014, Vol. 21, No. 5, pp. 1017-1041.
5. Currency Composition of Foreign Exchange Reserves, IMF Data - http://data.imf.org/?sk=E6A5F467-C14B-4AA8-9F6D-5A09EC4E62A4&ss=1442948906947
6. Triennial Central Bank Survey: Foreign exchange turnover in April 2016. Bank for International Settlements, Monetary and Economic Department. September 2016 / Annex tables revised on 11 December 2016/ p.4, http://www.bis.org/publ/rpfx16fx.pdf
7. *Дегтерев Д.А.,* Оценка многополярности международной финансовой системы: политэкономический анализ /Д.А. Дегтерев// Мировое и национальное хозяйство, 2016, № 2 (37), с. 40-47; http://mgimo.ru/library/publications/otsenka_mnogopolyarnosti_mezhdunarodnoy_finansovoy_sistemy_politekonomicheskiy_analiz_/

8. *Hakhverdyan D.N.,* STRUCTURAL SHIFTS IN THE GLOBAL ECONOMY (Структурные сдвиги мировой экономики), Научно-образовательный и прикладной журнал «Финансовые исследования», № 3 (48), сентябрь, 2015, с. 10-15; http://finis.rsue.ru/2015_N3/index.htm
9. *Додонов В.Ю.,* Основные тенденции развития мировой экономики и Казахстана до 2030 года, Алматы: КИСИ при Президенте РК, 2011, 56 с.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դավիթ Հախվերդյան

Ամփոփագիր

Գոյություն ունեցող ֆինանսական համակարգը կապված չէ որևէ ուղենիշի հետ, իսկ դրամավարկային քաղաքականությունը նախկինի պես ուղղված է տնտեսության ակտիվ խթանմանը: Ակնհայտ է, որ աշխարհում գոյություն չունեն ճգնաժամի առաջացման դեպքում միջազգային իրացվելիության բավարար աղբյուրներ: Այն, ինչն այսօր համարվում է միջազգային արժութային համակարգ, իրականում համակարգ չէ, քանի որ նրանում բացակայում են կանոնները: Միջազգային արժութային համակարգի գոյության վերաբերյալ բոլոր խոշոր երկրների կամավոր համաձայնությունը, որը բոլորի վրա պարտավորություններ կդներ, կարող էր էական դեր ունենալ գլոբալ անհավասարակշռությունների հետ կապված վտանգների նվազեցման հարցում: Սակայն ինքնիշխան երկրների քաղաքական կամքի կենտրոնացումը նոր գլոբալ համակարգի մշակման ուղղությամբ, որը կհամապատասխաներ նրանց երկարաժամկետ հետաքրքրություններին, ավելի դժվար կլինի:

СТРУКТУРНЫЕ ДИСПРОПОРЦИИ МЕЖДУНАРОДНОЙ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ

Давид Ахвердян

Резюме

Существующая финансовая система не привязана к каким-либо ориентирам, а денежно-кредитная политика по-прежнему направлена на активное стимулирование экономики. Очевидно, что в мире нет достаточных источников международной ликвидности на случай возникновения кризиса. То, что считается сегодня международной валютной системой, не является на самом деле системой, потому что в ней отсутствуют правила. Добровольное согласие всех крупных стран на существование международной валютной системы, которая налагала бы на всех обязательства, могло бы сыграть существенную роль в снижении угроз, связанных с глобальными дисбалансами. Однако мобилизовать политическую волю суверенных стран к сотрудничеству над разработкой новой глобальной системы, которая отвечала бы их собственным долгосрочным интересам, будет еще сложнее.

STRUCTURAL IMBALANCES OF THE INTERNATIONAL FINANCIAL SYSTEM

Davit Hakhverdyan

Resume

The existing financial system is not tied to any reference points, and monetary policy is still aimed at actively stimulating the economy. Obviously, the world does not have sufficient sources of international liquidity in case of a crisis. What is currently considered an international monetary system is not in fact a system, because it has no rules. The voluntary consent of all major countries with regard to the existence of an international monetary system that would impose obligations on all could play a significant role in reducing the threats associated with global imbalances. However, it will be even more difficult to mobilize the political will of sovereign countries to cooperate on developing a new global system that would meet their own long-term interests.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Համլետ Զաքարյան*

Բանալի բառեր ՝տնտեսության դոլարիզացիա, պետական ռեկետ, տրանսֆերտ, արժույթի փոխարժեք, կապիտալի անլեգալ արտահանում, զբաղվածություն, ստվերային շրջանառություն:

Մեր երկիրը ներկա կացությունից դուրս բերելու և կայուն ու առաջընթաց զարգացում ապահովելու համար ներկայում անհրաժեշտ է երկու ուղղություններով միաժամանակյա և արդյունավետ գործունեություն: Մի կողմից՝ միջոցառումներ պիտի իրականացվեն խոչընդոտներ հարուցելու երկրից անլեգալ արտահանման իրականացման դեմ, այսինքն՝ արտաքին տնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության ու կարգավորման ուղղությամբ, և մյուս կողմից՝ պայմաններ ստեղծվեն բարենպաստ ներդրումային միջավայրի՝ հայրենական ու արտասահմանյան կապիտալի ներհոսքի և շրջանառության համար, որն էլ ենթադրում է ինստիտուցիոնալ վերափոխումների անցկացում:

Անկախ փորձագետների հաշվարկներով՝ միայն դրսից ԱՊՀ երկրների և այդ թվում Հայաստան եկող արժութային միջոցների մի զգալի մասն անլեգալ պաշարներ են: Այստեղից էլ տրանսսահմանային հուսալի պատնեշի ստեղծման առաջնահերթությունը, իրավապահ կառույցների որոշիչ դերը:

Տնտեսական անվտանգության կարևորագույն պրոբլեմն, անշուշտ, մեր երկրի տնտեսական շրջանառության դոլարացումն է, որի համար պահանջվում են հստակ վերլուծություններ՝ մեր արժույթի նկատմամբ դոլարի գերակայությունների պատճառը խորապես հասկանալու համար: Այդ պատճառներն են.

ա) Բառի լայն իմաստով ստվերային շրջանառության սպասարկում առկա դոլարների շրջանառությունը չի ֆիքսում՝ ի տարբերություն

* Պրոֆեսոր, Հումանիտար գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի ակադեմիկոս:

անկանխիկ դրամների և ինչ-որ չափով նույնիսկ կանխիկ դրամների, քանի որ դրանք վերջին հաշվով հարկ է լինում ստանալ բանկերի միջոցով.

- տնտեսական գործունեության մի մասի հարկումից թաքցնում,
- տնտեսության լեգալ մասի ֆինանսական ցուցանիշների նվազեցում, երբ ծախսերը ֆիքսվում են հաշվետվություններում, իսկ եկամուտների մի մասը ստացվում է չվերահսկվող դոլարային ձևով տարբեր տեսակների, այդ թվում աշխատավարձի մաս-մաս վճարման ձևով,
- ձեռնարկությունների կառավարիչների կողմից շահույթի մի մասի յուրացում՝ ի հաշիվ բաժնետերերից ձեռնարկության ստացած եկամուտների թաքցման,
- կապիտալների անլեգալ արտահանում (որի համար մեր արժույթը պիտանի չէ, քանի որ այն փոխարկելի արժույթ չէ):

բ) Եկամտաբերության և ռիսկի միջև լավագույն հարաբերակցության ձգտում ֆինանսական ներդրումների համար (ոչ միայն խոշոր ֆինանսական ընկերությունների, այլ նաև քաղաքացիների անձնական մանր խնայողությունների համար).

- դոլարի դրամային փոխարժեքի աճ, որը դոլարով ներդրումների շահավետության վառ դրսևորում է: Մեր երկրի բանկերում դոլարային ավանդները տոկոսային եկամուտ են բերում, իսկ դրամական ներդրումները ֆոնդային բորսաների միջոցով ավելի քիչ, նույնիսկ բացասական շահավետություն ունեն և խելամիտ այլընտրանք չեն դոլարներին,
- դոլարն այժմ էլ դիտվում է որպես առավել կայուն արժույթ, քան, ասենք, դրամը և ռուբլին, իսկ դոլարային ակտիվներն ավելի քիչ ռիսկային են, որը հենց նրա առավելություններից է, քանի որ նրա քանակական համապատասխան ցուցանիշները կանոնավոր չեն հրապարակվում, իսկ դրա օբյեկտիվ տեղեկատվության բացակայությունը հօգուտ դոլարի է, որն էլ սուբյեկտիվորեն բարձրացնում է նրա հուսալիության գնահատականը: Հայկական տնտեսության դոլարիզացիայի հիմքում ընկած դոլարի նշված օբյեկտիվ առավելություններն ավելացնում են մեր երկրի ֆինանսական համակարգի կազմակերպման արատները:

Այսպիսով, դոլարը ֆինանսական շուկայի առանձին հատվածներում լիարժեք հաշվարկային միջոց է (այն կարելի է դնել բանկում և տոկոսներ

ստանալ, հաշվից հաշվին փոխանցել, վերցնել կամ տրամադրել դոլարային վարկ և այլն):

Արտաքին տնտեսական հաշվարկների ոլորտում դոլարը գործնականորեն մենաշնորհային դիրքեր ունի, քանի որ ինչպես Հայաստանի, այնպես էլ ԱՊՀ մյուս երկրների արտահանումները հիմնականում վճարվում են դոլարներով: Սա հենց կապիտալի արտահոսքի հիմնական կազմակերպչական նախադրյալներից է, մեր և մյուս երկրների արժույթների թուլացման նախադրյալը, քանի որ դրական վճարային հաշվեկշիռը դրանց նկատմամբ պահանջարկ չի ծնում: Ոչ պաշտոնական աղբյուրները վկայում են, որ այս տարի կտրուկ ավելացել է նաև Հայաստանից կապիտալի արտահոսքը: Միայն 2017թ. հունվար-մայիս ամիսներին, Հայաստանից $356 մլն 683 հազար կապիտալի արտահոսք է եղել, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է $42.6 մլն-ով: Դոլարի զգալի մասը՝ $144 մլն-ը, գնացել է ՌԴ, իսկ $64.4 մլն-ն՝ ԱՄՆ: Սա օրինական ճանապարհով երկրից դուրս բերված գումարներն են, էլ չենք խոսում նաև ապօրինի եղանակով Հայաստանից դուրս բերված գումարների մասին, որոնք շրջանառվում են օֆշորային գոտիներում:

Անշուշտ, ապադոլարացմանն ուղղված նշված ձեռնարկները պիտի վերացնեն մեր և մյուս երկրների տնտեսության մեջ դոլարի լայն օգտագործումը և դրան նպաստող ֆինանսական համակարգի թերությունները: Ահա թե ինչու կփոխվեն նաև մեր օրենսդրության շատ դրույթներ՝ նկատի ունենալով տնտեսության ստվերային մասի ոչ փոքր մասշտաբները: Դրանք կվերաբերեն թե՛ հարկային բարեփոխումներին, թե՛ վերահսկողական մեխանիզմների ուժեղացմանը, հատկապես՝ հարկերից խուսափողների նկատմամբ սանկցիաների (պատժաչափերի) ուժեղացմանը և տնտեսական գործունեության որոշակի տեսակների վարման փաստերին:

Տնտեսական անվտանգությունն ազգային անվտանգության կոնկրետ տեսակ է, և նրա հիմնական հայեցակարգային դրույթները պիտի որոշիչ դառնան նաև տնտեսական անվտանգության ապահովման համար: Ցավոք, այս իմաստով ամեն ինչ դեռևս բանավեճերի և փնտրտուքների փուլում է:

Հասունացել է անվտանգության և, մասնավորապես, տնտեսական անվտանգության մասին նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը, որը թույլ կտա միասնական իրավական մոտեցում որդեգրել ինչպես ազգային անվտանգության, այնպես էլ նրա առանձին տեսակների նկատմամբ:

Իրավական ոլորտում տագնապահարույց է նաև մանր ու միջին բիզնեսի ձեռնարկություններում տիրող իրավիճակը: Չնայած ընդունված

օրենքին, դա գրեթե ոչինչ չտվեց ձեռնարկատերերի այս խավին, քանի որ վերջիններս փաստացի պաշտպանված չեն ոչ «պետական ռեկետ»-ից (կաշառք, շորթում, կոռուպցիա) և ոչ էլ կազմակերպված հանցագործությունների ու քրեական կառույցների բռնություններից:

Ներկա պայմաններում կարևոր են նաև քաղաքացիների եկամուտների արդյունավետ վերահսկողությունը, եկամուտների վերաբերյալ հայտարարագրումը, որը համապատասխան մարմիններ պիտի ներկայացնեն չափահաս բոլոր քաղաքացիները: Դա կնպաստի հասարակության սոցիալական կայունացմանը:

Որքան մեզ հայտնի է, լիարժեք չի գործում նաև «փողերի լվացման դեպքում քրեական պատասխանատվություն սահմանելու մասին օրենքը»: Մինչդեռ արևմտաեվրոպական շատ երկրներում նման օրենքներ գործում են դեռ 1990-ական թվականներից: Այդ երկրների միջև կնքված պայմանագրերի համաձայն, օրինակ, մյուս երկրի ներկայացմամբ բռնագրավվում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները, ձերբակալություն կիրառում դրանց վրա, իսկ հարկ եղած դեպքում փոխում ավանդների գաղտնիքը: Անհրաժեշտության դեպքում էլ պայմանագրի կողմ երկրներին տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն: Այլ կերպ ասած՝ հրամայական է դարձել հիմնարար այնպիսի օրենքների ընդունումը, ինչպիսիք են «Պետական գաղտնիքի մասին», «Առևտրական գաղտնիքի մասին» օրենքները և այլն:

Ուրեմն, տնտեսության բոլոր սեկտորների և սեփականության բոլոր ձևերի ձեռնարկությունների համար արդիական է դարձել, մի կողմից, պետական գաղտնիքների պաշտպանությունը դրանք տնօրինել ցանկացողներից, իսկ մյուս կողմից՝ պետական և առևտրական գաղտնիքների միջև ճիշտ հարաբերակցությունը, դրանք թանկարժեք ու շահավետ ապրանքի վերածելու ցանկությունը: Ի դեպ, սխալված չենք լինի, եթե ասենք, որ առանձին օտարերկրյա ֆիրմաներ, ինչպես նաև համատեղ ձեռնարկություններ հենց ստեղծվում են օտարերկրյա հետախուզությունների կողմից՝ արդյունաբերական լրտեսության խնդիրների լուծման նպատակով:

Տնտեսական աճի հեռանկարներն ընդհանուր առմամբ թուլացել են ամբողջ աշխարհում: Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների տնտեսությունները բախվել են այնպիսի խոչընդոտների, ինչպիսիք են զարգացած երկրների տնտեսական ցածր աճը, հիմնական ապրանքատեսակների գների ցածր մակարդակը, ինչպես նաև համաշխարհային առևտրի դանդաղ վերականգնումն ու թույլ կապիտալ հոսքերը: Տնտեսական

պայմանները շարունակում են խնդրահարույց մնալ հումքային ապրանքներ արտահանող երկրներում, որտեղ միջոցներ են ձեռնարկվում տնտեսության իրավիճակը ցածր գների միջավայրին համապատասխանեցնելու ուղղությամբ: Թեև հումքային ապրանքներ և նավթ ներկրող երկրներն առավել բարենպաստ դիրքում են, այնուամենայնիվ, գների նվազման բացասական ազդեցությունն ապրանքներ և նավթ արտահանող երկրների տնտեսական զարգացումների վրա ավելի մեծ և շոշափելի է, քան դրա դրական ազդեցությունը ներմուծող երկրներում:

Չնայած համաշխարհային տնտեսական աճի որոշակի արագացմանը, առաջիկա տարիներին, այնուամենայնիվ, նվազման ուղղությամբ ռիսկերը կպահպանվեն:

2016թ. «բրենթ» տեսակի նավթի միջին կիսամյակային գինը կազմել է 40.3 ԱՄՆ դոլար/բարել (նախորդ տարի գրանցված նվազման միտումը պահպանվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 30.6%-ով: Թեև տարեսկզբից արձանագրվել է նավթի գների որոշակի աճ, այնուամենայնիվ, դրանք դեռևս գտնվում են ցածր մակարդակի վրա, ինչին նպաստող գլխավոր գործոնը նավթի համաշխարհային առաջարկի ծավալների և պաշարների զգալի ավելացումն է:

2016թ. առաջին կիսամյակում շարունակվել է պղնձի և մոլիբդենի գների նվազման միտումը: Պղնձի միջին կիսամյակային գինը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 20.7%-ով՝ մեկ տոննայի դիմաց կազմելով $4698.8: Մոլիբդենի միջին կիսամյակային գինը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 24.4%-ով՝ մեկ տոննայի դիմաց կազմելով $15.3 հազար:

Կիսամյակի ընթացքում հացահատիկի միջազգային գինը նվազման միտում է ունեցել: 2016թ. հացահատիկի միջին կիսամյակային գինը կազմել է 5.3 ԱՄՆ դոլար/բուշել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 10.7%-ով: Կարճաժամկետ հեռանկարում ցորենի միջազգային շուկայում ակնկալվում է գնի նվազում՝ պայմանավորված ավելցուկային առաջարկով, սակայն միջնաժամկետ հատվածում ակնկալվում է գնի կայունացման միտում:

2016թ. ոսկու կիսամյակային միջին գինը կազմել է $1220.5՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց (նախորդ տարվա համեմատ արձանագրվել է փոքրինչ աճ՝ 1.2%): Կարճաժամկետ հեռանկարում համաշխարհային տնտեսության վերականգնման կանխատեսվող տեմպերի պայմաններում ոսկու գների կտրուկ տատանումներ չեն ակնկալվում:

Ինչ վերաբերում է մեր իրականությանը, ապա խնդրահարույցը, ըստ իս, մեր պետական պարտքի հարցն է, քանի որ այն արդեն գերազանցում է $6 մլրդ-ն, իսկ համախառն ներքին արդյունքը գնահատվում է $10 մլրդ-ից քիչ ավելի: Առաջիկա տարիներին էլ մենք ավելի մեծ գումարներ ենք հատկացնելու պարտքի սպասարկման վրա:

Գծապատկեր 1



Գծապատկերում մուգ սյուներով ներկայացված է մեր ՀՆԱ-ն 2009-2016թթ.: Ինչպես տեսնում ենք, անցած 8 տարիներին մեր ՀՆԱ-ն դոլարով հաշվարկված՝ $8.7 մլրդ-ից աճել, դարձել է $10.3 մլրդ: Աճը կազմել է 18%-ից քիչ ավելի: Նույն գծապատկերում բաց գույնով ներկայացված է մեր պետական պարտքը, որը կայուն աճել է և 2009թ. գրանցված $3.1 մլրդ-ից 2016թ. հասել է $5.9 մլրդ-ի:

Այլ կերպ ասած՝ մեր պետական պարտքի աճի տեմպն ավելի քան 5 անգամ գերազանցում է ՀՆԱ աճի տեմպը: Նկատելի է նաև, որ 2013թ. սկսած՝ մեր ՀՆԱ-ն նվազում է, այսինքն՝ մենք տնտեսական անկում ենք ունենում, իսկ պետական պարտքի աճի տեմպն ավելի է արագանում:

Այլ կերպ ասած՝ պարտքի մեծացումը չի բերում տնտեսական զարգացման: Մենք պարզապես նորանոր պարտքեր ենք ներգրավում:

Ուշագրավ են նաև Հայաստան ուղարկվող մասնավոր տրանսֆերտների ծավալների վերաբերյալ տվյալները:

Հայտնի է, որ դրանց մեծ մասը՝ ավելի քան 80%-ը, Հայաստան է գալիս ՌԴ-ից: Իսկ այդ հոսքերը հիմնականում կախված են ՌԴ-ում տիրող ֆինանսատնտեսական վիճակից: Երբ տնտեսությունը Ռուսաստանում աշխույժ է, փող շատ կա, տրանսֆերտներն էլ աճում են: 2014թ. սկսած՝ ՌԴ տնտեսության վիճակը ծանր է, որն ուղղակիորեն արտացոլվում էր այդ երկրից Հայաստան ուղարկվող տրանսֆերտների ծավալների վրա, որոնք անկում էին ապրում: Սակայն անցած տարվա դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, արձանագրվեց աննախադեպ աճ:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած տեղեկանքի, այս տարվա մայիսին մասնավոր տրանսֆերտների տեսքով Հայաստան է մուտք գործել $68 մլն (զուտ ներհոսքը): Անցած տարվա մայիսին մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքը ընդամենը 42 մլն էր: Այսինքն՝ կրկին կտրուկ աճ է տեղի ունեցել:

Ինչևէ, կառավարությունը խոստանում է 5% տնտեսական աճ ապահովել, առաջիկա 5 տարիներին 25%-ով բարձրացնել նվազագույն աշխատավարձը, գործազրկությունը նվազեցնել մինչև 12%, լուրջ ուշադրություն դարձնել հակակոռուպցիոն բարեփոխումներին: Մի բան ակնհայտ է, որ բավական աշխատանք է տարված, և այն կոնկրետ ոլորտներում կոնկրետ անելիքներ է մատնանշում:

Բայց եթե Հայաստանում չեն փոխվել արդեն 20 տարի շարունակ գոյություն ունեցող խաղի կանոնները, ապա կառավարությանը հեշտ չի լինելու ապահովել իր ծրագրի իրականացումը, քանի որ չեն վերացել տնտեսության զարգացմանը խոչընդոտող քաղաքական պատճառներն ու մենաշնորհները:

Ինչ վերաբերում է զբաղվածության խնդիրներին, ապա որոշ տվյալներ ներկայացրել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը:

Մասնավորապես, նախորդ ողջ տարվա և 2017թ. առաջին եռամսյակում, մինչև նախորդ տարվա 3-րդ եռամսյակ զբաղվածության մակարդակը որոշակիորեն աճել է: Սակայն արդեն չորրորդ եռամսյակում և 2017թ. առաջին եռամսյակում զբաղվածության մակարդակն անկում է գրանցել: Եթե նախորդ տարվա առաջին եռամսյակում զբաղվածության մակարդակը կազմել է 48.4%, ապա 2017թ. նույն ժամանակահատվածում՝ 47.7%՝ նվազելով է 0.7%-ով:

Գործազրկության մակարդակը ցույց է տալիս հակառակ դինամիկան: Գործազրկության մակարդակը 2017թ. առաջին եռամսյակում աճել է: Առաջին եռամսյակում գործազրկության մակարդակը, ըստ ԱՎԾ-ի, եղել է 19%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 18.3%:

Բայց ակնհայտ է, որ գործազրկության աճը և զբաղվածության նվազումը չի տեղավորվում ներկայացված մակրոտնտեսական ցացանիշների շրջանակներում: Ընդ որում, զբաղվածության մակարդակի նվազումը արձանագրվում է այն ժամանակահատվածում, երբ ՀՀ պետեկամուտների կոմիտեի խստացված վարչարարության արդյունքում ստվերային աշխատողների թվի զգալի կրճատում էր արձանագրվել:

Հրապարակված տվյալների համաձայն, օրինակ, 2017թ. ապրիլին միջին ամսական անվանական աշխատավարձը անցած տարվա ապրիլի համեմատ աճել է ընդամենը 1%-ով, ինչը չնչին աճ է և ավելի քիչ է, քան Հայաստանում արձանագրված գնաճը: Իսկ այդ տարվա մարտի համեմատ միջին անվանական աշխատավարձը նվազել է 1.4%-ով: Մայիսին միջին աշխատավարձը նախորդ տարվա մայիսի համեմատ աճել է 2.7%-ով, սակայն առաջին հինգ ամիսներին գրանցված աճը ընդամենը 1.9% է:

Ուրեմն, մի կողմից՝ Հայաստանում աշխատատեղերը կրճատվում են, գործազրկությունն աճում է, աշխատավարձերի չնչին աճ է արձանագրվում, և մյուս կողմից՝ արդյունաբերության 14% աճ, առևտրի շրջանառության 12.8% աճ, արտահանման մոտ 21% աճ:

Ինչ վերաբերում է Հայաստանում առկա դրամավարկային խնդիրներին, ապա, ինչպես նշեցինք, էական յուրահատկություն է արտասահմանյան արժույթի լայն կիրառությունը, ինչպես արտատնտեսական պայմանագրերի վճարման համար, այնպես էլ բնակչության խնայողությունների պահպանության և ինֆլյացիայից եկամուտների կորուստների կրճատման նպատակով: Դոլարով դրամի փոխարինման մասշտաբները ընդհանուր դրամական հոսքում այնքան մեծ են, որ կարելի է փաստել Հայաստանում արդեն ձևավորված դրամաշրջանառությանը զուգահեռ համակարգի մասին: Ազգային դրամական միավորի հետ մեկտեղ ակտիվորեն շրջանառվում է արտասահմանյան երկրի դրամական միավորը, որը նպաստում է Հայաստանի էմիսիոն եկամտի կրճատմանը:

Համաշխարհային արժութային համակարգում իր ուրույն տեղն ունի նաև եվրոն: Դեռևս 2002թ. հունվարի 1-ից Եվրամիության 12 երկրներում դրամաշրջանառության մեջ դրվեց այդ արժույթը, որը միասնական դարձավ այդ երկրների համար: Դա առաջին փորձն է Հռոմեական կայսրությունից հետո, երբ միասնական արժույթ է մտցվում տարբեր երկրների միասնական տարածքներում: Եվրոն որպես շրջանառության ու վճարման միջոց կիրառվում է եվրոպական այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Ավստրիան, Գերմանիան, Բելգիան, Հոլանդիան, Հունաստանը, Իսպանիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Պորտուգալիան և Ֆինլանդիան: Չնայած

այդ գոտու մեջ չեն մտել երեք երկրներ (Անգլիան, Դանիան և Շվեդիան), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում եվրոն շրջանառություն կկատարի նրանց ազգային արժույթի հետ մեկտեղ, իսկ դրա փոխարեն եվրոյի գոտի են անցել Եվրոպայի գաճաճ պետությունները՝ Անդորան, Սան Մարինոն և Վատիկանը: Շրջանառության մեջ այդ ժամանակ բաց էր թողնվել 14.5 մլրդ բանկնոտ (թղթադրամ), 7 արժենիշերով և 50 մլրդ մետաղադրամների ութ տեսակ: Այդ գործողությունը՝ էմիսիան, թանկարժեք էր և կապված մեծ ծախսերի հետ: Դա հարկատուների վրա նստեց լրացուցիչ $44.5 մլրդ:

Եվրոյի էմիսիայից՝ գործարքներից կախված, հարստացան այն ընկերությունները, որոնք զբաղվում էին թղթադրամների տպագրությամբ, բանկնոտների արտադրությամբ ու տեղադրմամբ: Բայց խոշոր կորուստներ ունեցան բանկերն ու փոխանակման կետերը: Միասնական այդ արժույթի կիրառումը նշված երկրներում առավելություններ տվեց իրենց քաղաքացիներին, հեշտացան եվրոյի գոտու սահմաններում տեղաշարժերը, որոշ ժամանակ էժանացան ապրանքներն ու ծառայությունները:

Դրամավարկային քաղաքականությունն այսօր էլ վստահորեն վերահսկվում է թե՛ Կենտրոնական բանկի և թե՛ ՀՀ կառավարության կողմից: Պահանջարկի կարգավորման նպատակով կիրառվում են դրամավարկային քաղաքականության ուղղակի և անուղղակի գործիքներ: Ընդ որում, առավել զարգացած երկրներում կիրառվում են առավել շուկայական համարվող անուղղակի մեթոդներ:

Ներկայում երկրների մեծ մասում ազգային արժույթների փոխանակումը կատարվում է «լողացող արժութային փոխարժեքների» կիրառմամբ՝ արժույթի շուկաներում առաջարկի և պահանջարկի հիման վրա տարերայնորեն ձևավորվող գներով: Եթե, օրինակ, արժույթի շուկայում սակարկությունների (առքուվաճառքի) օրը $1 մլն-ի դիմաց տրվի 100 մլն դրամ, ապա $1-ը կարժենա 100 դրամ, և ընդհակառակը, եթե $100 մլն-ի դիմաց տրվի 1 մլն դրամ, ապա այս դեպքում 1 դրամը կարժենա 1 դոլար:

Այսպիսով, տվյալ երկրի ազգային արժույթի նկատմամբ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց մեծ պահանջարկի դեպքում բարձր է նաև տվյալ արժույթի փոխարժեքը, իսկ ազգային արժույթի առաջարկի գերակայության դեպքում նրա փոխարժեքը ցածր է: Օրինակ, հայկական դրամի արժութային փոխարժեքը պահպանելու համար Հայաստանի կենտրոնական բանկը ժամանակ առ ժամանակ արժութային շուկա է հանում ամերիկյան դոլար՝ մեծացնելով դոլարի առաջարկը: Պետք է նշել, որ սա բավական թանկարժեք, ուստի և քիչ կիրառվող գործարք է:

Անհրաժեշտ է նաև պարզել, թե ինչպես է սահմանվում ազգային արժույթների այս կամ այն հարաբերությունը:

Կարելի է թվարկել տարբեր պատճառներ (այդ թվում՝ քաղաքական), սակայն հիմնական պատճառն այն է, որ տվյալ երկրի արժույթի նկատմամբ պահանջարկն արտահայտում է տվյալ երկրի արտադրանքի նկատմամբ այլ պետությունների պահանջարկը: Եթե օտարերկրյա գործակալները «խուսափում» են տվյալ երկրի արտադրանքից, ապա նույն արագությամբ նրանք «փախչում» են նաև այդ երկրի արժույթից: Այսինքն՝ արդիական արտադրությունն ուղղակիորեն կապված է փոխարկելի արժույթ ունենալու ցանկության հետ:

Քաղաքակիրթ երկրներում բոլոր տնտեսվարող սուբյեկտներն իրենց դրամական միջոցները պահում են բանկերի համապատասխան հաշիվներում: Նրանց միջև դրամական հաշվարկներն իրականացվում են բանկի կողմից տնտեսվարող մի սուբյեկտի հաշվարկային հաշվից մյուսի հաշվին գումարը փոխանցելու միջոցով: Դա էլ անկանխիկ հաշվարկներն են, որի այդ ձևն օժտված է որոշակի առավելություններով՝ նպաստում է արտադրանքի շարժման արագացմանը, կրճատում դրամական միջոցների քանակը շրջանառության մեջ, արագացնում դրանց շրջանառությունը, ամրապնդում դրամական համակարգը:

Այսպիսով, զարգացման ներկա փուլում դրամավարկային համակարգի զարգացումը նույնպես դարձել է Հայաստանի տնտեսական անվտանգության կարևոր ուղղություններից մեկը: Դրամավարկային համակարգում նույնպես ի հայտ են եկել տարբեր հիմնահարցեր, որոնք հրատապ լուծում են պահանջում, ինչն, անշուշտ, կնպաստի այդ համակարգի իրավիճակի և ծառայությունների բազմազանության մեծացմանն ու որակական հատկանիշների բարելավմանը:

Հոկտեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Գագիկ Գազյան,* Տնտեսական զարգացման հիմնադրույթները Ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003:
2. Права человека и интересы национальной безопасности, М., 1999.
3. *Е.Хрусталев, В.Цымбал,* Военная безопасность России: замысли и реалии // мировая экономика и международные отношения, 2001, №1, с. 34/41.
4. ՀՀ պետական բանկի ընթացիկ հաշվետվությունները:
5. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2012:

6. ՀՀ Կենտրոնական բանկ, տեղեկագիր, Երևան, 2011:
7. *Л.А. Дробозина,* Финансы, денежное обращение, кредит, Москва, 2009.
8. *Լ.Հ. Բաղանյան*, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Երևան, 2007:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Համլետ Զաքարյան

Ամփոփագիր

Հեղինակը վերլուծում է տնտեսական անվտանգության հետ առնչվող խնդիրներ և մեր երկրի տնտեսության զարգացման մի քանի հրատապ հարցեր:

Քննարկվում է տնտեսության ստվերային հատվածի կրճատման և տնտեսական շրջանառության դոլարացման ու դոլարի գերակայությունների հստակ ըմբռնման հարցը՝ մանավանդ արտաքին տնտեսական հաշվարկների ոլորտում: Շեշտվում են ապօրինի ճանապարհով երկրից դուրս բերվող գումարների անթույլատրելիությունը, տնտեսական անվտանգության նոր օրենքի և օրենսդրական դաշտի հետագա բարեփոխումների անհրաժեշտությունը:

Հոդվածագիրն անդրադառնում է հիմնարար այնպիսի հարցի, ինչպիսին է մեր երկրի պետական պարտքի ահագնացումը, հղում է արվում մասնավոր տրանսֆերտների ծավալների վերաբերյալ տվյալներին: Անդրադարձ է կատարվում նաև ՀՀ կառավարության նոր ծրագրին, ընդգծվում է տնտեսական զարգացմանը խոչընդոտող քաղաքական պատճառների ու մենաշնորհների վերացման անհրաժեշտությունը:

Կարևորվում է զբաղվածության խնդրի, գործազրկության աճի միտումների և նոր աշխատատեղերի ստեղծման, դրամավարկային քաղաքականության մի քանի արդիական հարցերի լուծման կարևորությունը:

НЕСКОЛЬКО АСПЕКТОВ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

Гамлет Закарян

Резюме

Автор анализирует задачи экономической безопасности и обусловленный ею ряд актуальных вопросов развития экономии нашей страны.

Особое внимание уделяется дедолларизации армянского хозяйственного оборота, анализируются причины, делающие доллар предпочтительнее рубля и драма. Подчеркивается необходимость усиления контроля за движением валютных ценностей через границу, а также дальнейших реформ нового закона и законодательного поля в сфере экономической безопасности. Автор на первый план выдвигает обсуждение такого основополагающего вопроса, как увеличение госдолга нашей страны, приводя также данные по объёмам частных трансфертов и их сдвигам. Анализируется и новая программа правительства РА, подчеркивается необходимость ликвидации политических причин и монополий, мешающих экономическому развитию нашей страны. Рассматривается тенденция занятости и создания новых рабочих мест, а также некоторые важные вопросы финансово-кредитной политики.

SEVERAL ASPECTS OF THE ECONOMIC SECURITY PROBLEM

Hamlet Zakaryan

Resume

The author analyzes the problems related to economic security and a number of issues of the economic development of our country.

Reduction of shadow sector of economy, dollarization of economic turnover and clear understanding of dollar domination especially in the clearing of external economic activities are discussed. The dangers of illegally moving the money abroad, the need for a new economic security law and further reforms of the legal framework are emphasized.

The author addresses the fundamental issue of increasing sovereign debt of our country and refers to the data on private transfers. The new program of the Armenian government is discussed, where the need to eliminate the political obstacles for economic development and monopolies is emphasized.

The importance issues of employment, unemployment rates increase and creation of new job, as well as several modern problems of monetary policy are highlighted.

ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան[*]

Բանալի բառեր ՝ Թուրքիա, Սուդան, Ռեջեփ Թայիփ Էրդողան, Օմար ալ-Բաշիր, Սուակին, ռազմական:

2017թ. դեկտեմբերի 24-ին մեկնարկեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի աֆրիկյան շրջագայությունը, որի շրջանակներում նա այցելեց Սուդան, Չադ և Թունիս: Աֆրիկայում Էրդողանի առաջին կանգառը Սուդանն էր, որտեղ նա հանդիպեց այդ երկրի նախագահ Օմար ալ-Բաշիրի հետ: Այցի արդյունքներով Թուրքիան և Սուդանը կնքեցին 22 պայմանագիր, որոնք առնչվում էին առևտրին, արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, տեխնոլոգիաներին, գիտությանը: Կողմերը պայմանավորվեցին ապրանքաշրջանառության ծավալը 2018թ. $500 մլն-ից հասցնել մինչև $1 մլրդ-ի, ապա նաև $2 մլրդ-ի, ինչպես նաև ստեղծել Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդ[1]:

Պաշտոնական այցի երկրորդ օրը թուրքական պատվիրակությունն այցելեց Սուդանի հյուսիսում գտնվող Պորտ Սուդան քաղաք, որտեղից էլ մեկնեց Կարմիր ծովում գտնվող Սուակին կղզի, որը դարեր շարունակ համարվել է առևտրային կարևոր նավահանգիստ ու մշակութային կենտրոն և մինչև 19-րդ դարը պատկանել է Օսմանյան կայսրությանը: Թուրքիայի նախագահը Սուակինում զննեց տեղի մզկիթները, որոնք պատկանում են սուննի իսլամի երկու դպրոցներին՝ հանաֆի ու շաֆի, նամազ կատարեց դրանցից մեկում, որոնց վերանորոգումն իրականացրել է Թուրքիայի համագործակցության և կոորդինացման գործակալությունը (*TİKA*): Սուակին այցելելը դարձավ Էրդողանի սուդանյան այցի առանցքային պահերից մեկը: Թուրքիայի նախագահն ընդգծեց, որ կղզի այցելելն ունի պատմական նշանակություն. «Ես դիմել եմ Սուդանի նախագահին՝ խնդրելով

[*] Թուրքագետ, ՄԱՀՀԻ ասոցացված փորձագետ:
[1] Cumhurbaşkanı Erdoğan Sudan'a geldi, Sabah, 24.12.2017.

Թուրքիային հանձնել կղզում գտնվող պատմական օբյեկտները վերանորոգելու աշխատանքները և ստացել եմ դրական պատասխան: Կարծում եմ, որ եթե կղզին վերանորոգվի, դա կդառնա արժանի պատասխան նրանց, ովքեր ավերել են պատմական օբյեկտները: Իսկ ո՞վ է ավերել: Արևմուտքը, դա բնորոշ է նրան: Թուրքիան 2011-ից աջակցում է Սուակինը մշակութային կարևոր կենտրոնի վերածելու Սուդանի ջանքերին»[1]:

Հատկանշական է, որ թուրքական մամուլի պնդմամբ՝ Սուակինն ավերակների է վերածվել 1918թ. ուժգին երկրաշարժից հետո: Այն, որ Սուդանը Սուակին կղզին 99 տարի ժամկետով վարձակալությամբ հանձնեց Թուրքիային, կարելի է համարել Էրդողանի մեծ ձեռքբերումը, որին Թուրքիայում ցայժմ մեղադրում են տարածքներ կորցնելու համար: Մասնավորապես, թուրքական ընդդիմությունը շարունակ հայտարարում է, որ 2000-ականներին Էրդողանը Հունաստանին է հանձնել Էգեյան ծովում գտնվող մի շարք կղզիներ և, բացի այդ, Էրդողանի սխալ քաղաքականության հետևանքով կորստյան մատնվեց Սիրիայում թուրքական անկլավը՝ Շահ Սուլեյմանի դամբարանի տարածքը, որը թուրքական կողմի պնդմամբ՝ Թուրքիայի սահմաններից դուրս գտնվող, բայց նրան պատկանող միակ տարածքն էր:

Սուակինում օսմանյան ժամանակաշրջանում, ամրոցներից բացի, կառուցվել են վարչական շենքեր (1821թ- կառուցվել է մաքսատուն), մզկիթներ, բաղնիքներ: 20 կմ երկարությամբ, 3 կմ լայնությամբ կղզին Օսմանյան կայսրության կազմում ընդգրկվել է 1517թ., երբ օսմանյան սուլթան Սելիմ 1-ին Ահեղը (1512-1520թթ-) նվաճեց Եգիպտոսը (կղզում կառուցվել են օսմանյան զորանոցներ, տեղակայվել է Կարմիր ծովում օսմանյան նավատորմի շտաբ-բնակարանը): Սուակին կղզին օսմանյան ժամանակներում մտել է Հաբեշ էյալեթի կազմի մեջ (ներկայիս Էրիթրեա, Ջիբութի, Սոմալիի և Եթովպիայի հյուսիս): Այն բանից հետո, երբ 1882թ. բրիտանացիներն օկուպացրին Եգիպտոսը, Սուակինը դե-ֆակտո դադարեց պատկանել օսմանյան պետությանը: 1923թ. Լոզանի պայմանագրի 17-րդ կետով կղզին հանձնվեց Եգիպտոսին: 1956թ. էլ Սուակինը դարձավ Մեծ Բրիտանիայից իր անկախությունը հռչակած Սուդանի մասնիկը (1922թ- բրիտանացիների կողմից Պորտ Սուդան նավահանգստի կառուցումից հետո կտրուկ նվազեց Սուակինի ռազմական և տնտեսական նշանակությունը):

Հետաքրքիր է, որ սուդանյան այցի ժամանակ Էրդողանն Օմար ալ-Բաշիրին անվանեց «եղբայր», իսկ ալ-Բաշիրն էլ Թուրքիան որակեց «իսլամական խալիֆայության վերջին միջնաբերդ՝ ումման միավորելու համար», Էրդողանին հանձնեց երկրի ամենագլխավոր մեդալը, նաև 250-ամյա վաղե-

[1] Cumhurbaşkanı Erdoğan'dan Sevakin Adası çağrısı, En Son Haber, 26.12.2017.

մության օսմանյան մետաղադրամներ: Նկատենք, որ Էրդողանի նման պահվածքն անսպասելի չէր, չնայած Արևմուտքը Սուդանի նախագահին մեղադրում է արևմտյան Դարֆուր նահանգի բնակիչներին ցեղասպանության ենթարկելու համար, որի հետևանքով զոհվել է 200-300 հազ. մարդ, մոտ 2.7 մլն մարդ դարձել է ներքին տեղահանված (2008թ. Հաագայում գործող Միջազգային քրեական դատարանը (*ICC*) արտոնեց ալ-Բաշիրին կալանքի տակ վերցնելը): Էրդողանը վաղուց սերտ կապերի մեջ է ալ-Բաշիրի հետ և 2009թ. Դարֆուրի դեպքերը չի ճանաչել «ցեղասպանություն»: Էրդողանն անգամ հայտարարել էր, թե «մուսուլմանն ի վիճակի չէ ցեղասպանություն գործել»[1], որով նա հետապնդում էր երկու նպատակ. 1) պահպանել և ամրապնդել Սուդանի հետ հարաբերությունները՝ ունենալով հեռահար նպատակներ, 2) պաշտպանել Թուրքիան հայերին, հույներին, ասորիներին ցեղասպանության ենթարկելու մեղադրանքներից: Ի դեպ, 2017թ. դեկտեմբերին Թուրքիան անտեսեց *ICC*-ի դիմումը՝ կալանավորելու Ստամբուլում Իսլամական համագործակցության կազմակերպության (ԻՀԿ) գագաթաժողովին մասնակցող Սուդանի նախագահին: Էրդողանը հայտարարեց, որ «Թուրքիան *ICC* անդամ չէ և, հետևաբար, պարտավոր չէ հետևել նրա որոշումներին»[2]:

Հիշեցնենք, որ ալ-Բաշիրը 1989-1993թթ. եղել է Սուդանի պաշտպանության նախարար և 1993թ. երկրի նախագահ է դարձել ռազմական հեղաշրջում կազմակերպելու շնորհիվ: Այդ ամենը «զարմանալիորեն» չի շփոթեցնում Էրդողանին, որն ավելի վաղ բազմիցս քննադատել է Սուդանի հարևան Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ ալ-Սիսիին: Թեև ալ-Սիսին 2013թ. հուլիսին իշխանության է եկել ռազմական հեղաշրջման ճանապարհով, 2014թ. մայիսին նա ուղիղ քվեարկությամբ ընտրվել է Եգիպտոսի նախագահ: Չնայած դրան՝ Էրդողանը ցայժմ չի ճանաչում ալ-Սիսիին: Ավելին, 2014թ. սեպտեմբերին Էրդողանը ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունի անունից տրված ճաշկերույթի ժամանակ հրաժարվել է սեղան նստել ալ-Սիսիի հետ[3]: Թեև ալ-Բաշիրը նույնպես իշխանության է եկել ռազմական հեղաշրջման ճանապարհով՝ Էրդողանը նրան անվանում է եղբայր: Էրդողանի նման պահվածքի հիմնական պատճառն այն է, որ ալ-Բաշիրի կառավարման ժամանակ Սուդանը ենթարկվել է պետական ապարատի իսլամականացման: Երկրի իսլամականացման քաղաքականություն էր վարում նաև Եգիպտոսի նախկին նախագահ (2012-2013թթ.) Մոհամեդ

[1] Müslüman soykırım yapamaz, Hürriyet, 09.11.2009.
[2] Wanted Sudan leader Bashir attends Turkey's Islamic summit, The Sun Daily, 13.12.2017.
[3] *Габриелян Айк,* Шанс для нормализации египетско-турецких отношений?, Институт Ближнего Востока, 26.04.2017.

Մուրսին, որը սերտ հարաբերությունների մեջ էր Էրդողանի հետ, և որին ռազմական հեղաշրջման արդյունքում տապալեց ալ-Սիսին:

Էրդողանի այցից հետո զանգվածային լրատվամիջոցները գրեցին Սուդանում ռազմածովային բազա կառուցելու Թուրքիայի պլանի մասին, թեև թուրքական կողմը պնդում է, որ մտադիր է միայն վերականգնել օսմանյան ժառանգության հուշարձանները: Բացի այդ, Սուդանի «Բարեփոխումներ» կուսակցության փոխնախագահ, պատգամավոր Հասան Օսման Ռըզըքն Էրդողանին կոչ արեց ռազմական կառուցել Պորտ Սուդանի մոտ (Սուակին կղզին գտնվում է Պորտ Սուդանի մոտ)[1]: Թուրքիան իսկապես կարող է Սուակինում կառուցել ռազմածովային բազա, ռազմական օբյեկտ կամ նյութատեխնիկական ապահովման կետ: Ուշագրավ է, որ Թուրքիայի ԳՇ պետ Հուլուսի Աքարը Սուդանում հանդիպեց սուդանցի ու կատարցի գործընկերների հետ, ինչպես նաև Թուրքիայի պաշտպանության նախարար Նուրեթթին Ջանիքլիի ու Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության ղեկավար Իսմայիլ Դեմիրի հետ այցելեց Սուդանում գործող *SAFAT Aviation Complex* ավիացիոն համալիր[2]: Դա նշանակում է, որ Թուրքիան և Սուդանը քննարկել են նաև ռազմական հարցեր, և Թուրքիան կարող է սեփական արտադրության զենք վաճառել Սուդանին՝ այդ երկրում ռազմական կառուցելու թույլտվության դիմաց: Լիովին իրատեսական ենք համարում, որ այդ երկիրը հետագայում ռազմածովային բազա կկառուցի Սուակինում. կան դրան մղող բազում գործոններ:

1. Թուրքիայի աֆրիկյան քաղաքականությունը - «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) կառավարման ժամանակ Թուրքիան շեշտակիորեն մեծացրել է Աֆրիկայի հետ քաղաքական և տնտեսական կապերը: Էրդողանը 2004-ից 28 այց է կատարել Աֆրիկա՝ ամենաշատն այցելելով Եգիպտոս, Ալժիր, Թունիս և Եթովպիա[3]: Նրա խոսքերով՝ ապագան Աֆրիկայինն է (ակնկալվում է, որ 21-րդ դարը կդառնա «Աֆրիկայի դար»): Եթե 2002թ- Թուրքիայի և Աֆրիկայի միջև ապրանքաշրջանառության ծավալը կազմում էր $3 մլրդ, ապա ներկայում այն հասել է մոտ $20 մլրդ-ի, Աֆրիկայում Թուրքիայի դեսպանատների թիվը 12-ից հասցվել է 39-ի (շուտով դա կհասցվի 44-ի): *Turkish Airlines* («Թուրքական ավիաուղիներ») ավիաընկերությունն իր չվերթների թիվը 4-ից հասցրել է 47-ի: Թուրքիայի համար Սուդանն աֆրիկյան կարևոր երկիր է- Սուդանը *SAGA* գոտում (*Sahara-*

[1] Sudanlı vekillerden Türkiye'ye 'askerî üs' çağrısı, Türkiye, 25.12.2017.
[2] Orgeneral Akar, Sudan Ve Katar Genelkurmay Başkanları İle Toplantı Gerçekleştirdi, Milliyet, 26.12.2017.
[3] Cumhurbaşkanı Erdoğan'dan 28 Afrika ülkesine ziyaret, Anadolu Ajansı, 24.12.2017.

Altı Güney Afrika, Աֆրիկայի՝ Սահարայից հարավ ընկած գոտի) ՀԱՀ-ից հետո Թուրքիայի երկրորդ խոշոր գործընկերն է, Սուդանում Թուրքիայի ներդրումների ծավալը հասել է $650 մլն-ի, որից $300 մլն-ն ուղիղ ներդրումներ են: Մինչև 2011թ. Սուդանը (2.505.810 կմ²) աշխարհի խոշորագույն երկրների տասնյակում էր և Աֆրիկայի խոշորագույն երկիրը, սակայն Հարավային Սուդանի անջատվելուց հետո Սուդանը (1.886.068 կմ²) Աֆրիկայում զբաղեցրեց միայն երրորդ տեղը՝ զիջելով Ալժիրին (2.381.740 կմ²) և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությանը (ԿԴՀ, 2.345.410 կմ²): Աֆրիկայում Թուրքիայի համար կան մի շարք «դարպաս-երկրներ», որոնցով նա մուտք է գործում մայրցամաքի խորքեր: Աֆրիկայի հյուսիսում նման երկրներ են Եգիպտոսը, Լիբիան, արևմուտքում՝ Սենեգալը, Նիգերիան, հյուսիս-արևելքում՝ Սուդանը, Եթովպիան, կենտրոնում՝ ԿԴՀ-ն, հարավում՝ ՀԱՀ-ը, արևելքում՝ Քենիան: Տեղաբնակները Սուակինն անվանում են «Աֆրիկայի պատուհան», և Թուրքիան ցանկանում է նաև դրանով ներթափանցել Աֆրիկա:

2. Թուրքիայի նեոօսմանական քաղաքականությունը – Արդեն նշվեց, որ Սուակին կղզին նախկինում ավելի քան 300 տարի մտել է Օսմանյան կայսրության կազմի մեջ և պատմական նշանակություն ունի Թուրքիայի համար, որը վերջին տարիներին վարում է նեոօսմանական քաղաքականություն: Այդ քաղաքականության բաղադրիչներից մեկը «ռազմակայանային» քաղաքականությունն է, որի շրջանակներում Թուրքիան սկսել է ռազմական ներկայություն հաստատել նախկինում Օսմանյան կայսրության կազմի մեջ մտած տարածքներում: Արտերկրում նրա առաջին երկու ռազմակայանները բացվել են Սոմալիում և Կատարում, ընդ որում՝ դա արվել է լեգալ՝ այդ երկրների հետ համապատասխան համաձայնագրերի կնքումից հետո[1]: Դրա հետ մեկտեղ, Թուրքիան իր ռազմական ներկայությունն է հաստատել հարևան Սիրիայում և Իրաքում, սակայն այս դեպքում դա արել է ապօրինի. պարզապես օգտվել է նրանից, որ Սիրիայի իշխանությունները վերահսկել են սահմանի միայն աննշան մասը, իսկ Իրաքի իշխանություններն ընդհանրապես չեն վերահսկել իր հետ սահմանը (Սիրիան և Իրաքը Թուրքիային քանիցս կոչ են արել դուրս բերել զորքը): Բացի այդ, 2017թ. ԶԼՄ-ն հայտնել են, որ Թուրքիան մտադիր է ռազմակայան հիմնել Քուվեյթում: 2017թ. հունիսին Թուրքիան Սաուդյան Արաբիային առաջարկեց ռազմակայան հիմնել թագավորության տարածքում, սակայն մերժում ստացավ[2]: Թուրքական իշխանությունների մտահղաց-

[1] *Габриелян Айк,* Турция усиливает военное присутствие за рубежом, Институт Ближнего Востока, 07.03.2017.
[2] Suudi Arabistan, Türkiye'nin askeri üs teklifini reddetti, Sputnik Türkiye, 18.06.2017.

մամբ՝ ռազմակայանները պետք է դառնան Թուրքիայի հզորության և ազդեցության ցուցիչ, վկայեն, որ այդ երկիրն իսկապես տարածաշրջանային գերտերություն է:

3. Կարմիր ծովի ռազմավարական կարևորությունը – Սուակինում ռազմածովային բազայի ստեղծումը Թուրքիայի համար ունի ռազմաքաղաքական, անվտանգային մեծ նշանակություն: Թուրքիան այդպիսով կվերածվի երկրի, որն անմիջապես կկարգավորի Կարմիր ծովի տարածաշրջանում անվտանգության համակարգի մեխանիզմները, ընդ որում՝ դա կանի ՆԱՏՕ շրջանակներից դուրս: Կարմիր ծովը մեծ կարևորություն ունի համաշխարհային ծովային առևտրի համար- տարածաշրջանում գտնվում է Կարմիր ծովն Արաբական ծովի Ադենի ծովածոցի հետ կապող Բաբ էլ Մանդեբի նեղուցը, որն աշխարհի ամենածանրաբեռնված ջրուղիներից մեկն է: Այդ երթուղով տարեկան անցնում է մինչև 22 հազ. առևտրանավ, իրականացվում է ծովային առևտրի 14%-ը՝ $1.8 տրլն: Բացի այդ, տարածաշրջանում է գտնվում Հյուսիսային Ատլանտիկան Հնդկական օվկիանոսի հետ կապող Սուեզի ջրանցքը: Կարմիր ծովում Թուրքիայի ռազմակայանը հնարավորություն կտա վերահսկել ռազմավարական կարևորություն ունեցող այդ տարածաշրջանը, որի դերը կտրուկ մեծացել է 1950-ականներից սկսած՝ կապված Պարսից ծոցից նավթը Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա տեղափոխելու հետ: Հիշեցնենք, որ Կարմիր ծովի անվտանգությունն անգամ օսմանյան ժամանակաշրջանում ապահովվել է Սուակինից. այն ժամանակ Կարմիր ծովը վերածվել էր Օսմանյան կայսրության ներքին ծովի: Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը 1915-1916թթ- Դարդանելի ճակատամարտում հաղթելը և այդպիսով Ստամբուլը փրկելը պայմանավորել է Սևծովյան նեղուցները փակելու հանգամանքով՝ միաժամանակ Օսմանյան կայսրության պարտությունը պայմանավորելով նրանով, որ կայսրությանը չի հաջողվել նույնն անել (փակել) Բաբ էլ Մանդեբի պարագայում (որով Անգլիան զորքեր է փոխադրել Հնդկաստանից, Ավստրալիայից, Նոր Զելանդիայից): Նկատելի է, որ Սևծովյան նեղուցները վերահսկող Թուրքիան սկսել է ավելի մեծ ուշադրություն հատկացնել ռազմավարական նշանակության նեղուցներին ու ջրանցքներին, որոնց զգալի մասը գտնվում է իսլամական աշխարհում: Կատարում և Սոմալիում բացված թուրքական ռազմակայանները գտնվում են Հորմուզի և Բաբ էլ Մանդեբի նեղուցների մոտ:

4. Եգիպտոսի վրա ազդեցության լծակը – Սուակինում ստեղծվելիք Թուրքիայի ռազմածովային բազան կարող է դառնալ Եգիպտոսի նկատմամբ նրա հավելյալ լծակ: Թուրքիան այդպիսով կվերահսկի Սուեզի

ջրանցքի մատույցները, կստանա Սուեզի ջրանցքի «բանալիները»: Ուշագրավ է, որ թուրքական ռազմակայանը կգտնվի Եգիպտոսի և Սուդանի սահմանին ընկած Հալաիբի եռանկյունուց (20.580 կմ^2) ոչ հեռու, որտեղ հայտնաբերվել են նավթի պաշարներ: Հալաիբի եռանկյունին 20-րդ դարի գրեթե ողջ երկրորդ կեսին վերահսկվել է Սուդանի կողմից, սակայն ներկայում գտնվում է Եգիպտոսի վերահսկողության ներքո (նրանց սահմանն անցնում է 22-րդ հորիզոնականով): Թուրքիան կարող է Սուակինում ռազմաբազայի ստեղծմամբ փորձել ներազդել Եգիպտոսի և Սուդանի միջև տարածքային վեճի, ինչպես նաև մյուս վեճերի վրա (Նեղոսի ջրերի բաշխում, Եթովպիայում Կապույտ Նեղոսի վրա «Վերածնունդ» ամբարտակի կառուցում, Լիբիայի մի շարք խմբավորումներին, «Մուսուլման եղբայրներին» Սուդանի աջակցելը): Թուրքիան ակնարկում է, որ այդ հարցերում կարող է աջակցել Սուդանին: Դրա համար էլ պատահական չէ, որ Սուդանում ռազմակայան հիմնելու Թուրքիայի պլանը մտահոգել է Եգիպտոսին: Եգիպտական իշխանամետ լրատվամիջոցները (*«Al-Watan»*) Սուակինի մասին Թուրքիայի և Սուդանի միջև կնքված համաձայնագիրը որակեցին սպառնալիք՝ ընդգծելով, որ Թուրքիան զբաղված է «օսմանյան օրերի» փնտրտուքով, որ նրա այդ քայլը սպառնում է Եգիպտոսի ազգային շահերին և ազգային անվտանգությանը, որ դա քաղաքական ծուղակ է[1]:

5. Մեքքային մոտ գտնվելու գործոնը – Սուակինը գտնվում է մուսուլմանների համար սրբազան Մեքքա քաղաքից ոչ շատ հեռու: Թուրքական մամուլը գրել է, որ թուրք ուխտագնացները Կարմիր ծովի ափից մոտ 80 կմ հեռավորության վրա ընկած Մեքքա մեկնող հաջի ժամանակ կարող են ինքնաթիռով ժամանել Սուակին, որտեղից էլ նավերով մեկնել Սաուդյան Արաբիա, ինչը կլինի մատչելի տարբերակ նրանց համար[2]: Ընդգծենք, որ Սուակինում ռազմակայանի բացմամբ Թուրքիան ռազմական առումով կմոտենա Մեքքային, որը վիթխարի նշանակություն ունի իսլամական աշխարհի առաջնորդի հավակնություններով Էրդողանի համար: Նրան ցանկալի չէ, որ Մեքքան վերահսկվում է ԱՄՆ տարածաշրջանային դաշնակից Սաուդյան Արաբիայի կողմից: Բացի այդ, 64-ամյա Էրդողանի համար դժվար է հաշտվել այն բանի հետ, որ իսլամական (սուննի) աշխարհն իր առաջնորդ համարի Սաուդյան Արաբիայի գահաժառանգ Մոհամեդ բին Սալմանին, որը 2018թ- կդառնա 33 տարեկան: Չենք բացառում, որ ապագայում Էրդողանը կսկսի պահանջել Մեքքային, ինչպես նաև Մեդինային տալ հատուկ, միջազգային կարգավիճակ, որ Մեքքան և Մեդինան դառնան

[1] Türkiye'nin Sevakin Adası hamlesi sonrası Mısır'ı korku sardı, Akşam, 28.12.2017.
[2] Erdoğan Sudan'dan istemişti... Sevakin Adası neden önemli?, Hürriyet, 26.12.2017.

«յուրատեսակ Վատիկան»: Հատկանշական է, որ Էրդողանն արդեն անում է նման ակնարկներ: 2017թ- դեկտեմբերին նա հայտարարեց, որ Երուսաղեմի կորուստը կհանգեցնի Մեքքայի և Մեդինայի կորստին- «Եթե մուսուլմանական աշխարհը կորցնի Երուսաղեմը, ապա չի կարողանա պաշտպանել Մեդինան: Իսկ եթե մենք կորցնենք Մեդինան, ապա կկորցնենք նաև Մեքքան ու Քաաբան»[1]: Ի դեպ, Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու մասին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի որոշումից հետո թուրքական իշխանամետ ԶԼՄ-ն (*«Sabah», «Daily Sabah», «Yeni Şafak», «Yeni Akit»*) սկսեցին հարձակվել Սաուդյան Արաբիայի վրա[2]. հնարավոր է նաև, որ Թուրքիայում չեն բացառում, որ Սաուդյան Արաբիան կարող է փլուզվել ապագայում, որ նրա փոխարեն կձևավորվեն նոր պետություններ, որոնցից մեկում էլ կընդգրկվեն Մեքքան ու Մեդինան, և Թուրքիան կկարողանա մոտակայքում գտնվող Սուակինում իր ռազմականությանից լրջորեն ներազդել նրա վրա (օսմանյան ժամանակաշրջանում Հիջազի անվտանգությունն ապահովվել է Սուակինից):

6. Սաուդյան Արաբիայի վրա ազդեցության լծակը – Սուակինում ռազմածովային բազան կարող է Թուրքիայի համար հավելյալ լծակ ծառայել ոչ միայն Եգիպտոսի, այլև Սաուդյան Արաբիայի նկատմամբ: Երկու երկրներն էլ սուննի աշխարհում առաջատար դեր ստանձնելու հարցում Թուրքիայի հիմնական մրցակիցներն են: Թեև թուրքական *«Vatan»* թերթի հոդվածագիր Իլքեր Աքգյունգորն Էրդողանի սուդանյան այցից հետո գրեց, որ Թուրքիան 94 տարի անց Աֆրիկայի և Արաբական թերակղզու հողերում ստեղծեց ռազմավարական եռանկյունի՝ Բասրայի ծոց (Կատար), Հնդկական օվկիանոս (Սոմալի) և Կարմիր ծով (Սուդան)[3], մեր կարծիքով՝ այն պարզապես սկսել է Արաբական թերակղզին շրջապատել ռազմականներով և Սաուդյան Արաբիայի շուրջ «թուրքական իսկական եռանկյունի» կստեղծվի ոչ միայն Սուդանում, այլև Քուվեյթում թուրքական ռազմականի ստեղծումից հետո: Կատարի շուրջ ծագած ճգնաժամից հետո Թուրքիան և Սաուդյան Արաբիան հայտնվեցին հակադիր ճամբարներում: Վերջին շրջանում նույնը կարելի է ասել նաև Սիրիայի համար. Թուրքիան սկսել է մերձենալ ՌԴ-ի և Իրանի հետ, դժգոհ է ԱՄՆ-ի հետ Սաուդյան Արաբիայի սերտ հարաբերություններից, իսկ Սաուդյան Արաբիան դժգոհ է Իրանի հետ Թուրքիայի սերտ հարաբերություններից: Եվ զարմանալի չէ, որ Էրդո-

[1] Erdoğan: Kudüs giderse İstanbul gider, Takvim, 15.12.2017.
[2] Pinar Tremblay, Pro-Erdogan media targets Saudis after Trump's Jerusalem decision, Al-Monitor, 22.12.2017.
[3] Ilker Akgüngor, Türk üçgeni!, Vatan, 27.12.2017.

ղանի սուդանյան այցի արդյունքները մտահոգություն հարուցեցին Սաուդյան Արաբիայում: Էր Ռիադում Սուդանի դեսպանատան մամլո քարտուղար Ահմեդ Իբրահիմ ալ-Մութազան շտապեց հայտարարել, որ Սուակինի պատմական նավահանգստի վերականգնման վերաբերյալ թուրք-սուդանյան համաձայնագիրը չի սպառնում արաբական երկրների անվտանգությանը և որևէ կերպ չի շոշափում Հալաիբի եռանկյունու թեման: Ալ-Մութազան նաև դատապարտեց սաուդյան «Ուքքազ» թերթի՝ «Խարթումը Սուակինը հանձնում է Անկարային, Սուդանը կառչել է Թուրքիայից» խորագրով հոդվածում տեղ գտած պնդումները՝ նշելով, որ դրանք վիրավորում են Սուդանի ինքնիշխանությունն ու երրորդ երկրների հետ կապերը զարգացնելու նրա իրավունքները: Դիվանագետն անընդունելի որակեց «Աֆրիկայում Թուրքիայի ագահությունը» արտահայտությունը՝ ընդգծելով, որ Սուակինը պատկանում է Սուդանին, ոչ թե մեկ այլ երկրի[1]: Այդպիսով, Սուդանում թուրքական ռազմակայանի ստեղծումը կարող է լարվածության նոր օջախ դառնալ Թուրքիայի և Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև Թուրքիայի և Եգիպտոսի միջև: Թերևս, պատահական չէր, որ Էրդողանի սուդանյան այցից անմիջապես հետո Էր Ռիադ շտապեց վարչապետ Բինալի Յըլդըրըմը, որը Սաուդյան Արաբիայի թագավոր Սալման բին Աբդուլազիզի և Մուհամեդ բին Սալմանի հետ քննարկեց երկկողմ հարաբերությունները, տարածաշրջանային, միջազգային օրակարգի հարցերը[2]: Թեև Մ.Չավուշօղլուն Խարթումում, պատասխանելով Թուրքիա-Իրան-Կատար առանցքի մասին հարցին, հայտարարեց, որ Անկարան տարբերություն չի դնում իսլամական երկրների միջև և անհրաժեշտության դեպքում մատնանշում է բոլորի սխալները[3]՝ արաբական աշխարհում ուժեղանում է դժգոհությունը Թուրքիայի գործողություններից: Էրդողանի սուդանյան այցից հետո ԱՄԷ արտգործնախարար Անվար Մոհամեդ Գարգաշը հայտարարեց, որ արաբական աշխարհը թույլ չի տա, որ Իրանն ու Թուրքիան կառավարեն իրեն և պետք է միավորվի Սաուդյան Արաբիայի ու Եգիպտոսի առաջնորդության ներքո[4]:

7. Իրանի ռազմածովային հավակնությունների զսպումը – 2011թ. փետրվարին իրանական ռազմանավերը վերջին 30 տարում առաջին անգամ մտան Սուեզի ջրանցք՝ Կարմիր ծովից Միջերկրական ծով անցնելու համար[5]: Ավելի վաղ Իրանի ՌԾՈ-ն օգտագործել է Սուդանի նավա-

[1] Sudan'dan Sevakin Adası açıklaması: Korkmayın, Dünya Bülteni, 28.12.2017.
[2] Başbakan Yıldırım Suudi Arabistan Kralı Selman ile görüştü, Sabah, 27.12.2017.
[3] Анкара не делает различий между исламскими странами, Anadolu Ajansı, 26.12.2017.
[4] Twitter feud: UAE diplomat says Arabs won't be led by Turkey, Middle East Eye, 28.12.2017.
[5] Иранские военные корабли вошли в Суэцкий канал, РИА Новости, 22.02.2011.

հանգիստները, սակայն հետագայում Սուդանն իր նավահանգիստները փակեց Իրանի համար (պաշտոնապես իրանական նավերը վերջին անգամ Սուդանում եղել են 2014թ., Սուդանը սկսեց հակվել դեպի Սաուդյան Արաբիա)։ 2016թ. նոյեմբերին Իրանի ԳՇ պետ Հուսեին Բաքիրին հայտարարեց, որ Սիրիայում և Եմենում կարող են հայտնվել Իրանի ՌԾՈ բազաները։ Նրա խոսքերով՝ իրանական նավատորմը պետք է ունենա մշտական բազավորման կետեր ոչ միայն Արաբական ծովում, այլև Հնդկական օվկիանոսում. «Մենք պետք է ռազմակայաններ ստեղծենք Իրանից հեռու ընկած տարածաշրջաններում։ Դա կարող են լինել Սիրիայի և Եմենի ափերը, կղզիներ կամ էլ լողացող բազաներ։ Կարծում եմ, որ հեռավոր տարածաշրջաններում ռազմակայանները կլինեն շատ ավելի արդյունավետ, քան միջուկային տեխնոլոգիաները»[1]։ Թուրքիան կարող է վերահսկողություն հաստատել Կարմիր ծովում՝ ի հակակշիռ Իրանի, և փորձել այդպիսով զսպել Իրանի ռազմածովային հավակնությունները տարածաշրջանում։ Սուակինում Թուրքիայի ռազմածովային բազան սեպի դեր կխաղա Սիրիայում և Եմենում Իրանի հնարավոր ռազմածովային բազաների միջև, որոնց օգնությամբ Իրանը կկարողանա զենք-զինամթերք մատակարարել «Հզբոլլահին» և հուսիներին։ Մյուս կողմից՝ Թուրքիան պարզապես չի ցանկանում Իրանից հետո մնալ տարածաշրջանում ռազմածովային բազա ստեղծելու առումով և անգամ կրկնօրինակում է Իրանին։ Թեև վերջերս Իրանն ու Թուրքիան սկսել են սերտ համագործակցել տարածաշրջանային հարցերի լուծման հարցում (Սիրիա, Իրաքյան Քրդստան)՝ երկու երկրները շարունակում են մնալ մրցակիցներ տարածաշրջանում և իսլամական աշխարհում առաջատարի դերի համար։

8. Իսրայելի ծովային շրջապատումը – Սուակինում ռազմածովային բազայի ստեղծմամբ Թուրքիան, կարելի է ասել, կշրջապատի Իսրայելը, որի ՌԾՈ-ն հիմնականում կենտրոնացած է Միջերկրական ծովում (Իսրայելն այստեղ ունի 230 կմ, իսկ Կարմիր ծովում՝ 12 կմ ափագիծ)։ 2011թ. աշնանը Թուրքիան Իսրայելի և Կիպրոսի հետ հարաբերությունների վատթարացման ֆոնին առաջ քաշեց «Բարբարոս» գործողությունը, որը միտված էր Միջերկրական ծովի արևելյան հատվածում սեփական ՌԾՈ ընդլայնմանը։ Դրանից հետո տարածաշրջանի դերն ավելի է աճել Թուրքիայի համար՝ դրանում գազի մեծ պաշարներ հայտնաբերելու և կոնֆլիկտների թեժացման պատճառով։ Այժմ Թուրքիան, մի կողմից, արաբական աշխարհի զարգացումների պատճառով շարունակ քննադատում է Իսրայելին, մյուս կողմից՝ խստապես ցանկանում է, որ Իսրայելն իր գազը

[1] В Сирии и Йемене могут появиться базы ВМС Ирана, Anadolu Ajansı, 27.11.2016.

Եվրոպա հասցնի հենց իր և ոչ թե Կիպրոսի ու Հունաստանի տարածքներով: Թուրքիան այդպիսով կդիվերսիֆիկացնի գազի ներկրումը, կստանա ռուսական գազից ավելի էժան գազ և տարանցիկ երկիր կդառնա նաև իսրայելական գազի համար: Այդ համատեքստում Թուրքիան Իսրայելի վրա ներազդելու նորանոր լծակների փնտրտուքի մեջ է, որոնցից մեկը կարող է դառնալ Սուակինում թուրքական ռազմակայանը: Դրանով Թուրքիան Իսրայելին կմոտենա ոչ միայն Միջերկրական, այլև Կարմիր ծովից, որում ազատ նավարկության ռեժիմի պահպանումը մեծ կարևորություն ունի այդ երթուղով Հարավային Ասիայի, Արևելյան Աֆրիկայի և Հեռավոր Արևելքի հետ առևտուր անող Իսրայելի համար:

9. Մյուս երկրներից հետ չմնալու գործոնը – Կարմիր ծովի ավազանը մշտապես գտնվել է գերտերությունների հետաքրքրությունների կենտրոնում: Կարմիր ծովի ափերին են գտնվում Մերձավոր Արևելքի առանցքային երկրներ Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Իսրայելը, ինչպես նաև Սուդանը, Էրիթրեան, Հորդանանն ու Եմենը: Նրանց թվին կարելի է հավելել մոտակայքում գտնվող Ջիբութին և Եթովպիան: Ընդգծենք, որ վերջին շրջանում տարածաշրջանում բավական մեծ ակտիվություն են ցուցաբերում ոչ ափամերձ մի շարք երկրներ՝ Չինաստան, ԱՄԷ, Իրան (ԶԼՄ պնդմամբ՝ Սուդանն Էրդողանի այցից առաջ ռազմակայան ստեղծելու առաջարկով դիմել է ԱՄԷ-ին և ՌԴ-ին): 2017թ. օգոստոսի 1-ին արտերկրում Չինաստանի առաջին ռազմակայանը բացվեց Ջիբութիում: Այս երկրում են գտնվում նաև ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Ֆրանսիայի ռազմաբազաները: ԱՄԷ-ն իր հերթին արտերկրում իր առաջին ռազմածովային բազան կառուցել է Էրիթրեայի հարավում՝ Ասաբ ավիաբազայից ոչ հեռու: Բացի այդ, Սոմալիլենդի խորհրդարանը համաձայնել է 30 տարով (դա կարող է երկարաձգվել) Բերբեր ծովափնյա վայրում ԱՄԷ-ի կողմից ռազմածովային և ավիաբազա կառուցելուն, ինչպես նաև տեղի նավահանգստի կառավարումն ԱՄԷ-ին հանձնելուն: Դա կլինի Աֆրիկայում ԱՄԷ երրորդ բազան. առաջին ռազմակայանը գործում է Լիբիայի Ալ-Մարջ քաղաքում: Բացի այդ, ԱՄԷ ռազմական օբյեկտները գործում են Եմենի Սոկոտրա կղզում, ԱՄԷ-ն փորձում է երկարաժամկետ վարձակալել Սոկոտրան և Ադենի նավահանգիստը (ԱՄԷ էքսպեդիցիոն կորպուսը Եմենում մասնակցում է հուսիների դեմ պատերազմին): Եմենում տարվող ռազմարշավի շրջանակներում Էրիթրեայում ռազմական ներկայություն է հաստատել Սաուդյան Արաբիան, որը մտահոգ է, որ հուսիների հաղթանակի դեպքում Եմենի Ալ-Հոդեյդա նավահանգստում կստեղծվի Իրանի ռազմածովային բազա[1]: Արդեն նշվել է

[1] *Икрамутдин Хан,* Арабские Эмираты строят свою империю в Африке, Голос Ислама, 14.02.2017.

տարածաշրջանում Իրանի ցուցաբերած ակտիվության մասին: Իսրայելը ռազմածովային, ռազմաօդային, հետախուզական բազաներ է հիմնել Էրիթրեայում՝ Դահլակ արշիպելագում և Մասաուա նավահանգստում: Հաշվի առնելով այս ամենը՝ Թուրքիան, բնականաբար, չի ցանկանում հետ ընկնել տարածաշրջանային մրցակիցներից: Կարմիր ծովի տարածաշրջանում Թուրքիայի ռազմակայանի հայտնվելն էլ ավելի կխճճի և կբարդացնի ստեղծված իրավիճակը:

10. Հակամարտության գոտիներին զենքի ապօրինի մատակարարումները – Վերջին տարիներին Թուրքիան շարունակ զենք-զինամթերք է ուղարկում տարածաշրջանի հակամարտության գոտիներ՝ էլ ավելի թեժացնելով դրանք և հետապնդելով սեփական շահերը: Սիրիայում և Իրաքում ԻՊ-ին և ահաբեկչական այլ խմբավորումներին Թուրքիայի կողմից զենքի գաղտնի մատակարարումների մասին շատ է խոսվել: Նկատենք, որ վերջին տարիներին բազմաթիվ են դեպքերը, երբ Թուրքիայից բեռնված և այլ երկրների դրոշի ներքո տարածաշրջանի երկրներ գնացող նավերում հայտնաբերվել է զենք: Ամենավերջին դեպքը գրանցվեց 2018թ. հունվարին, երբ Հունաստանի առափնյա անվտանգության ծառայությունը Կրետե կղզու մոտ կանգնեցրեց Տանզանիայի դրոշով երթևեկող *«Andromeda»* լցանավը, որում հայտնաբերվեցին 410 տ պայթուցիկ նյութ, պայթուցիչներ և այլ սարքավորումներ (դրանք պահվել են 29 բեռնարկղում): Թուրքիայի Մերսին և Իսքենդերուն նավահանգիստներում բեռնված նավը շարժվում էր դեպի Լիբիա, որի հանդեպ 2011թ. զենքի մատակարարումների բեռնարգելք են դրել ԵՄ-ն ու ՄԱԿ-ը[1]: Նշենք, որ 2015թ. սեպտեմբերին դարձյալ Կրետեի մոտ կանգնեցվեց Իսքենդերունից Լիբիա մեկնող բեռնանավը, որում նույնպես հայտնաբերվեց զենք: Անկարան սակայն պնդում էր, թե Լիբիա ուղարկվել են միայն շինանյութեր[2]: 2013թ. ապրիլին հրաձգային զենքի հազարավոր միավորներ հայտնաբերվեցին Թուրքիայից Լիբիա գնացող *«El-İntizar»* ձկնորսական նավում, որը երթևեկում էր Լիբիայի դրոշով և Թուրքիա էր ժամանել Մալթայից[3]: Զենքի ապօրինի մատակարարումներն առնչվել են նաև Սուդանին ու Եմենին: 2017թ. մայիսին հունական կողմն Էգեյան ծովում գտնվող հունական Քոս կղզու մոտ կանգնեցրեց թուրքական նավահանգստից Սուդան մեկնող *Mekong Spirit* բեռնանավը՝ կասկածելով, որ այն պայթուցիկ է տեղափոխում Սուդան, որի նկատմամբ գործում է ՄԱԿ և ԵՄ

[1] Türkiye'den yüklenip Libya'ya giden gemide 29 konteyner dolusu patlayıcı yapımında kullanılan malzeme bulundu, T-24, 11.01.2018.
[2] Türkiye'den Libya'ya giden gemide silah yakalandı: Ankara 'Silahlar belgeli' dedi, Diken, 02.09.2015.
[3] *Dinçer Gökçe,* Türkiye'den giden binlerce silah son anda yakalandı, Hürriyet, 25.04.2013.

զենքի բեռնարգելքը[1]: 2011թ. մարտին ԱՄԷ ոստիկանությունը կանխեց Թուրքիայից $4.36 մլն ընդհանուր արժողությամբ 16 հազ. ատրճանակի ուղարկումը Եմեն[2], իսկ 2013թ. հուլիսին Օմանի ոստիկանությունը կանխեց Թուրքիայից 30.393 ատրճանակի ուղարկումը Եմեն[3]: 2012թ. նոյեմբերին Եմենի ՊՆ-ն հայտարարեց, որ Թուրքիայից նավով ուղարկված խմորեղենի տուփերում հայտնաբերվել է $120 մլն արժողությամբ 5412 միավոր հրաձգային զենք[4]: 2013թ. հունվարին Ադենում հայտնաբերվեց 3780 միավոր հրաձգային զենք, ինչը որակված էր «պլաստիկա և շինանյութ»[5]: Փաստորեն, Թուրքիայից Եմեն զենքի առաքումների այդ չորս խմբաքանակներում հայտնաբերվել և առգրավվել է 55 հազ. միավոր զենք, և զուր չէ, որ թուրքական մամուլը գրեց, թե Թուրքիան զենքով հեղեղում է Եմենը: Այդպիսով, զենքի ապօրինի մատակարարումների հաճախակիությունը, դրանցում շոշափվող զենքերի տիպն ու քանակը, ֆինանսական արժեքը, մատակարարումների լայն աշխարհագրությունը, հասցեատեր երկրներն ու դրանցում տիրող անկայուն իրավիճակը հիմք են տալիս պնդելու, որ թուրքական իշխանությունները հազիվ թե կանգնած չեն այս ամենի հետևում: Սուակինում ստեղծվելիք ռազմակայանը նույնպես կարող է ծառայել տարածաշրջանի թեժ կետեր Թուրքիայից զենքի ապօրինի մատակարարումների համար: Դրանից կարող են օգտվել նաև պաղեստինյան, իսլամիստական ծայրահեղական կազմակերպությունները, որոնք փորձում են Կարմիր ծովն օգտագործել զենք-զինամթերքի ապօրինի փոխադրումների համար:

Այսպիսով, վերոնշյալը վկայում է, որ կան ծանրակշիռ դրդապատճառներ, որոնք կարող են Թուրքիային մղել Սուակինում ռազմակայան հիմնելուն: Արդյոք Թուրքիան կգնա՞ այդ քայլին. կարծում ենք, որ դրա հավանականությունը բավական բարձր է՝ հաշվի առնելով, որ դա բավական օգտակար կլինի Թուրքիայի համար: Միևնույն ժամանակ, Սուակինում թուրքական ռազմակայան հիմնելը կախված կլինի Սուդանում և հատկապես Թուրքիայում տիրող ներքաղաքական վիճակից՝ երկրի ներսում Էրդողանի հաղթարշավից (2019թ- Թուրքիայում սպասվում են միանգամից 3 ընտրություններ): Վերոնշյալը նաև վկայում է, որ Թուրքիան հենց այնպես (հումանիտար և այլ օգնության տեսքով) չի աջակցում աֆրիկյան այս կամ այն երկրին (և ընդհանրապես), որ ունի հեռահար նպատակներ, որոնք էլ իրագործում է պատեհ պահերին: Նույն պատկերին ականատես

[1] Yunanistan, Türkiye'den Sudan'a giden patlayıcı yüklü gemiye el koydu, Birgün, 25.05.2017.
[2] Türkiye'den Yemen'e 16 bin silah iddiası, Hürriyet, 24.03.2011.
[3] Türkiye'den Yemen'e silah yağmuru!, Ege'de Sonsöz, 13.07.2013.
[4] Muhaliflere Türkiye'den gönderilen silahlar böyle yakalandı, Oda.TV, 04.11.2012.
[5] Yemen'de yine Türk silahları!, Vatan, 26.01.2013.

ենք եղել Սոմալիի պարագայում, երբ Թուրքիան տարիներ շարունակ հումանիտար խոշոր օգնություն էր ցուցաբերում այդ երկրին, նրան պահում էր իր ուշադրության կենտրոնում (2011թ- Թուրքիայի վարչապետ Էրդողանն այցելեց Սոմալի և դարձավ վերջին 20 տարում այդ երկիր այցելած օտար պետության առաջին ղեկավար)։ Եվ ահա այդ ամենի պատասխանը չուշացավ- 2017թ- աշնանը Սոմալիում բացվեց արտերկրում Թուրքիայի առաջին ռազմակայանը։ Արդյունքում՝ Սուդանում (Սուակինում) կարող է ստեղծվել արտերկրում Թուրքիայի երրորդ ռազմակայանը (եթե մինչ այդ ռազմակայան չբացի տարածաշրջանի որևէ այլ երկրում)։

Հունվար, 2018թ.

ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան

Ամփոփագիր

Թուրքիան վերջին տարիներին վարում է նեոօսմանյան քաղաքականություն, որի բաղադրիչներից մեկը դարձավ «ռազմակայանային» քաղաքականությունը, այն տարածքներում իր ռազմական ներկայության հաստատումը, որոնք նախկինում մտել են Օսմանյան կայսրության կազմի մեջ։ Թուրքիան այդ քաղաքականության շրջանակներում արդեն ռազմական ներկայություն է հաստատել Սոմալիում և Կատարում, այժմ փորձելու է ռազմակայան (ռազմածովային բազա) հիմնել Սուդանում։ Հոդվածում ներկայացվում է Կարմիր ծովի տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը, վերլուծության են ենթարկվում այն գործոններն ու դրդապատճառները, որոնք Թուրքիային կմղեն ռազմակայան հիմնել Սուակին կղզում, և այն օգուտները, որոնք նա կարող է ստանալ դրանից։

О ВОЕННОМ ПРИСУТСТВИИ ТУРЦИИ НА КРАСНОМ МОРЕ

Айк Габриелян

Резюме

Турция в последние годы проводит неоосманскую политику, одним из компонентов которой стало установление военного присутствия на тех территориях, которые ранее входили в состав Османской империи. Турция в рамках этой политики уже установила свое военное присутствие в Сомали и в Катаре. Теперь она будет пытаться создать свою военную (военно-морскую) базу в Судане. В статье представлена нынешняя военно-политическая ситуация в регионе Красного моря, анализируются факторы и стимулы того, почему Турции хотелось бы построить свою базу на острове Суакин, и те выгоды, которые она может получить от этого.

ABOUT TURKEY'S ACCESSION TO THE GEOPOLITICAL GAME IN THE RED SEA

Hayk Gabrielyan

Resume

In the recent years Turkey has pursued a neo-Ottoman policy, one of components of which is a "military base" policy, with the establishment of Turkey's military presence in areas that in the past were part of the Ottoman Empire. Within the framework of this policy Turkey has already set up a military presence in Somalia and Qatar. Now Turkey will try to establish a military base (naval base) in Sudan. The article presents the military-political situation in the Red Sea region, analyzes the factors and motives that prompt Turkey to build a military base on the island of Suakin and the benefits that it can get from it.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ԳՈՅԱՏԵՎՈՒՄԸ ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարիամ Սաժեջ[*]

Բանալի բառեր ՝երաժշտություն, մշակույթ, ինքնություն և մշակույթ, հանրային մշակույթ, հայկական երաժշտություն, հարցման մասնակիցներ։

Հարցն այն է, թե ինչ կապ կա երաժշտության պահպանման և մշակույթի միջև: Արդյո՞ք երաժշտությունն ունի գեղարվեստական ասպեկտ: Արդյո՞ք դա պետք է պահպանել որպես մշակույթի տարր: Արդյո՞ք երաժշտությունը պարզապես երաժշտություն է և որևէ կապ չունի մշակույթի և մշակութային ինքնության հետ: Այս հարցադրումները թույլ են տալիս որոշել, թե երաժշտությունն ինչ հարաբերության մեջ է մշակույթի հետ և ինչ դիրք է զբաղեցնում հասարակության մեջ: Անդրադառնանք մշակույթին, որպեսզի պարզ դառնա, թե ինչ է այն և ինչ կապ ունի երաժշտության հետ:

Տարբեր ժամանակներում և վայրերում մշակույթներն ունեցել են տարբեր դրսևորումներ և արտահայտություններ: Այս բազմազանության արմատները մարդկային խմբերի և հասարակությունների ինքնությունների միավորման ու ճյուղավորման մեջ են գտնվում: Որպես փոխանակումների, նորարարության և ստեղծարարության աղբյուր՝ մշակութային բազմազանությունը նույնքան օգտակար է մարդկության համար, որքան կենսաբանական բազմազանությունը՝ բնության համար: Մշակութային բազմազանությունը մարդկային համընդհանուր ժառանգություն է, որի կարևորությունը պետք է իմանալ և ճանաչել՝ ի նպաստ ներկա և ապագա սերունդների բարօրության: Ռ.Բրաունը (1949թ.) այսպես է բացատրում մշակույթ հասկացությունը. մշակույթը գործընթաց է, որի ժամանակ սոցիալական որոշակի դասակարգի կամ խմբի շրջանակում ձեռքից ձեռք, անձից անձ և սերնդից սերունդ են փոխանցվում լեզուն, հավատալիքները, ընկա-

[*] ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ։

լումները, գիտելիքները, հմտությունները, ինչպես նաև նորմերն ու չափանիշները[1]: Թ.Բ. Բոտոմորը[2], խոսելով մշակույթի մասին, նշում է, որ այս եզրույթը տրվում է մարդկանց կողմից ժառանգվող, կիրառվող, աճող և փոխանցվող նյութական և ոչ նյութական կուտակային բաղադրատարրերին[3]:

Թուքլայնբերգը, սահմանելով մշակույթ հասկացությունը, նշում է. «Հանրության տեսակետից մշակույթը արվեստի և մտքի ձեռքբերումներն է և զարգացումը, և գիտության, արվեստի, փիլիսոփայության ու գրականության ծաղկումը վկայում է տվյալ ժողովրդի տաղանդի մասին: Իսկ սոցիոլոգների և ազգագրագետների տեսանկյունից՝ մշակույթը, բացի վերը նշվածներից, ներառում է այն ամենը, ինչն անձը որպես հասարակության անդամ ստանում է հասարակությունից, այսինքն՝ փորձի և ավանդույթների միջոցով յուրացրած բոլոր սովորույթներն ու գործողությունները՝ հավելած նաև խմբի կողմից արտադրվող բոլոր նյութական իրերը և այն ամենը, ինչն արտացոլվում է արվեստի ստեղծագործություններում կամ գիտական հետազոտություններում: Այն ամեն ինչում, որ ուտում, խմում և հագնում ենք, կամ մեր կառուցած տների տեսակներում, ընտանիքի անդամների և հասարակության անդամների հետ ունեցած փոխհարաբերություններում, հասարակության արժեհամակարգում, մեր սովորածում, լավի ու վատի մասին ունեցած մեր ընկալումների և իդեալների մեջ, այլ հասարակությունների մասին կազմած կարծիքներում արտահայտվում են մշակույթի դրսևորումները»[4]:

Տեսության շրջանակները

Մշակութային վերարտադրության տեսության առումով, որը ներկայացված է եվրոպացի սոցիոլոգներ Բասիլ Բեռնշտայնի և Պիեռ Բուրդյոյի աշխատություններում, պետք է նշել, որ այս երկու տեսաբանների հիմնական վարկածի համաձայն՝ կրթության և դաստիարակության խնդիրը հասարակության մշակութային ժառանգության փոխանցումն է: Ըստ այս երկու սոցիոլոգների, կարևոր է իմանալ, թե ինչ է փոխանցվում մշակութային և սոցիալական ուսմունքների միջոցով: Ըստ Բեռնշտայնի, որը հանդիսանում

[1] *Ashori D.,* Definitions and concept of culture book, publisher: Nashr, (2014), p. 54.

[2] *Thomas Burton Bottomore* (8 April 1920, England – 9 December 1992, Sussex, England), usually known as Tom Bottomore and published as T.B. Bottomore, was a British Marxistsociologist. Bottomore was Secretary of the International Sociological Association from 1953 to 1959. He was a prolific editor and translator of Marxist works, notably his collections published in 1963: Marx's Early Writings and Selected Writings in Sociology and Social Philosophy.

[3] *Moayeni J.,* Theory of culture,
https://farhangi.mcls.gov.ir/icm_content/media/image/2014/08/45156_orig.pdf

[4] *Roholamini M.,* context Composite cultural studies in cultural anthropology and anthropology, Publishing: Attar, (2012), p. 19.

է նոր համադրության մունետիկը, հասարակության երկու՝ հին և նոր մշակույթներ կամ մշակութային տարրեր կարող են համակցվել և առաջացնել մի նոր վերարտադրություն: Այդ առումով կարելի է մատնանշել երաժշտական մշակույթը, որը պահպանելու համար պետք է այն վերարտադրել և փոխանցել նոր սերունդներին: Նորմերի և մշակութային արժեքների սերնդեսերունդ փոխանցումը կոչվում է մշակութային վերարտադրություն: Մշակութային վերարտադրություն ասելով հասկանում ենք այն մեխանիզմները, որոնց միջոցով մշակութային փորձը շարունակվում է ժամանակի ընթացքում:

Ժամանակակից հասարակություններում կրթադաստիարակչական գործընթացները դասվում են մշակութային վերարտադրության հիմնական մեխանիզմների շարքին և չեն գործում միայն այն ամենի միջոցով, ինչն ուսուցանվում է ֆորմալ կրթության ընթացքում: Մշակութային վերարտադրությունը տեղի է ունենում առավել խոր եղանակով՝ թաքնված ծրագրերի միջոցով[1]: Երաժշտական մշակույթի վերարտադրությունը և պահպանումը, ինչպես նաև այդ գիտության դրսևորումն ունեն իրենց առանձնահատկությունները յուրաքանչյուր մշակույթի և էթնիկական խմբի համար: Այն տարբերվում է հասարակությունից հասարակություն, այդ պատճառով նրա երաժշտությունը նույնպես լինում է տարբեր և ներկայացնում է տվյալ հասարակության մշակույթի և ինքնության խորհրդանիշը: Մշակույթը և ինքնությունը սերտորեն կապված են միմյանց հետ, այնպես, որ յուրաքանչյուր հասարակության մշակույթ ստեղծում է նույն հասարակության անդամների ինքնությունը:

Ինքնություն և մշակույթ

Ընդգծենք մշակույթի սահմանման հետևյալ կարևոր կողմը, որ գիտության և արվեստի զարգացումը մշակույթի զարգացումն է: Երաժշտությունն արվեստի ամենակարևոր ճյուղերից և գեղագիտության սիմվոլներից է: Յուրաքանչյուր մշակույթ և ազգություն ունեն իրենց յուրահատկությունները և մյուս հասարակություններից առանձնացնող տարբերակիչ կողմերը, հետևաբար յուրատիպ է նաև նրանց երաժշտությունը: Երաժշտությունը մշակույթի և ինքնության արտահայտություններից է: Մշակույթը և ինքնությունը սերտ փոխկապակցված են, յուրաքանչյուր հասարակության մշակույթը ձևավորում է այդ հասարակության անդամների ինքնությունը:

[1] *Yazdanian M.,* Position of theoretical and conceptual framework in the research, Faslnameh.org, no.13452 (2013).

Անդրադառնանք ինքնության խնդրին: Մշակույթը յուրաքանչյուր ազգի անձնագիրն է, իսկ մշակութային ինքնությունը՝ յուրաքանչյուր ազգի ջանքերի, ստեղծարարության, փառքի և, ընդհանուր առմամբ, անցյալի ու ներկայի պանծալի կամ ամոթալի վայրիվերումների պատմական վկայագիրը: Օտար մշակույթների հետ ունեցած փոխշփումների և փոխազդեցությունների ընթացքում հարազատ ազգի մշակութային ինքնության պահպանումը կարևորվում է յուրաքանչյուր ազգի հայրենասեր մարդկանց կողմից, ովքեր սնվել ու հագեցել են այդ մշակույթի ակունքներից, աճել ու զարգացել այդ մշակույթի գրկում՝ հայրենի աշխարհի հոգեպարար ու գորովալի օրորների ներքո, և հասել մտավոր ու հոգևոր ծաղկունքի [Սահիդիքիա, 2006թ., էջ 23][1]: Ինքնություն և հավաքական ինքնություն թեման չի կարելի առանձնացնել մշակույթից, հատկապես Իրանում, որտեղ, հաշվի առնելով էթնիկ բազմազանությունը և տարածումը, ինչպես նաև ազգային և էթնիկ ենթամշակույթների առկայությունը, մշակույթը մարմնավորում է նույն հասարակության մշակութային առանձնահատկություններով ինքնությունը: Հետևաբար, հնարավոր չէ գտնել մարդու ինչ և ով լինելու (ինքնության) մասին հարցի պատասխանն առանց մշակույթի թեմային անդրադառնալու: Այլ կերպ ասած, եթե մշակույթը համարենք մարդկային ընդհանուր գաղափարների հանրագումար, ապա այն գտնվում է այնպիսի տարբերությունների համատեքստում, որտեղ գաղափարական տարբերությունները հանգեցնում են մշակութային տարբերությունների: Հետևաբար, ինքնությունները նույնպես կլինեն միմյանցից տարբեր: Այսպիսով, մշակութային տարբերությունները հանգեցնում են ինքնության տարբերությունների, մյուս կողմից, ինքնության տարբերությունները, անշուշտ, բխում են մշակութային տարբերություններից: Հետևաբար, ինքնության թեման նույնն է, ինչ մշակույթի թեման, քանի որ ինքնության բաղադրիչներից շատերը, որոնցով մարդուն կամ խմբին տարբերում ենք մյուսից կամ մյուսներից, տեղ են գտել և ձևավորվել մշակութային համակարգի սրտում[2]: Այսպիսի արժեք ներկայացնող և հասարակության ու ժողովրդի ինքնությունը նշանավորող սիմվոլի պահպանման, գոյատևման և տարածման համար մի՞թե չպետք է ջանք թափել և այն փոխանցել հաջորդ սերունդներին: Ի՞նչ է երաժշտությունը: Երաժշտությունն առավել է, քան բառերով արտահայտվող խոսք, և հենց դրա մեջ է նրա հրաշքը: Երաժշտությունը խոսքի ու լեզվի անկարողության փոխարինումն է և անշոշափելի զգացումների արտահայտման ձև: Այնտեղ, որտեղ լեզուն ի զորու չէ արտահայտել, երաժշտությունը դառնում է հոգու ապավեն և անմեկնելի զգացումների հաղորդման լեզու:

[1] Journal of Science of Art Culture. http://www.flashkhor.com/forum/showthread.php?tid=236204
[2] http://aramesh-ravan.blogfa.com/post-78.aspx

Մեր օրերում, առավել քան երբևէ, զգալի է երաժշտության ներկայությունը մշակույթի հանրային ոլորտներում, և այն որպես սոցիալական գործողություն դրսևորվում է տարբեր կերպերով ու գործառույթներով[1]: Երաժշտությունը ինքնություն կերտող հզոր գործիք է և ժողովուրդների մշակույթի կարևոր բաղադրատարրերից մեկը: Տարբեր հասարակություններում այն մշակույթի ճանաչման ու սահմանման կարևոր միջոց է, երաժշտական առանձին ստեղծագործություններ շաղկապված են հասարակությունների հետ և ազգային դրոշի պես ներկայացնում են այդ հասարակությունը[2]: Այսօր մշակութային փոփոխություններն ու զարգացումներն են ուղղորդում հասարակությունների ընթացքը, հետևաբար՝ անցյալի մշակույթի փոխանցումը գալիք սերնդին, ինչպես նաև մշակութային նորարարություններն ամենակարևոր քայլերից են որևէ հասարակության անկումը կասեցնելու համար:

Քեմբրիջի համալսարանի դասախոս Էդուարդ Հալթ Քարը իր «Ի՞նչ է պատմությունը» արժեքավոր գործում գրում է. «Անցյալը կարելի է հասկանալ միայն ներկայի լույսի ներքո, իսկ ներկա ժամանակը հնարավոր է լիովին ըմբռնել միայն անցյալի լույսի ներքո: Պատմությունն այստեղ երկակի գործառույթ ունի մարդու համար. Մի կողմից՝ մեծացնում է անցյալի հասարակության ըմբռնման կարողությունը, մյուս կողմից՝ ընդլայնում ներկայի հասարակության վրա ունեցած տիրապետումը: Ինչպես Հեքրեսկովետիսն է նկատում, մշակույթն այն շենքն է, որ ի մի է բերում բոլոր այն համոզմունքները, վարքագծերը, գիտելիքները, արժեքները և նպատակները, որոնք հատկանշում են որևէ ժողովրդի ապրելակերպը: Մշակույթի միջոցով է, որ հասարակության անդամները սովորում են, թե ինչպես մտածեն ու գործեն: Ուսումնասիրողներն այն կարծիքին են, որ ցանկացած հասարակության ծաղկումն ու վերելքը պայմանավորված են նրա մշակույթով, մշակույթի միջոցով հնարավոր է դիտարկել և կանխատեսել այդ հասարակության կյանքի ու շարժընթացի ուղին: Մշակույթը ներառում է տվյալ երկրի մարդկանց ստեղծագործությունները, խոհերն ու աշխարհայացքը, այսինքն՝ այն տարրերը, որոնցով կառուցվում է նրանց ներքին ու արտաքին բովանդակությունը: Սոցիալական ինստիտուտների, կազմակերպությունների և կառույցների ձևն ու կերպն արտացոլում են այդ ժողովրդի ազգային մշակույթը, քանի որ ցանկացած երկրի մշակույթ ազդեցություն է կրում այդ երկրի աշխարհագրական առանձնահատկություններից, կրոնից,

[1] *Bowie Andrew* (1999), "Adorno, Heidegger and the Meaning of Music". Thesis Eleven, N.56, pp. 1–23.
[2] *Hosseinzadeh Z.,* Maintaining Iran-Islamic Identity in the Process of Globalization, Quarterly: Strategic Policy Studies, Article 3, Volume.2, Issue. 3, (2011), p. 10.

իդեալներից ու ձգտումներից, հույզերից ու զգացումներից: Որքան ժողովուրդն ավելի տեղյակ լինի իր պատմական ու մշակութային պատմությանը, այդքան ավելի կձգտի պահպանել իր գոյությունը, ինքնությունը և դիրքն այլ ազգերի ու մշակույթների հետ փոխշփվելիս, կրճատել սեփական թերություններն ու բացերը, քանի որ մշակութային ինքնությունը հզորացնում և կենսունակ է դարձնում ժողովրդին: Ինչպես Ժորժ Բալանդիեն է նշում, մշակույթը գոյատևման մոտիվացիա և միջոց է, փորձանքներից ցանկացած ազգի փրկության գաղտնիքը[1]:

Մշակութային արժեքների, այդ թվում երաժշտական արժեքների պահպանումը հասարակական պարտավորություն է: Մշակութային հասկացությունների և ազգային արժեքների և ավանդույթների փոխանցումը կարևոր խնդիր է հասարակության մշակութային պատասխանատուների համար, և ամենուր արվեստն այս նպատակին հասնելու կարևոր գործոն է:

Փարաքսիալ տեսությունը կարծում է, որ երաժշտությունն ունի կարևոր արժեքներ և կարողունակություններ: Երաժշտություն սովորելու ամենակարևոր արժեքներից են սեփական անձի արժևորումն ու պահպանումը, յուրահատուկ հուզազգացական ապրումներն ու փորձը, երաժշտությունից հաճույք և բավարարվածություն ստանալը: Արժեքներն են երաժշտություն սովորելու և ուսուցանելու գլխավոր նպատակը: Այս արժեքներն ու նպատակները հասանելի, ընկալելի և իրացվելի են բոլոր աշակերտների ու սովորողների համար: Երաժշտության դասընթացները և ուսուցումը կօգնեն երեխաների մեջ զարգացնելու երաժշտական լսողությունը, երաժշտություն ստեղծելու և կատարելու կարողությունը, երաժշտություն լսելու ունակությունը, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար կզարգանան, և սաները կկարողանան հասնել այդ արժեքներին: Ըստ այս տեսության՝ երաժշտության ուսուցումը զարգացնում է մարդու տեսողական, լսողական, տրամաբանական և վերլուծական կարողությունները, նաև շեշտադրում է սեփական անձի ու խմբի ինքնությունը և ներգրավվածությունը հասարակության մեծ խմբերում: Երաժշտության ուսուցումը երեխաներին սովորեցնում է բազմամշակութայնությունը, ներկայացնում տարբեր ազգերի ու խմբերի երաժշտական արժեքները, ճանաչել տալիս սեփական անձը և հայացքները, ինչպես նաև օտարների մոտեցումները: Երաժշտության ուսուցումն ընդլայնում է երաժշտական ոլորտի արժեքները՝ ներառելով համամարդկային արժեքները[2]:

[1] *Varjavand P.,* Progress and Development on the Foundation of Cultural Identity, Public Joint Stock Company, (1987), p. 25.
[2] http://www.davidelliottmusic.com/music-matters/music-education-why-what-how/

Երաժշտությունը յուրաքանչյուր երկրի հանրային մշակույթի կարևոր մասն է, որի ամենակարևոր հատվածները գոյատևել են հազարամյակներ: Արվեստի այլ բաժինները, ինչպես, օրինակ, նկարչությունը, կարող են որոշակի փոփոխություններ կրել, որոնք կարելի է տեսնել թանգարաններում, սակայն դրանց հարատևումը հաջորդ սերունդների կողմից գնահատվում է որպես պատմական զարգացման ուղի, հետևաբար թույլ է լինում նրանց մշակութային նստվածքը:

Այլ է իրողությունը երաժշտության դեպքում: Երաժշտությունը, ունենալով հասարակական և հուզազգացական խոր ներգործություն և առավել սերտ համադրություն մշակույթի մյուս կարևոր բաժնի՝ գրականության հետ, ցանկացած երկրի մշակութային ինքնության կարևոր չափորոշիչներից մեկն է համարվում:

Այսպիսով, թվում է, թե ներկայում ազգային երաժշտությանն ինչ-որ տեղ լուրջ վտանգ է սպառնում, հատկապես վերջին տասնամյակներում, երբ երրորդ աշխարհի երկրներից թափ է ստացել արտագաղթը: Հայրենի երկրից դուրս ծնվող գաղթականների երկրորդ և երրորդ սերունդների կամ նրանց զավակների մեջ խամրում ու թուլանում է կապն էթնիկ երաժշտության և այդ երաժշտությանն առնչվող մշակույթի այլ բաժինների՝ առակների, պատմվածքների, հեքիաթների, պոեզիայի և գրականության հետ: Նրանք աստիճանաբար հեռանում են այդ բոլորից: Երկրի ներսում ևս, թեև քիչ թե շատ դեռևս գոյատևում է սեփական երաժշտությունը, սակայն ապագայում գուցե անհետանան այս թույլ կապերն անգամ: Սա է պատճառը, որ նման պայմաններում հայտնված շատ երկրներ մշակութային քաղաքականությունն առաջնահերթություն են համարում՝ այն վեր դասելով նույնիսկ քաղաքական ու տնտեսական քաղաքականությունից: Նրանք փորձում են պահպանել այդ արմատները, որոնք համարվում են սեփական մշակույթի, նույնիսկ երկրի անվտանգության կարևոր բաղադրիչը՝ խույս տալով մշակութային խառնակությունից:

Դաշտային հետազոտություններ

Հաշվի առնելով այս հանգամանքները՝ անհրաժեշտ է կիրառել համապատասխան միջոցներ և ուղիներ սեփական երաժշտության պահպանման, գոյատևման, տարածման և հետագա սերունդներին փոխանցելու համար: Այս ուղիներին ու միջոցներին անդրադարձել են նաև ստորև բերված հարցազրույցներին և հետազոտությանը մասնակից անձինք:

Հաշվի առնելով վերոնշյալը, կապված յուրաքանչյուր հասարակության մշակույթի կարևորության հետ՝ այս առնչությամբ առավել ընդլայնված

քննարկում կարելի է իրականացնել դաշտային հետազոտության անցկացմամբ, քանի որ դաշտային հետազոտությունները ցույց են տալիս, որ համայնքի սրտում գտնվող մարդիկ ավելի լավ գիտեն փաստերը և, այսպիսով, այդ առնչությամբ օգնում են հետազոտողներին, հատկապես սոցիալական գիտությունների գիտնականներին: Իսկ երբ հիմնվում ենք քանակական և որակական հետազոտություններից ստացված տվյալների վրա, ապա ավելի լավ ենք հասկանում, թե որ ոլորտներին պետք է ուշադրություն հատկացնել հնարավորինս ավելի շատ արդյունքներ ստանալու համար:

Ինչպես կտեսնենք ստորև, հաշվի առնելով խնդրի կարևորությունն ու նշանակությունը՝ մեր ձեռնարկած հետազոտությունը վերաբերում է մշակույթի պահպանման և գալիք սերունդներին փոխանցելու հիմնահարցին: Հետազոտությունն իրականացվել է Իրանի Իսպահան քաղաքի հայ համայնքի շրջանում, ներառվել է իրանահայ այդ համայնքի ներկայացուցիչներից 170 մարդ (20 տարեկանից բարձր): Հետազոտության առաջին մասը ներառում է փակ հարցեր, իսկ երկրորդ մասը բաղկացած է բաց հարցերից:

Առաջին մասում հիմք ենք ընդունել այն կանխավարկածը, որ հայ երաժշտության ճանաչման և հայ մշակութային ինքնության պահպանման միջև կա փոխկապակցվածություն: Մշակվել են մի շարք հարցադրումներ, որոնց պատասխանել են սոցհարցման մասնակիցները, այնուհետև հավաքագրվել ու խմբավորվել են պատասխանները, տվյալները մուտքագրվել են համակարգչային *SSSP* ծրագիր, որոնց հիման վրա կազմվել է *Աղյուսակ 1*-ը.

Աղյուսակ 1

Մշակույթի պահպանման գործում երաժշտության դերի և նշանակության վերաբերյալ հարցման մասնակիցների գնահատականը

Գնահատական	Դիտարկումների թիվ.	Հաճախականություն.	Ստանդարտ շեղում	P արժեք
Ցածր	6 (3.6)	3.24	0.54	<0.001
Միջին	126(74.1)			
Բարձր	38(22.4)			

Ինչպես ցույց են տալիս աղյուսակում ամփոփված տվյալները՝ 170 մասնակիցների 3.6%-ը նշել է, որ այս քայլերը փոքր չափով կարող են դեր ունենալ մշակույթի պահպանման գործում: Հարցվածների 74.1%-ը կար-

ծում է, որ մշակույթի պահպանման գործում երաժշտության ազդեցությունը միջին մակարդակի է, իսկ 22.4%-ը համոզված է, որ նշված քայլերի շնորհիվ երաժշտությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ հասարակության մշակույթի պահպանման գործում: Այսպիսով, ըստ ձեռք բերված արդյունքների՝ ստանդարտ շեղումը կազմում է 0.54: Ստանդարտ շեղման միջակայքը 0-ից 1 է, ուրեմն ստացված մեծությունը մոտ է 1-ին: Նշանակալիության մակարդակը կազմում է 3.24, այսինքն՝ մի փոքր ավելի բարձր է միջին մակարդակից, հետևաբար, հարցման մասնակիցների մեծ մասը միջինից բարձր մակարդակով է գնահատում երաժշտության դերն ու ազդեցությունը մշակույթի պահպանման գործում, այսինքն՝ գտնում է, որ երաժշտությունը, երաժշտություն լսելը, սովորելը և երաժշտագետներին հովանավորելը միջին չափով կարող է նպաստել մշակույթի պահպանմանը:

Հետազոտության հաջորդ հատվածում նույն մասնակիցներին առաջադրվել են հարցեր, թե ինչպես կարելի է պահպանել և տարածել հայ երաժշտությունը: Նպատակ ենք ունեցել շոշափել հանրության ընդհանուր կարծիքներն ու մոտեցումներն ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Այս հատվածում ևս ամփոփվել են տրված պատասխանները, դրանք խմբավորվել են երկչափ (երկկողմ) աղյուսակներում, որոնք ներկայացված են *Աղյուսակ 2*-ում.

Աղյուսակ 2

Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարելի է պահպանել և փոխանցել հայկական երաժշտությունը

Ամսաշ	Պատասխաններ	Պատասխան.	Տոկոսը
1	Երեխաներին ուսուցանել	62	35%
2	Երաժշտություն լսել	36	21%
3	Ռադիո-հեռուստատեսությունից հեռարձակել	17	10%
4	Երեխաներին խրախուսել, որ սովորեն երաժշտություն	9	5%
5	Հայ երաժշտությունն օգտագործել տարբեր արարողություններում և ծեսերում	22	13%
6	Տեղյակ լինել հայ երաժշտության գործառույթներին	11	6%
7	Հին երգերի, երաժշտության և բառերի օգտագործումը մերօրյա երաժշտության մեջ	12	7%
8	Ոչ հավաստի պատասխաններ	1	1%
9	Ոչ մի պատասխան	3	2%
Ընդամենը		170	100%

Այս հարցը վերջինն է բաց հարցերի շարքից: 170 մասնակիցների 35%-ը կարծում է, որ երեխաներին ու զավակներին հայ երաժշտություն սովորեցնելն ամենաարդյունավետ միջոցն է հայ երաժշտությունը պահելու և պահպանելու համար: 21%-ը նշել է հայ երգ ու երաժշտություն ունկնդրելու կարևորությունը, իսկ 13%-ի դիտարկմամբ՝ հայկական հավաքույթներում, հանդիսություններում և տոներում, հատկապես հարսանյաց հանդեսներում հայ երգից և երաժշտությունից օգտվելը կարող է նպաստել հայկական երաժշտության պահպանմանը: 10%-ն այն կարծիքին է, որ Իրանի ռադիոհեռուստատեսությունից հայկական երաժշտության հեռարձակումը կարող է օգտակար և արդյունավետ լինել այս ուղղությամբ: 6%-ը նշել է երաժշտության գործառույթներն իմանալու և ճանաչելու անհրաժեշտությունը և դերը, իսկ 7%-ը նշել է, որ մեր օրերում հին, ավանդական երաժշտություն օգտագործելը, այն ներկայացնելը հասարակության անդամներին, հին ու նոր երաժշտության համադրումը և կատարումը կարող են մեծ դեր ունենալ հայկական երաժշտության հարատևման համար:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ երաժշտության ուսուցումը, սովորելը, ունկնդրելը և օգտագործելը այն միջոցներն են, որոնք կնպաստեն երաժշտության տարածման և նրա ինքնության պահպանման գործին: Մենք ապրում ենք արագ փոփոխվող աշխարհում, որտեղ տեղի են ունենում սոցիալ-մշակութային սրընթաց զարգացումներ և կերպարանափոխումներ, որոնք հանգեցնում են ազգերի մշակութային նկարագրի փոփոխմանը: Երաժշտությունը սեփական նկարագիրը պահպանելու հիմնական գործիքներից ու մեթոդներից է: Մեր ընկերները, ծանոթները, աշխատակիցները, տարբեր սոցիալական խմբերն ու շերտերը հաճախ իրարից տարբերվում ու առանձնանում են իրենց երաժշտական նախասիրություններով, արվեստի կամ երաժշտության այս կամ այն ժանրին հակվածությամբ: Երաժշտությունը հաճախ կիրառվում է հասարակական և քաղաքական գործընթացների արագացման և ուղղորդման նպատակով, այն կարող է մարտահրավեր նետել իշխանություններին, ազդեցություն թողնել հասարակության և իշխող ուժերի միջև փոխհարաբերությունների վրա, դառնալ փոփոխությունների ելակետ: Երաժշտությունը մոբիլիզացնում է սոցիալական տարբեր խմբերի ու խավերի արժեքները, համոզմունքները, հայացքները՝ իդեալներ ու նպատակներ հաղորդելով նրանց ամենօրյա կյանքին: Երաժշտությունը կարող է նպաստել միջավայրի իրողությունների ընկալմանը, սոցիալական ինտեգրմանն ու համախմբմանը: Երաժշտության ուսուցումը և նրա պահպանման ջանքերը կարող են դառնալ կյանքը զննելու, փորձելու և հասկանալու միջոց անձի համար:

Այսպիսով, ժամանակակից կյանքում, առավել քան երբևէ, ակնհայտ են դարձել երաժշտության տեղն ու դերը մշակութային հանրային ոլորտներում, այն ինքնության կերտման հզոր գործիք է և մշակույթի կարևոր բաղադրիչ: Այսօր մշակութային զարգացումներն են ուղղորդում հասարակություններին, այդ պատճառով անցյալի մշակույթի փոխանցումը գալիք սերնդին խիստ կարևոր է յուրաքանչյուր մշակույթի պահպանման ու հարատևման համար: Մենք անդրադարձել ենք երաժշտական մշակույթի պահպանմանն անհրաժեշտ քայլերին և դրանք քննարկել Իրանի հայ համայնքի մի խումբ ներկայացուցիչների հետ՝ քանակական ու որակական ուսումնասիրության ձևաչափով: Այս վերլուծությունների արդյունքում հասել ենք այն եզրակացության, որ երաժշտության ուսուցումն ու տարածումը և երաժշտական ստեղծագործությունների կիրառումը պատմական, ազգային և կրոնական առիթներով ու արարարողություններում կնպաստեն տվյալ ազգի կամ էթնիկ խմբի երաժշտության և նրա ինքնության պահպանմանը:

Փետրվար, 2018թ.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ԳՈՅԱՏԵՎՈՒՄԸ ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարիամ Սաժեշ

Ամփոփագիր

Տարբեր հասարակությունների մշակույթը սոցիոլոգիական գիտությունների, հատկապես հասարակագիտության ուսումնասիրության գլխավոր թեմաներից է: Գիտնականներն առաջադրել են տարբեր մոտեցումներ և սահմանումներ, քանի որ մշակույթն արտացոլում է տարբեր հասարակարգերում ապրող մարդկանց նկարագիրը և ինքնությունը: Տարբեր ինքնություններ ներառում և արտահայտում են տարբեր հատկանիշներ, այս տարբերություններն են յուրաքանչյուր մշակույթի գոյատևման գաղտնիքը, որով և գոյատևում է հասարակությունը: Մշակութային սիմվոլներն ու բաղադրիչները յուրաքանչյուր հասարակության կարևոր հիմնասյուներն են: Այդ բաղադրիչների շարքում իր ուրույն տեղն ունի երաժշտությունը: Մշակույթի պահպանման և փոխանցելու համար պետք է կենտրոնանալ դրա բաղադրիչների վրա: Հոդվածում լուսաբանվում են երաժշտության տեղն ու դերը մշակույթի պահպանման և գոյատևման գործում:

СОХРАНЕНИЕ, ВЫЖИВАНИЕ МУЗЫКАЛЬНОЙ КУЛЬТУРЫ В КОНТЕКСТЕ ИЗУЧЕНИЯ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ИРАНА

Мариам Сажеш

Резюме

Культура разных обществ – одна из главных тем исследования социологических наук, особенно обществоведения. Ученые выдвинули разные формулировки и подходы к этой теме, так как культура отражает характеристики и идентичность людей, живущих в разных обществах. Разные идентичности включают в себя и выражают разные свойства, и эти отличия составляют секрет существования каждой культуры, за счет которой и существует общество. Символы и компоненты культуры – краеугольные камни любого общества. Особое место в ряду этих компонентов занимает музыка. Для сохранения и передачи культуры нужно сосредоточиться на ее составных компонентах. В статье освещается место и роль музыки в процессе сохранения и существования культуры.

THE PRESERVATION AND SURVIVAL OF THE MUSICAL CULTURAL IN THE CONTEXT OF STUDYING IRAN'S ARMENIAN COMMUNITY

Mariam Sajesh

Resume

The culture of various societies is one of the main subjects of study by many social sciences. The scholars have proposed different approaches and definition, as culture reflects the description and identity of people living in various social systems. These different identities include and express varying characteristics and such differences are the underlying secret for the survival of each culture, through which the society survives. Cultural symbols and components are the important cornerstones of any society. Among these components, music has its own unique place. Preservation and continuation of culture requires focusing on its components. The article addresses the place and role of music in the preservation and survival of the culture.

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԻ ԾԻՆՓԻՆԻ ՊԼԱՆԸ

Լիանա Անանյան*

Բանալի բառեր՝ Չինաստանի Կոմունիստական կուսակցություն, ընդլայնվող գլոբալ շահեր, Սի Ծինփին, Չինաստանի ապագայի կանխատեսումներ։

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կոմունիստական կուսակցության (ՉԿԿ) կենտկոմի 19-րդ համագումարի բացման ժամանակ Սի Ծինփինը ներկայացրեց Չինաստանի ապագայի իր տեսլականը։ Երեք ժամից ավելի տևած ելույթը վերաբերում էր «չինական ուժի» երիտասարդացման առավելություններին և «չինական երազանքի» իրականացման առաջնահերթություններին։

Չնայած նախագահ Սի Ծինփինի ելույթում առաջնային և հիմնական ուշադրությունը տեղական նվաճումներին, նպատակներին և մարտահրավերներին էր ուղղված, այնուամենայնիվ, նա իր ելույթում խիստ կարևորում էր, թե ինչպես է անձամբ ինքը, որպես ուժեղ Չինաստանի առաջնորդ, ձգտում բարձրացնել իր երկրի դերն աշխարհում։

Միջազգային հանրության համար գլխավոր ուղերձը Սի Ծինփինի չափազանց վստահ լինելն է երկրի աճող ազգային ուժի հարցում և այն, որ նախագահը շեշտեց միջազգային միտումները, որոնք աշխատում են Չինաստանի օգտին։ Այս գնահատականները ենթադրում են, որ Չինաստանի ընդլայնվող գլոբալ շահերի ֆոնին միջազգային հանրությունը գալիք տարիներին կարող է ականատես լինել առավել հավակնոտ Չինաստանի ձևավորմանը։

Որոշ մեկնաբանությունների համաձայն՝ այս տեսլականը կարող է մանիֆեստ թվալ։ Սակայն զեկույցն առավել ուղղակիորեն անդրադարձավ այն ամենին, ինչին արդեն հասել են, և, հետևաբար, այն ամենին, ինչը

* ՀՀ ԳԱԱ ասպիրանտ։

կարող է ծառայել որպես հիմք ապագա գործողությունների համար: Այս համատեքստում չկար ոչ մի արմատական նոր քաղաքականություն, ինչպես արևմտյան համակարգերում «քարոզող» կուսակցություններին է հարիր: Չինաստանի ղեկավարը խոսում է իրական մրցակցության մասին: Միայն նրա ելույթի «բավական երկար» տևողությունն արդեն իսկ ցույց տվեց կոնսենսուսի առկայությունն առնվազն մակերեսի վրա, որն աշխատում է շատ ուղղություններով[1]:

Ի տարբերություն Հու Ծինթաոյի ելույթի, որը 2007 թվականին էր, այս տարի օգտագործված հիմնական բառն «արդիականացումն» էր, այլ ոչ թե «ժողովրդավարությունը», ինչպես նախկինում:

Չինաստանի ապագայի համար նախագահ Սիի տեսլականի առանցքում երկու փուլով իրականացվող ծրագիրն է, որը ներկայացնում է Չինաստանի երկրորդ հարյուրամյակի նպատակը՝ «լիովին զարգացած ազգ» դառնալ մինչև 2049 թվականը՝ Ժողովրդական Հանրապետության հիմնադրման 100-ամյակին: Առաջին փուլում Սիի առաջադրած նպատակները՝ 2020 թվականից մինչև 2035 թվականը, հիմնականում ներքին բնույթ են կրում, իսկ վերջնական նպատակը սոցիալիստական արդիականացման հիմնական իրականացումն է լինելու: Այս փուլում Չինաստանի միջազգային դերակատարության միակ ուղին այն է, որ երկիրը «նորարարության համաշխարհային առաջատար» դառնա: Սակայն երկրորդ փուլում՝ 2035 թվականից մինչև 2045 թվականը, Սին առաջ է քաշում առավել «արտաքին» օրակարգ: Սին հայտարարել է, որ 21-րդ դարի կեսերին Չինաստանը «համաշխարհային առաջատար է դառնալու համակողմանի ազգային ուժի և միջազգային ազդեցության առումով»:

Չինաստանի առաջնորդը պնդում է, որ իր շեշտադրումը երկրի ապագայի հարցում բխում է միջազգային իրավիճակի գնահատականից, որը ձեռնտու է Չինաստանին: Այնուհետև Սի Ծինփինը նշում է, որ աշխարհը «խոր և բարդ փոփոխությունների մեջ է» և ուշադրությունը սևեռում է այն բանի վրա, ինչը նկարագրում է որպես «համաշխարհային բազմաբևեռության միտումներ», որոնք «առաջ են ընթանում», և «միջազգային կարգի փոփոխություններ», որոնք արագանում են: Նա նաև նշել է, որ «հարաբերական միջազգային ուժերը դառնում են ավելի հավասարակշռված»: Զեկույցի մեկ այլ մասում Ծինփինը հայտարարել է, որ «Չինաստանի ժողովուրդն այժմ հաստատակամ և ամուր կանգնած է Արևելքում»[2]:

[1] Kerry Brown-"Reading between the lines: Xi's Epic Speech at the 19th Party Congress", https://thediplomat.com/2017/10/reading-between-the-lines-xis-epic-speech-at-the-19th-party-congress/
[2] Xi Jinping's report in 19th CPC National Congress.

Այս հայտարարությունները ենթադրում են Պեկինի դրական տրամադրվածությունն այն հարցում, որ համաշխարհային հավասարակշռությունը միտում ունի իրենց ուղղությամբ թեքվելու:

Չինաստանի առաջնորդի կարծիքով, սոցիալիզմը չինական յուրահատկություններով «նոր շարժում է զարգացնում այլ զարգացող երկրների համար՝ արդիականացմանը հասնելու նպատակով» և «նոր տարբերակ է տալիս այլ երկրների և ժողովուրդների համար, ովքեր ցանկանում են արագացնել իրենց զարգացումը»: Ծինփինն իր ելույթում միայն 36 անգամ շեշտեց «նոր դարաշրջանի սոցիալիզմ չինական յուրահատկություններով» արտահայտությունը: Այն «առաջարկում է չինական իմաստություն և Չինաստանի մոտեցումը մարդկության առջև ծառացած խնդիրները լուծելու համար»[1]: Նման հայտարարություններն ակնհայտ համոզմունք են արտահայտում, որ Չինաստանը լիբերալ ժողովրդավարության հավաստի այլընտրանք է ներկայացնում:

Ժողովրդական ազատագրական բանակին չինական ռազմական գերակայությունների վերաբերյալ նախագահի ուղերձը կապված չէ կոնկրետ արտաքին քաղաքական նպատակների հասնելու հետ և ենթադրում է, որ Ժողովրդական ազատագրական բանակը պետք է պատրաստ լինել ռազմական ուժ կիրառելուն: Ծինփինը նաև ակնարկեց ապագայում ավելի մեծ պատրաստակամությամբ հանդես գալու անհրաժշտության մասին: Ընդգծելով, որ «ռազմական ուժը կառուցված է պայքարելու համար», նա կոչ է արել Ժողովրդական ազատագրական բանակին «հաշվի առնել մարտական կարողությունները որպես չափանիշ իր բոլոր աշխատանքներում» և կենտրոնանալ «հաղթող պատերազմների» վրա, եթե պայքարի կոչ հնչի: «2035 թվականի առաջին փուլի ավարտին «մեր ազգային պաշտպանությունը և մեր ուժերի արդիականացումը» լինելու են «հիմնականում ավարտված»,- հայտարարել է Ծինփինը: Նա ակնկալում է, որ Ժողովրդական ազատագրական բանակը «լիովին կվերափոխվի առաջին աստիճանի ուժի»: Նման ցանկություններն արտասովոր չեն, քանի որ գերհզոր ուժերը հաճախ ձգտում են ռազմական ուժով ամրապնդել անվտանգության ընդլայնման կարիքները:

Այնուամենայնիվ, այս նպատակների հանգուցակետ կարելի է համարել այն, որ Ծինփինը ձգտում է բարձրացնել Չինաստանի միջազգային ազդեցությունը և զարգացման չինական մոդելը դարձնել ընդօրինակելի համաշխարհային թատերաբեմի այն երկրների համար, որոնք դեռ գտնվում են զարգացման սկզբնական փուլում: Չինաստանն այս ամբողջ քաղաքական կուրսի միջոցով և «առանց ռազմական ուժի կիրառության»

[1] Նույն տեղում:

ձգտում է խթանել Ասիայում իր գերիշխող ուժ լինելու ցանկությունը:

Թերևս, ինչ-որ չափով զարմանալի էր, որ չհիշատակվեցին Չինաստանի «հիմնական ազգային շահերը», որոնք մի քանի տարի առաջ առավել շատ էին շեշտադրվում: Չինաստանի ինքնիշխանության, անվտանգության և զարգացման շահերի պաշտպանության խնդիրը հիմնականում քննարկվեց Հոնկոնգի, Մակաոյի և Թայվանի համատեքստում: Բացի դրանից, Ծինփինը նշեց Հարավչինական ծովի կղզիների և ափերի կառուցման «կայուն առաջընթացը»՝ որպես իր կառավարման առաջին ժամկետի հիմնական ձեռքբերում: Այդ բնութագրումը կարող է ենթադրել, որ Չինաստանն առաջնահերթություն կստանա հարևանների և գերտերությունների հետ շփման հարցում:

Չնայած Ծինփինը հավաստիացրել է աշխարհին, որ Չինաստանը չի ձգտում գերիշխանություն հաստատել և «շարունակելու է մասնակցությունը որպես խոշոր և պատասխանատու երկիր», որը նա ներկայացրեց ընդհանուր տեսլականի համատեքստում, այնուամենայնիվ, ասիական և արևմտյան մայրաքաղաքները պետք է շատ հանգիստ չլինեն: Չինաստանը, որպես առաջավոր առաջնորդ, առավել կհաստատի իր դիրքերը, եթե շարունակի աշխատել այլ ազգերի հետ միասին՝ ամրապնդելու միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը:

Սի Ծինփինը շեշտել է, որ «ազգային երիտասարդուցումը» կմնա լոկ երևակայության արդյունք առանց Չինաստանի Կոմկուսի ղեկավարության: «Կուսակցությունը պետք է առաջնորդի բոլոր բնագավառներում, և կուսակցության ղեկավարությունը պետք է հարգվի»,- ասել է նա: Ըստ նրա՝ կադրերը պետք է համահունչ լինեն կուսակցության ղեկավարությանը, իսկ կուսակցությունը պետք է խստացնի գաղափարախոսական աշխատանքը:

Կարելի է ենթադրել, որ իրավացի են բոլոր այն քաղաքագետները, ովքեր կարծում են, որ նոր Չինաստանի Կոմունիստական կուսակցությունն այսուհետ իր բացարձակ ներկայությունը (կառավարումը) կապահովի չինական կյանքի բոլոր բնագավառներում:

«Թեև ԱՄՆ-ում նորություններն ու վերլուծությունները շարունակում են վերաբերվել նախագահ Թրամփի ամենօրյա խեղկատակություններին և վիրավորանքներին, ամբողջ աշխարհում, իսկապես, պատմական բան տեղի ունեցավ: Չինաստանն ազդարարեց, որ այժմ իրեն տեսնում է որպես աշխարհի այլ գերտերություն, որն իրեն համարում է այլընտրանք, եթե ոչ մրցակից, Միացյալ Նահանգներին»[1]: Եվ սա Չինաստանի բարձրագույն ղե-

[1] Fareed Zakaria- Opinions "While we obsess over Trump, China is making history" https://www.washingtonpost.com/opinions/while-we-obsess-over-trump-china-is-making-history/2017/10/26/fad40926-ba8a-11e7-9e58-e6288544af98_story.html?utm_term=.f62da59a0970

կավար Սի Ծինփինի հստակ արտահայտված տեսակետն է: Կոմունիստական կուսակցության 19-րդ կոնգրեսի իր ելույթում նա հայտարարել է, որ Չինաստանն այժմ, «նոր դարաշրջան» անցնելով, «պատմական հանգույցում է գտնվում, որը կնշվի աշխարհում երկրի «հզոր ուժ և քաղաքական և տնտեսական զարգացման օրինակելի մոդել դառնալով»: Նա ասել է, որ Չինաստանի «քաղաքական համակարգը... մեծ ստեղծագործություն է», որն առաջարկում է «նոր ընտրություն այլ երկրների համար»: Երկիրը կպաշտպանի իր շահերը եռանդուն կերպով՝ որպես համաշխարհային առաջատար կլիմայի փոփոխության և առևտրի հարցերում, շարունակել է նա:

1970-ական թվականներից Չինաստանը հրաժարվեց մաոիստական մեկուսացումից, նրա առաջնորդող փիլիսոփայությունը սահմանեց Դեն Սյաոպինը: Այն ժամանակ Չինաստանը սովորելու բան ուներ Արևմուտքից, հատկապես Միացյալ Նահանգներից և պետք է ինտեգրվեր գոյություն ունեցող միջազգային կարգին: Դեն Սյաոպինի խոսքերով, այն պետք է խոնարհ և համեստ լիներ իր արտաքին քաղաքականության մեջ, «թաքցներ իր լույսը» և «սպասեր իր ժամանակին»[1]: Սակայն ժամանակը եկել է և, համաձայն Սի Ծինփինի տեսակետի, «Միջին Թագավորությունը» պատրաստ է «աշխարհի թատերաբեմի կենտրոնական դերի ստանձնմանը»:

Նախագահի ելույթը կարևոր է այն առումով, որ կուսակցության համագումարը հստակեցրեց, որ նա «սովորական» առաջնորդ չէ: Նա անցավ պաշտոնավարման հաջորդ ժամկետին՝ առանց անվանակոչելու կուսակցական պաշտոնյաներից որևէ մեկին՝ որպես հաջորդ սերնդի «իշխանության իրավահաջորդ», այսպիսով պահպանելով սեփական իշխանությունը շատ ավելի անվտանգ, քան իր նախորդները: Կուսակցությունն ամրապնդեց Սի Ծինփինի մտքերը Սահմանադրության մեջ: Մաո Ցզեդունից հետո նա առաջինն էր, քանի որ Դեն Սյաոպինի մտքերն ավելացվել են միայն հետմահու: Սա նշանակում է, որ այսուհետ Սի Ծինփինը և նրա գաղափարները կկառավարեն Չինաստանի Կոմունիստական կուսակցությունը:

«Նյու Յորքի Գրքերի ուսումնասիրության» համարներից մեկում Էնդրյու Նաթանը նշել է, որ Արևմուտքի քաղաքականությունը Պեկինի հանդեպ ընդհանուր առմամբ կանխատեսել է, որ ժամանակի ընթացքում Չինաստանն արդիականացնելու է իր տնտեսությունը, այն առավել բազմակողմանի է լինելու իր երկրում և առավել շատ է համագործակցելու արտասահմանում: Նաթանը հավելել է, սակայն, որ մի քանի գրողներ և լրագրողներ, ինչպես, օրինակ, Ջեյմս Մանը, անհանգստացած են, որ Չինաստանը

[1] Patrick E.Tyler-"Deng Xiaoping; A political wizard who put China on the capitalist road", http://www.nytimes.com/learning/general/onthisday/bday/0822.html

կշարունակի մնալ ավտորիտար և աջակցություն կցուցաբերի այլ հակաժողովրդավարական երկրների[1]:

Սակայն կարելի է ենթադրել, որ իրականությունն այնքան էլ ծայրահեղ չէ, որքան Մանն է կանխատեսել: Չինաստանը ավտորիտար է մնացել, փաստորեն, վերջին տարիներին՝ նույնիսկ ավելի շատ: Սակայն կլիմայի փոփոխության, առևտրի և Հյուսիսային Կորեայի հարցերում, այն, փաստորեն, դարձել է ավելի կոոպերատիվ: Չնայած Պեկինը փորձել է ստեղծել մի քանի այլընտրանքային միջազգային ինստիտուտներ, ՉԺՀ-ն նաև ՄԱԿ երրորդ ամենախոշոր ֆինանսավորողն է և խաղաղապահ բյուջեի երկրորդ խոշոր ներդրողը: Չինաստանը փորձում է վերանայել միջազգային համակարգը՝ սեփական աճող ուժին նպաստելու համար: Չինաստանը նախընտրում է այս ճանապարհը հեղափոխություններից և արևմտյան կառուցվածք ունեցող միջազգային կարգի մեծածախ փոխարինումներից առավել[2]:

«Չինաստանը ձևավորել է «սոցիալիզմ չինական յուրահատկություններով, նոր դարաշրջանի համար»,- նշում է առաջնորդ Սի Ծինփինը: Եվ հենց այս գաղափարը երկրի զարգացման հիմնական ուղենիշը կլինի առաջիկա տարիներին:

Դեկտեմբեր, 2017թ.

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԻ ԾԻՆՓԻՆԻ ՊԼԱՆԸ

Լիաննա Անանյան

Ամփոփագիր

Հոդվածում համառոտ անդրադարձ է կատարվել ՉԿԿ 19-րդ համագումարին և Սի Ծինփինի (ՉԺՀ նախագահ, ՉԿԿ գլխավոր քարտուղար, ՉԿՌԽ նախագահ) նախատեսումներին աշխարհակարգի փոփոխության վերաբերյալ:

Ներկայացվել են հատվածներ Ս.Ծինփինի ելույթից, հատկապես աշխարհակարգի վերաբերյալ: Ուսումնասիրության առարկա են հանդիսացել Սի Ծինփինի «անհասցե հորդորները», «Չինաստանի արդիականացումը», «նոր դա-

[1] Andrew J. Nathan –"The Chinese world order" http://www.nybooks.com/articles/2017/10/12/chinese-world-order/

[2] Fareed Zakaria- Opinions "While we obsess over Trump, China is making history" https://www.washingtonpost.com/opinions/while-we-obsess-over-trump-china-is-making-history/2017/10/26/fad40926-ba8a-11e7-9e58-e6288544af98_story.html?utm_term=.f62da59a0970

բաշրջանի համար չինական յուրահատկությամբ սոցիալիզմը» և այս ամենի իրականացումն «առանց ռազմական ուժի կիրառության»՝ «առաջնայնությունը» տալով Կոմունիստական կուսակցությանը:

Համառոտ համեմատություն է կատարվել աշխարհակարգի վերաբերյալ Սի Ծինփինի, Հու Ծինթաոյի, Դեն Սյաոպինի ընկալումների միջև:

19-Й СЪЕЗД КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ КИТАЯ И ПЛАН СИ ЦЗИНЬПИНА ПО ИЗМЕНЕНИЮ МИРОВОГО ПОРЯДКА

Лианна Ананян

Резюме

Статья посвящена XIX съезду КП КНР и планам изменения мирового порядка. Были представлены особенности выступления Си Цзиньпина (генеральный секретарь ЦК Коммунистической партии Китая/председатель Китайской Народной Республики/председатель Центрального военного совета КНР), особенно о мировом порядке. В частности, предметом исследования были «безадресные призывы», «модернизация Китая», «социализм с китайской спецификой для новой эры» и особенно реализация всего этого без «использования военной силы» и с «приоритетом» Коммунистической партии.

Проведено краткое сравнение между восприятии мирового порядка Си Цзиньпина, Ху Цзиньтао, Дэн Сяопина.

THE 19TH CONGRESS OF THE CHINESE COMMUNIST PARTY AND XI JINPING'S PLAN FOR CHANGING THE WORLD ORDER

Lianna Ananyan

Resume

The article is discusses the 19th Congress of the CCP and the plans for changing the world order. The features of Xi Jinping's speech (President of the People's Republic of China, General Secretary of the Communist Party of China and Chairman of the Central Military Commission) especially about the world order are presented.

In particular, the subject of the study include Xi Jinping's "unaddressed admonitions", "modernization of China", "socialism with Chinese characteristics for a new era" and especially the implementation of all this without "using military forces" and with the "priority" of the Communist Party.

A brief comparison is made between the perceptions of the world order by Xi Jinping, Hu Jintao, and Deng Xiaoping.

ՇՈՏԼԱՆԴԻԱՅԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՕՐԻՆԱԿ

Աննա Կարապետյան*

Բանալի բառեր ՝ ինքնորոշում, Շոտլանդիայի անկախացման հանրաքվե, քաղաքական երկխոսություն, Brexit։

Ինքնորոշման իրավունքի իրացման համար պայքարը շարունակում է արդիական լինել 21-րդ դարում։ Նման պայքարի յուրահատուկ օրինակ է Շոտլանդիայի անկախացման հանրաքվեի անցկացման գործընթացը, որը մեկնարկեց խորհրդարանում անջատողական ուժերի դիրքերի ամրապնդմամբ, ինչը նոր զարթոնք ապահովեց Միացյալ Թագավորությունից անկախանալու շոտլանդական նկրտումներին։ Եվ չնայած հանրաքվեի ելքին, որի արդյունքում բնակչության մեծամասնությունը վճռեց մնալ Մեծ Բրիտանիայի կազմում, գործընթացն ապահովեց ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացումը և լրացուցիչ լիազորություններ ապահովեց Շոտլանդիային։ Այսօր էլ անկախացման թեման շարունակում է արդիական մնալ Շոտլանդիայում՝ Եվրամիության կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու գործընթացի (*Brexit*) համատեքստում։

Այս գործընթացի առանձնահատկությունների դիտարկումը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում՝ որպես քաղաքակիրթ երկխոսության ճանապարհով խնդրի քաղաքական կարգավորման օրինակ։ Հատկապես կարևոր է այն փաստը, որ Շոտլանդիայի անկախացման իրավական կարգավորիչի բացակայության պարագայում քաղաքական կամք դրսևորվեց՝ հարցը դնել հանրաքվեի, և Շոտլանդիայի ու Մեծ Բրիտանիայի միջև կնքվեց համապատասխան պայմանագիր։

Շոտլանդիայի անկախացման շուրջ վերջին արշավը, որը հանգեցրել է անկախության հանրաքվեի անցկացման, մեկնարկել էր 2011թ., երբ այդ երկրի խորհրդարանական ընտրություններում հաղթանակ էր տարել

* ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ։

Շոտլանդիայի ազգային կուսակցությունը: Վերջինս իր նախընտրական արշավում խոստացել էր Շոտլանդիայի անկախացման հանրաքվե անցկացնել: Նման լիազորությունների առկայությունը երկարատև քաղաքական գործընթացի արդյունք է, որը Շոտլանդիային ինքնավարության բավական բարձր մակարդակ է ապահովել:

Շոտլանդիան Միացյալ Թագավորության մաս է: 1707թ. կնքված Միության ակտով Շոտլանդական խորհրդարանը լուծարվել էր, դրա լիազորությունների գերակշիռ մասը փոխանցվել էր Վեսթմինսթերյան խորհրդարանին: Սակայն 1998թ. Շոտլանդիայի ակտով 1707թ. ակտը փոփոխության է ենթարկվել, Շոտլանդիայի խորհրդարանը վերականգնվել է՝ իրավունք ստանալով ընդունել օրենքներ և կառավարել հարկահանությունը, ձևավորվել է նաև Շոտլանդիայի ադմինիստրացիան՝ կառավարությունը: Դա էլ հենց հնարավորություն է ընձեռել հետագայում Շոտլանդիայի խորհրդարանում հաղթանակ տարած ուժին անկախացման գործընթաց սկսել [1, p. 71-80]:

Սակայն Շոտլանդիայում անկախացման տրամադրությունները սկիզբ էին առել դեռևս 2007թ., երբ Էդինբուրգում փոքրամասնական կառավարություն էր ձևավորել Շոտլանդիայի ազգային կուսակցությունը (ՇԱԿ)՝ Ալեքս Սալմոնդի գլխավորությամբ: Անկախացման կողմնակիցների հիմնական փաստարկները կառուցված էին այն թեզի վրա, որ անկախացման դեպքում Շոտլանդիան կարող է զարգացնել իր տնտեսությունը նավթի և էներգետիկայի շնորհիվ: Նշենք, որ Շոտլանդիայի տարածքում են գտնվում Հյուսիսային ծովի նավթի պաշարները, որոնցից ստացված եկամուտների գերակշիռ մասը մուտք է գործում ոչ թե Շոտլանդիայի, այլ Անգլիայի և անդրազգային կորպորացիաների բյուջեները, մինչդեռ Շոտլանդիայի բյուջեի դեֆիցիտն այդ շրջանում կազմում էր $20 մլրդ:

Զարգացնելով առկա տրամադրությունները՝ 2010թ. այդ փոքրամասնական կառավարությունն օրինագիծ էր ընդունել, որով նախատեսվում էր հանրաքվե անցկացնել, որի ժամանակ քաղաքացիները կամ պետք է քվեարկեին Շոտլանդիայի խորհրդարանի լիազորությունների ընդլայնման, կամ Մեծ Բրիտանիայից անկախացման օգտին: Գործընթացը չի հասել հանրաքվեի անցկացմանը, սակայն անջատողական տրամադրություններն ամրապնդվել են: Հաջորդ խորհրդարանական ընտրություններում՝ 2011թ. մայիսին, ՇԱԿ-ը հաղթանակ է տարել խորհրդարանական ընտրություններում՝ խոստանալով անկախության հանրաքվե անցկացնել: Ստանալով մեծամասնության քվեն՝ 2011թ. հոկտեմբերին իշխող անջատողական կուսակցությունը սկսել է անկախացման հանրաքվեի պատրաստման գործըն-

թացը: Հանրաքվեն նշանակվել է 2014թ. սեպտեմբերի 18-ին, քվեարկության է դրվել հետևյալ հարցը. «Շոտլանդիան պե՞տք է անկախ երկիր լինի»:

Անկախության հանրաքվեի նախապատրաստման գործընթացում Լոնդոնի և Էդինբուրգի երկխոսության տեսակետից կարևոր նշանակություն է ունեցել 2012թ. հոկտեմբերի 15-ին Էդինբուրգում Մեծ Բրիտանիայի և Շոտլանդիայի միջև կնքված համաձայնագիրը, որն ուղղված էր Շոտլանդիայի և Միացյալ Թագավորության կառավարությունների քայլերի համաձայնեցմանը, որոնք հնարավոր կդարձնեին հանրաքվեի անցկացումը: Փաստացի, Միացյալ Թագավորության միավորներից ոչ մեկը, այդ թվում՝ Շոտլանդիան, չունի որևէ իրավական հիմք Թագավորության կազմից դուրս գալու գործընթաց ծավալելու համար: Եվ այս համաձայնագրի կնքումը կոչված էր ապահովելու հանրաքվեի համար այդ հիմքը: Մասնավորապես, պայմանագրով ամրագրվել է, որ հանրաքվեն պետք է ունենա իրավական հիմք, նախաձեռնվի Շոտլանդիայի խորհրդարանի կողմից, վայելի խորհրդարանների, կառավարությունների և ժողովրդի վստահությունը և «արդար փորձություն լինի, Շոտլանդիայի ժողովրդի մոտեցումների արդար արտահայտում, իսկ արդյունքները պետք է հարգեն բոլորը»: Դրանով նաև ամրագրվել է, որ Մեծ Բրիտանիայի և Շոտլանդիայի խորհրդարաններն օրենքի նախագիծ կընդունեն, որն, ըստ 1998թ. գործող Շոտլանդիայի ակտի, հնարավորություն կընձեռի Շոտլանդիայի խորհրդարանին նման հանրաքվե անցկացնել [2]:

Հատկանշական է նաև, որ հանրաքվեի նախապատրաստական փուլում և՛ ՇԱԿ-ը, և՛ Մեծ Բրիտանիան պարբերաբար պաշտոնական վերլուծական փաթեթներ են հրապարակել՝ ներկայացնելով իրենց մոտեցումներն ու անկախացումից բխող հնարավարություններն ու մարտահրավերները: Սա քաղաքական մշակույթի հատուկ դրսևորում է՝ ուղղված հիմնավոր փաստարկների միջոցով հանրային տրամադրությունների վրա ազդելուն և իրենց կողմնակիցների թիվը մեծացնելուն:

Շոտլանդիայի հանրաքվեի քարոզարշավը կառուցվել է երկու հիմնասյուների՝ տնտեսական շահի և ինքնության վրա: Եթե անգլիական ազգայնականությունը հիմնվում է հակաեվրոպականության վրա, ապա շոտլանդական ազգայնականությունը՝ Անգլիայի հետ հակադրության վրա: Ինքնության, ես-ի ինքնանույնացման հարցը մեծ դերակատարում է ունեցել հանրաքվեի արշավի և արդյունքների վրա: Հարցումները ցույց են տվել, որ իրենց «մաքուր շոտլանդացիներ» համարողները մեծապես հակված են եղել անկախության, իսկ Շոտլանդիայից դուրս ծնվածները, իրենց բրիտանացի-

ներ համարողները դեմ են եղել [3]։ Դրա հետ մեկտեղ, ինքնությանը չառնչվող հարցերում Շոտլանդիայի բնակչության հանրային կարծիքն ընդհանուր առմամբ գրեթե համընկնում է Անգլիայի հանրային կարծիքի հետ՝ ի տարբերություն իշխանությունների դիրքորոշման։ Ուստի, հանրաքվեի արդյունքները բացառապես ինքնության հարց չեն եղել [4, p. 127-153]։ Ինքնության հարցի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ շոտլանդացիներն իրենց նույնականացնում են և՛ որպես բրիտանացի, և՛ որպես շոտլանդացի, ինչն էլ որոշ չափով ազդել է հանրաքվեի արդյունքների վրա՝ զումարվելով տնտեսական շահին առնչվող փաստարկներին։

Անկախացման հանրաքվեն տեղի է ունեցել 2014թ. սեպտեմբերի 18-ին։ Ըստ արդյունքների, քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 84,6%-ը, որոնցից 44,65%-ը քվեարկել է անկախացման օգտին, իսկ 55,25%-ը՝ Մեծ Բրիտանիայի կազմում մնալու [5]։ Կարևոր է նաև նշել, որ հանրաքվեն, ըստ բրիտանական սահմանադրության, անցկացվել է միայն Շոտլանդիայի տարածքում, ինչը համահունչ է 20-րդ դարի ոգուն, քանի որ վիճելի տարածքների կարգավիճակը բազմիցս որոշվել է հենց այդ տարածքում հանրաքվեի անցկացմամբ։

Քաղաքական մշակույթի կարևոր դրսևորում է նաև հանրաքվեին հաջորդած քաղաքական գործընթացը։ Շոտլանդիայի պարագայում այն ոչ թե հանգեցրել է որևէ ճնշման կամ հետագայում նման գործընթացի բացառման, այլ ուղղված է եղել Էդինբուրգի և Լոնդոնի հարաբերություններում առկա խնդիրները կարգավորելուն և շոտլանդացիների դժգոհության հիմնական պատճառները մեղմելուն։ Հանրաքվեի արդյունքների հրապարակումից հետո Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Քեմերոնը հայտարարել է, որ 2015թ. խորհրդարանական ընտրություններից հետո նոր խորհրդարանը կվերանայի Շոտլանդիայի և Թագավորության մյուս անդամների լիազորությունները՝ մեծացնելով հարկային, բյուջետային ծախսերի և սոցիալական ապահովության ոլորտներում նրանց լիազորությունները [6]։ Շոտլանդիայի նոր ֆիսկալ շրջանակային համաձայնագիրն արդեն իսկ ստորագրվել է 2016թ. փետրվարին, իսկ հարկահանության հարցում իշխանության վերաբաշխումը մեկնարկել է 2017թ. ապրիլին [7]։

Անկախացման տրամադրությունները Շոտլանդիայում կրկին արդիականություն են ձեռք բերել Եվրամիության կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու գործընթացում։ Մասնավորապես, *Brexit*-ի վերաբերյալ 2016թ. հունիսի 23-ին տեղի ունեցած հանրաքվեի ժամանակ քվեարկությանը մասնակցած Մեծ Բրիտանիայի քաղաքացիների 51,89%-ը կողմ է քվեարկել

միությունը լքելուն, իսկ 48,11%-ը՝ միության կազմում մնալուն: Մինչդեռ, Շոտլանդիայում 62%-ը քվեարկել է ԵՄ կազմում Մեծ Բրիտանիայի մնալու օգտին, և միայն 38%-ը՝ դուրս գալու [8]: Այդ արդյունքն ու ԵՄ կազմից դուրս գալու արդյունքում հնարավոր տնտեսական բարդությունների հեռանկարը կրկին Շոտլանդիայում օրակարգ են վերադարձրել անկախացման նոր հանրաքվե անցկացնելու հարցը: 2016թ. հոկտեմբերի 20-ին Շոտլանդիայի կառավարությունը հրապարակել է երկրում երկրորդ անկախության հանրաքվե անցկացնելու մասին օրինագիծը՝ հետագա քննարկումների համար: Շոտլանդիայի նպատակը ԵՄ միասնական շուկայից դուրս չգալու իրավունք ստանալն է, այդ թվում՝ մնալով Միացյալ Թագավորության կազմում, միաժամանակ միջազգային առևտրի մասնակցության և միգրացիայի հարցերում Շոտլանդիայի խորհրդարանի լիազորությունները մեծացնելը [9]: Այժմ նոր հանրաքվեի անցկացման վերաբերյալ որոշման ընդունումը հետաձգվել է մինչև 2018թ. ավարտը, երբ արդեն իսկ համաձայնեցված և հրապարակված կլինի ԵՄ և Մեծ Բրիտանիայի միջև համաձայնագիրը և վերջնականապես պարզ կլինեն *Brexit*-ի պայմանները [10]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Շոտլանդիայի անկախության հանրաքվեն և դրան հաջորդած գործընթացն օրինակ է կողմերի միջև կառուցողական երկխոսության, որը նույնիսկ իրավական անհրաժեշտ հիմքի բացակայության պարագայում հակասությունների խորացում թույլ չտալու նպատակով ստեղծեց անհրաժեշտ իրավական հիմք և հարցի կարգավորման հիմքում դրեց ժողովրդի կամարտահայտումը:

Քաղաքակիրթ այս երկխոսության համատեքստում կարևոր է նաև այն հանգամանքը, որ Մեծ Բրիտանիան, ի դեմս հիմնական բանակցողի՝ վարչապետի, ի սկզբանե համաձայնել է ընդունել հանրաքվեի ցանկացած արդյունք և չի խոսել Շոտլանդիայի անկախացման հարցը Շոտլանդիայի տարածքից դուրս՝ Միացյալ Թագավորության ողջ տարածքում հանրաքվեի դնելու մասին: Մեծ Բրիտանիան հավատարիմ է մնացել այն սկզբունքին, որ ազգի ինքնորոշումը բացառապես իր կամարտահայտման արդյունքը պետք է լինի և չի կարող կախվածության մեջ դրվել այլ ժողովուրդներից և պետություններից:

Շոտլանդիայի օրինակը նաև ցույց է տալիս, թե ինչպես են եվրաինտեգրման և ինքնավարության աստիճանի փոփոխություններն ազդում ազգային գիտակցության, նույնականացման վրա: Այս երկու գործընթացները մեծացրել են շոտլանդացիների տարածաշրջանային ինքնանույնականացումը, ազգային ինքնության կարևորումը և ինքնորոշման ավելի բարձր

մակարդակի ձգտումը: Դրան զուգահեռ, ազգայինի հետ մեկտեղ ամրապնդվել են նաև քաղաքացիական ինքնագիտակցությունը և ինքնանույնացումը [11, c. 91-99]: Դրա ապացույցն են հանրաքվեի արդյունքներն ու դրանից հետո Լոնդոնի հետ ծավալած երկխոսությունը:

Պահպանելով ազգային ինքնավարությունն ու քաղաքական գործընթացների հիմքում դնելով ազային շահը՝ Շոտլանդիան ժողովրդավարական երկխոսություն է ծավալում Մեծ Բրիտանիայի կառավարության հետ՝ մեծացնելով ինքնավարության աստիճանն ու իշխանական լծակները: Սա օրինակ է, երբ իրացնելով ինքնորոշման իրավունքը՝ շոտլանդացի ժողովուրդն արտահայտեց իր կամքը և մնաց Մեծ Բրիտանիայի կազմում՝ ընտրելով ինքնաիրացման այդ առավել լայն տարածքը: Այս խնդրի կարգավորման գործընթացում կարևորագույն հանգամանք է Լոնդոնի և Էդինբուրգի միջև երկխոսությունը, որը շարունակվում է նաև *Brexit*-ի փուլում:

Փետրվար, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Matt Qvortrup*, Referenduma and Ethnic Conflict, University of Pennsylvania Press, 2014.
2. Agreement between the United Kingdom Government and the Scottish Government on a referendum on independence for Scotland, 15 Oct 2012, http://www.gov.scot/Resource/0040/00404789.pdf
3. *J.Curtice*, So Who votes Yes and No? (What Scotland Thinks blog, 26 September 2014)
4. *Jim Gallagher*, Making the Case for Union: Exactly Why Are We Better Together?, The Scottich Independence Referendum, Oxford University Press, 2016.
5. Scottish Referendum Results, The Electoral Management Board for Scotland (EMB), http://scotlandreferendum.info/
6. *David Cameron*, September 19, 2014, https://www.facebook.com/DavidCameronOfficial/posts/846948598662793
7. Devolution of financial powers to the Scottish Parliament: recent developments, March 1, 2016, https://researchbriefings.parliament.uk/ResearchBriefing/Summary/SN07077
8. "EU referendum results", Electoral Commission, http://www.electoralcommission.org.uk/find-information-by-subject/elections-and-referendums/upcoming-elections-and-referendums/eu-referendum/electorate-and-count-information

9. Scottish independence: draft bill published on second referendum, 20/10/2016, https://www.theguardian.com/politics/2016/oct/20/second-scottish-independence-referendum-bill-published
10. Sturgeon to decide on pushing for indyref2 by end of year, 14 January 2018, http://www.bbc.com/news/uk-scotland-scotland-politics-42674567
11. *Фадеева Л.,* Идентичность на пересечении интеграции и деволюции: Шотландский кейс, «Современная Европа», № 5, 2015.

ՇՈՏԼԱՆԴԻԱՅԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՕՐԻՆԱԿ

Աննա Կարապետյան

Ամփոփագիր

Շոտլանդիայի անկախացման հանրաքվեի անցկացման գործընթացն ինքնորոշման իրավունքի իրացման ժամանակակից օրինակ է: Դրա դիտարկումը հատկապես կարևոր է կողմերի միջև կառուցողական երկխոսության տեսանկյունից, որը թույլ տվեց նույնիսկ իրավական անհրաժեշտ հիմքի բացակայության պարագայում ստեղծել այդ իրավական հիմքը և հարցը կարգավորել ժողովրդի կամարտահայտման միջոցով: Հոդվածում դիտարկվել են անկախացման համար պայքարի ժամանակակից փուլը, կողմերի երկխոսությունն ու հանրաքվեի արդյունքներից բխող հետագա գործընթացը: Հատուկ ուշադրություն է հատկացվել այդ գործընթացում դրսևորված քաղաքական մշակույթի առանձնահատկություններին:

РЕФЕРЕНДУМ О НЕЗАВИСИМОСТИ ШОТЛАНДИИ КАК ПРИМЕР ПРОЦЕССА САМООПРЕДЕЛЕНИЯ

Анна Карапетян

Резюме

Процесс проведения референдума о независимости Шотландии является современным примером реализации права на самоопределение. Рассмотрение этого примера особенно важно с точки зрения конструктивного диалога между сторонами, который позволил даже при отсутствии необходимой правовой базы сформировать ее и урегулировать вопрос путем волеизъявления народа. В статье рассмотрен современный этап борьбы Шотландии за независимость, диалог сторон и дальнейший процесс, обусловленный результатами референдума. Отдельное внимание уделено проявленным в этом процессе особенностям политической культуры.

THE SCOTTISH INDEPENDENCE REFERENDUM AS A EXAMPLE OF SELF-DETERMINATION PROCESS

Anna Karapetyan

Resume

The process of Scottish independence referendum is a modern example of self-determination. The study of this example is especially important from the view point of a constructive dialogue between the parties, which, despite the absence of a necessary legal basis, allowed creating that legal basis and settling the issue through the expression of the free will of people. The article considers the modern stage of the struggle for independence, the dialogue between the parties and the subsequent process proceeding from the referendum results. Particular attention is paid to the peculiarities of the political culture displayed in the process.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 10 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*, ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
   - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   - *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 07.03.2018թ.
Թիվ 1 (77), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում